ՀՀ, ք. Երևան, Մելիք-Ադամյան 2/1
info@teachforarmenia.org
(+374) 60 505 - 515
www.teachforarmenia.org

**«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի**

**Գործադիր տնօրենի**

**ՀՐԱՄԱՆ N 27/02/2023**

**«Ուսուցիչ-Առաջնորդի ձեռնարկ 2023»-ը հաստատելու վերաբերյալ**

ք. Երևան «27» փետրվարի, 2023 թ.

Հիմք ընդունելով Հիմնադրամների մասին ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի 8-րդ ենթակետը՝ հրամայում եմ.

1. Հաստատել 2023-2025 թվականների Ուսուցիչների առաջնորդության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մասնակիցների վարքականոնները՝ «Ուսուցիչ-Առաջնորդի ձեռնարկ 2023»-ը (այսուհետ՝ Ձեռնարկ)՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ.

   2.1. Ձեռնարկը հանդիսանում է կենդանի փաստաթուղթ և ենթակա է փոփոխությունների Հիմնադրամի կողմից որոշված պարբերականությամբ:

   2.2. Ձեռնարկով սահմանված բոլոր դրույթները տարածվում են Ծրագրի, ինչպես նաև նախորդ տարիներին ընդգրկված բոլոր մասնակիցների վրա և պարտադիր են անվերապահ կատարման:

   2.3. Ձեռնարկի բովանդակությունը ծանուցվում է մասնակիցներին էլեկտրոնային տարբերակով էլ. հասցեներին Ձեռնարկի տեսածրված տարբերակը ուղարկելու միջոցով, որը համարվում է պաշտոնական ծանուցում: Փոփոխությունները ևս ծանուցվում են սույն կետով սահմանված եղանակով:

   2.4. Ձեռնարկի պաշտոնական տարբերակը հրապարակվում է նաև teachforarmenia.org Հիմնադրամի պաշտոնական կայքէջում:

   2.5 Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հիմնադրամի գործադիր տնօրեն՝
Լարիսա Հովաննիսյան

Հաստատված է «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի գործադիր տնօրենի
**N 27/02/2023 հրամանով**՝ առ 27 փետրվարի, 2023թ.

# ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ

**Ուսուցիչ-առաջնորդի ձեռնարկ 2023**

## Ծանոթություն

Սույն ձեռնարկը «կենդանի», համալիր փաստաթուղթ է (ձեռնարկի բովանդակությունը կարող է ենթարկվել փոփոխությունների՝ ելնելով ի հայտ եկող նոր հանգամանքներից և անհրաժեշտությունից) և նախատեսված է ծառայելու Ուսուցիչ-առաջնորդներին[1] որպես ուղեցույց՝ Ուսուցիչների առաջնորդությանն ուղղված իրենց գործունեության ընթացքում: Ուսուցիչ-առաջնորդները կտեղեկացվեն ձեռնարկի ցանկացած բաժնում կատարված փոփոխությունների վերաբերյալ:

## Ներածություն

Ուսուցիչ-առաջնորդների ձեռնարկում (այսուհետև՝ Ձեռնարկ) ուրվագծված են բոլոր կարևոր քաղաքականությունները, ընթացակարգերն ու ակնկալիքները, որոնք առկա են Ուսուցիչների առաջնորդության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում: Ձեռնարկը մշակված է հավասարության ու բազմազանության այն հանձնառության գիտակցմամբ, որ ընկած է «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի առաքելության հիմքում և պետք է ընկալվի բոլորի հանդեպ արդար վերաբերմունք ցուցաբերելու նախապայմանով:

## Սահմանումներ

**Սույն Ձեռնարկում կիրառվող տերմինների նշանակությունները**.

I. **Հիմնադրամ**. «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամ,

[1] *Ուսուցիչ - առաջնորդ է համարվում այն անձը, որը* «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») կողմից *կայացված որոշման հիման վրա* և Ուսուցիչների առաջնորդության ծրագրի *մասնակից համարվելու չափորոշիչներին բավարարելու հիմքով համարվել է Ծրագրի մասնակից /Տես Մասնակից համարվելու չափորոշիչները՝ Հավելված գ/:*

II. **Գործադիր թիմ**. կազմակերպության կառուցվածքում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձ (օրինակ՝ գործադիր մարմնի ղեկավար, գործառնական բաժնի ղեկավար և ֆինանսագործառնական բաժնի ղեկավար ):
III. **Ուսուցիչ-առաջնորդ**. «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Ուսուցիչների առաջնորդության երկամյա ծրագրի մասնակից:
IV. **Շրջանավարտ-դեսպան**. «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Ուսուցիչների առաջնորդության երկամյա ծրագրի շրջանավարտ:
V. **Ծրագիր.** «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Ուսուցիչների առաջնորդության երկամյա ծրագիր:

**Կարգավորում**

**Սույն Ձեռնարկը և դրա անբաժանելի մասը կազմող այլ փաստաթղթերը մշակվում և հաստատվում են հայերենով: Ձեռնարկը և դրա անբաժանելի մասը կազմող այլ փաստաթղթեր կարող են կազմվել նաև օտար լեզվով: Տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին:**

## «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի «Քոչարին»

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի շարժումն ուղղված է կրթական արդարության խթանմանը և նման է Քոչարի պարին: Հայաստանի յուրաքանչյուր համայնք ունի Քոչարիի սեփական տարբերակը, չնայած դրան, ոչինչ չի խանգարում, որ բոլոր Քոչարիներն ունենան ընդհանրություններ: Յուրաքանչյուր Քոչարի առաջին հերթին ներդաշնակ միասնականության մասին է: Մենք աշխատում ենք ձեռք ձեռքի տված, ինչը խորհրդանշում է մեր մշակութային ժառանգության միասնականությունը: Այդպիսին է նաև մեր «Քոչարի»-ն, որը միավորող գաղափարների ամբողջություն է: Այն համապատասխանում է մեր հավաքական շարժման հայեցակարգին: Ամփոփելով՝ նշենք, որ Հայաստանում և Արցախում ներդրվող մեր ջանքերը արտացոլում են յուրաքանչյուր համայնքի առանձնահատկությունը՝ հիմնվելով մեր ընդհանուր տեսլականի վրա:

### Տեսլական

Մենք ձգտում ենք ունենալ այնպիսի Հայաստան, որտեղ յուրաքանչյուր երեխա՝ անկախ իր սոցիալ-տնտեսական կարգավիճակից, հնարավորություն կունենա գերազանց կրթության շնորհիվ բացահայտել իր ողջ ներուժը:

### Առաքելություն

Մեր առաքելությունն է ստեղծել առաջնորդների համազգային շարժում՝ հանուն Հայաստանի և Արցախի բոլոր երեխաների կրթական հնարավորությունների ընդլայնման:

## Խնդիրը

Հայաստանի բնակչության կեսից ավելին այժմ ապրում է Երեւանում, իսկ երկրի նյութական և հոգևոր ռեսուրսների մեծ մասը կենտրոնացած է մայրաքաղաքի կենտրոնի մի քանի քառակուսի կիլոմետրում: ՀՀ-ում և Արցախում հնարավորությունների բացակայության պատճառով գյուղերի բնակչությունը նոսրանում է: Մենք վստահ ենք, որ նման իրավիճակում կրթության մեջ ներդրումը կարող է սկիզբ դնել մեծ փոփոխությունների: Իսկ այդ փոփոխությունների հիմքում մեր աշակերտների առաջնորդությունն ու նախաձեռնողականությունն է:

## «Դասավանդի՛ր, Հայաստանի» Խոստումը 2050 թվականի համար

ԱՀԱ ՄԵՐ ԽՈՍՏՈՒՄԸ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾՆՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՐԵԽԱՅԻՆ.
Մինչև դու կդառնաս 25 տարեկան, մեր երկիրը կվերափոխվի հենց ՔՈ շնորհիվ: Դու կունենաս հմտություններ, որոնց օգնությամբ կլուծես համայնքի խնդիրները՝ օգտագործելով համաշխարհային փորձը: Քո քաղաքացիական պատասխանատվությունը կխթանի «Կրթական արդարության» շարժումը Հայաստանում և Արցախում: Քո՝ համայնքի հանդեպ ունեցած հարգանքը, կօգնի բացահայտել քո համայնքի ներուժը: Այն Հայաստանը և Արցախը, որտեղ դու ապրելու ես որպես չափահաս, հիմնավորապես կտարբերվի այսօրվա Հայաստանից ու Արցախից՝ քո, քո ընկերների, ծնողների, ուսուցիչների եւ մենթորների նախաձեռնությունների շնորհիվ:

## «Դասավանդի՛ր, Հայաստանի»**առաջնորդության տեսությունը**

2019-ին «Դասավանդի՛ր, Հայաստանը» հանդես եկավ նոր նախաձեռնությամբ՝ սահմանելու մեր Առաջնորդության տեսությունը: Փոխհամագործակցային գործընթացի միջոցով մենք ընդգրկեցինք 70 աշակերտ, 45 ծնող, 12 տնօրեն, 9 աջակից, 75 Ուսուցիչ-առաջնորդ, 40 Շրջանավարտ-դեսպան և 34 աշխատակազմի անդամ: Մեր առջև դրել էինք հետևյալ հարցը. ինչպիսի՞ն պետք է լինի այն առաջնորդությունը, որն արժևորում է Հայաստանի անցյալը, համահունչ է ներկայի պահանջներին և ճկուն՝ ապագայի մարտահրավերների նկատմամբ: Մեր հավաքական եզրակացությունն այն էր, որ Հայաստանին անհրաժեշտ են առաջնորդներ, ովքեր կլինեն.

- հայրենասեր և շարունակական զարգացման ձգտող ակտիվ գործիչներ,
- հարգալից, նպատակասլաց և կրթված քաղաքացիներ,
- գիտելիքներով զինված, օրինակելի, քաջ անհատականություններ,
- մշակույթն արժևորող և համագործակցելու պատրաստ նախաձեռնողներ,
- արժեքներով առաջնորդվող և մշտապես սովորելու պատրաստ նորարարներ,
- խորատես և ինքնահաստատված առաջամարտիկներ
- համայնքակենտրոն և փոփոխությունների միտված գործող հեռատես անհատներ:

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի 2050 Խոստումը պահելու համար մենք ստեղծել ենք երկարաժամկետ ռազմավարություն, որը խորհրդանշական կերպով կոչել ենք «Առագաստ»: Առագաստը ուրվագծում է մեր ազդեցության երեք ուղղությունները.
1) ներգրավել անհրաժեշտ թվով առաջնորդների՝ ձևավորելով բեկման կետ համակարգային փոփոխությունների հասնելու համար;
2) երկրով մեկ ստեղծել նախաձեռնությունների ակտիվ ցանց
3) հասնել կառուցվածքային փոփոխության:

Ո՞ւր են տանում ազդեցության այս երեք ուղղությունները:

ԱՌԱՋԻՆ՝ մենք հավաքագրում ենք իրենց գործին նվիրված և խանդավառ անհատների և որպես Ուսուցիչ-առաջնորդներ գործուղում ենք նրանց Հայաստանի և Արցախի կարիքավոր համայնքներ՝ դասավանդելու և առաջնորդելու:

ԵՐԿՐՈՐԴ՝ ՈՒսուցիչների առաջնորդության երկամյա ծրագրի (Ծրագիր) շրջանակներում Ուսուցիչ-առաջնորդները և աշակերտները միասին հարյուրավոր և հազարավոր նախաձեռնություններով են հանդես գալիս՝ դառնալով ամբողջ համակարգի համար ազդեցիկ օրինակներ:

ԵՐՐՈՐԴ՝ երկարաժամկետ հեռանկարում Ծրագիրն ավարտած մեր Ուսուցիչ-առաջնորդներն ու աշակերտները դառնում են մեր առաքելության «դեսպաններ»: Նրանք, աշխատելով համայնքների և կառավարության հետ համատեղ, իրականացնում են կառուցվածքային փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են երկրի ներուժն առավելագույնս բացահայտելու համար:

Ահա թե ինչ շարժման մասին է խոսում «Դասավանդի՛ր, Հայաստանը»՝ «կրթական արդարություն» ասելիս:

## Հիմնարար արժեքներ

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ում մենք հավատում ենք, որ մեր օրինակով կարող ենք ձևավորել այն մշակույթը, որը կցանկանայինք տարածել մեր դասարաններում: Այդ նպատակով, մենք բարձր ենք պահում մեր նշաձողը և ձգտում ենք դրսևորվել առաջնորդության այնպիսի տեսակով, որպիսին ցանկանում ենք տեսնել ողջ համակարգում:

### Նորարարություն և գերազանցություն

Համակարգային լայնածավալ փոխակերման և կրթության միջոցով երկրի ներուժը բացահայտելու համար մենք տեղական մակարդակում նորարարական նախագծեր իրականացնելիս պետք է կիրառենք համաշխարհային ամենաբարձր չափանիշները:

## Վճռականություն և հաստատակամություն

Համակարգային փոխակերպման հասնելու համար մենք պետք է խիզախենք մեծ երազանքներ ունենալ. հավատալով մեր հավաքական ներուժին՝ անհրաժեշտ է սահմանել համարձակ նպատակներ և ձգտել հաղթահարելու խոչընդոտները նպատակասլացության և անձնանվեր ջանքերի միջոցով:

## Ապրումակցում և համայնքի ձևավորում

Մենք դրսևորում ենք հոգատարություն, լսում դիմացինին, ջանում զարգացնել մեր հուզական բանականությունը և հավաքական առաջնորդության միջոցով կերտում ենք ավելի լավ ապագա՝ մեր համայնքների հետ միասին:

## Շարունակական կրթություն և զարգացում

Մենք ձգտում ենք շարունակական կատարելագործման և ուսումնառության՝ ներհայեցողության, ինքնանդրադարձի, հետազոտելու և վերլուծելու համալիր շրջափուլերի միջոցով՝ նպատակադրվելով առավելագույնս բացահայտել մեր ներուժը:

## Բարեվարքություն և պարկեշտություն

Մենք գիտակցում ենք մեր կարողությունների սահմանները, ընդունում ենք մեր սխալները և դրանցից դասեր քաղում, սովորում ենք մեր շրջապատի լավագույն փորձից՝ հանուն ընդհանուր բարիքի, պատրաստակամ ենք հաղթահարելու խոչընդոտները՝ մշտապես գործելով ազնիվ:

# Բովանդակություն

**I. «ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

Պրոֆեսիոնալիզմ 9
Հավասար հնարավորությունների և վերաբերմունքի քաղաքականություն 9
Խտրականությանն և ճնշումների բացառում 9

Հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավում 10
Աշխատանքը Ուսուցիչ-առաջնորդների աջակիցների հետ 10
Դժբախտ պատահարներից ապահովագրություն 11
Հաղորդակցությունը արտակարգ իրավիճակներում 12
«Դասավանդի՛ր, Հայաստանից» կատարվող հարցումները 12
Հարցումների վերաբերյալ վարվող քաղաքականությունը 12
Հիմնադրամի հարաբերությունները գործընկեր համայնքների հետ 13
Հարաբերությունները մեր դպրոց այցելուների հետ 13
Ամենօրյա հաղորդակցություն 14
Տեղեկություններ, որոնք հաղորդման ենթակա չեն գործընկեր դպրոցներին 15
Դպրոցի և (կամ) գերատեսչական կարգապահական ընթացակարգեր 16
Հարաբերությունները մանկավարժական որակավորում և մագիստրոսական կրթական աստիճան շնորհող գործընկեր բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ 16
Հարաբերությունները լրատվամիջոցների հետ 17

**II. «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի Ուսուցիչների -առաջնորդության ծրագիր** 19
Նախապատրաստական առցանց դասընթաց 19
Կրթական հնարավորությունների հավասարության Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիա 20
Երեսուն կրեդիտով մանկավարժական դասընթաց 21
Ուսուցիչների առաջնորդության մագիստրոսական և ինքնուրույն ուսումնառություն 22
Տարածաշրջանային հանդիպումներ և Կրթական համաժողովներ 22
Առաջնորդության քոուչինգ 23
Նորարարական հայեցակարգ 23

Ուսուցիչների առաջնորդության հնարավորություններ ամռանը 23

Tech4Armenia 25

## III. «ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսուցիչ-առաջնորդից ակնկալվող վարքը 26

Քաղաքական գործունեություն 26
Գաղտնիության և տեղեկությունների չբացահայտման քաղաքականություն 28
Երեխաների իրավունքները և մեր աշակերտների պաշտպանությունը 29
Բարեվարքության, մտավոր սեփականության հանձնառություն 30
Տվյալների հավաքագրման և վերլուծության հանձնառություն 31
Սոցիալական մեդիայում պատշաճ ներկայացածության հանձնառություն 32
Շարունակական ուսուցման և աճի հանձնառություն 32
Արտադասարանային ծրագրերի հանձնառություն 33
Ծնողների կամ օրինական ներկայացուցիչներին ներգրավման հանձնառություն 35
Նորարարությունների հանձնառություն 35
«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի նախաձեռնած դրամահավաքների աջակցության հանձնառություն 36
Պրոֆեսիոնալ և պատշաճ հաղորդակցության հանձնառություն 37

## IV. Ուսուցիչ-առաջնորդների հանձնառության կարգավորումներ

Դրամական օգնություն 37
Տեղափոխման համար տրվող աջակցություն և կանխավճար 50
Հայաստան տեղափոխվելու ֆինանսական օգնություն 51
Տուգանքներ և փոխհատուցում 52
Դպրոց և համայնք տեղակայման համակարգ 53
Աշխատանք մեկից ավելի դպրոցներում 55
Բացակայություններ 56
Մասնակցության դադարեցում 57
Մասնակցության դադարեցում առողջական խնդիրների պատճառով 58
Հեռացում 61
Հրաժարական 61
Հղիություն 63

Ընդհանուր բնույթի տարկետում 64
Տարկետում զինվորական ծառայության նպատակով 65

**ՈՒՍՈՒՑԻՉ–ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՉԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ** 66
Ուսուցիչ-առաջնորդների կատարելագործման պլան (ՈՒԿ պլան) 66
Դասարանային ցածր առաջադիմություն 67
Պրոֆեսիոնալիզմի բացակայություն 68
Ո՞ր դեպքերում ՈՒԿՊ-ները կիրառելի չեն 69
Ուսուցիչների առաջնորդության ծրագրին մասնակցության կասեցումը 70
Ուսուցիչների առաջնորդության ծրագրից հեռացումը 71
Ի՞նչ է տեղի ունենում, երբ Ուսուցիչ-առաջնորդը գտնում է, որ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը չի բավարարել այս ձեռնարկով սահմանված ակնկալիքները 72
Ոչ պաշտոնական կարգավորում 74
Պաշտոնական կարգավորում/բողոքարկման գործընթաց 74
Հավելված Ա 76
Հավելված Բ 78
Հավելված Գ 80
Հավելված Դ 82
Հավելված Ե 84
Հավելված Զ
88

# Ի. «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի սկզբունքները և մոտեցումները

## Պրոֆեսիոնալիզմ

Հիմնադրամի թիմի բոլոր անդամները գիտակցում են, որ ստանձնել են Հայաստանում կրթական հնարավորությունների անհավասարության վերացման

դժվարին գործը: Հետևաբար, բոլորը մշտապես միմյանց վերաբերվում են հարգանքով և ջանում են իրապես ըմբռնել յուրաքանչյուր անհատի յուրօրինակ մոտեցումները Հիմնադրամի գործունեության վերաբերյալ:

## Հավասար հնարավորություններ և վերաբերմունք

Հիմնադրամը ձեռնարկում է քայլեր, որպեսզի յուրաքանչյուր Ուսուցիչ-առաջնորդ լինի հաջողակ, և խորապես համոզված է, որ սրան հնարավոր է հասնել միայն այն դեպքում, երբ յուրաքանչյուրը կարողանա լավագույնս և ամբողջապես ներդնել սեփական ներուժը՝ կրթության գերազանց արդյունք ունենալու ընդհանուր գործում: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը հավատարիմ է ընձեռվող հնարավորությունների և ցուցաբերվող վերաբերմունքի հավասարության քաղաքականությանը այդ գործի բոլոր շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններում՝ անկախ նրանց սեռից, ռասայից, մաշկի գույնից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, որևէ ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից[2]: «Դասավանդի՛ր, Հայաստանը» անընդունելի է համարում խտրականության կամ ճնշումների որևէ դրսևորում և չի հանդուրժում նման վարքագիծ: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից վարվող ամբողջ քաղաքականությունը համահունչ է խտրականության բացառման վերաբերյալ Հայաստանի օրենսդրության դրույթներին:

## Խտրականությանն և ճնշումների բացառում

Եթե Ուսուցիչ-առաջնորդը  գտնում է, որ ենթարկվել է խտրական վերաբերմունքի և (կամ) ճնշումների «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի անձնակազմի որևէ անդամի կամ այլ Ուսուցիչ-առաջնորդի կողմից, ապա Հիմնադրամը հորդորում է բարձրաձայնել այդ մասին: Եթե Ուսուցիչ-առաջնորդը կարծում է, որ տեղին է և հնարավոր խնդիրը պարզաբանել անմիջականորեն այն մարդու հետ, որը ենթադրաբար հասցրել է վիրավորանքը, ապա Հիմնադրամը խորհուրդ է տալիս վարվել այդ կերպ: Այն դեպքերում, երբ նման ոչ պաշտոնական միջամտությունը տեղին, բավարար կամ հնարավոր չէ խնդրի լուծման համար, խնդրում ենք միջադեպի մասին տեղեկացնել Առաջնորդության զարգացման ղեկավարին կամ Ծրագրի տնօրենին՝ Հիմնադրամին հնարավորություն տալով ձեռնարկելու քայլեր: Քայլերը ենթադրում են նաև հանգամանքների որոշակի քննություն և համապատասխան գործողություններ՝ ելնելով հարցի քննության արդյունքներից: Հիմնադրամն Ուսուցիչ-առաջնորդներին հորդորում է  ի նկատի ունենալ, որ, անկախ դպրոցում կամ համայնքային այլ գործընկերոջ կողմից տեղի ունեցած ենթադրվող խտրականության կամ ճնշումների

[2] ՀՀ սահմանադրություն, հոդված 29, Խտրականության արգելքը

մասին տեղեկանալու Հիմնադրամի ցանկությունից, Հիմնադրամի կարողությունը իրադրության վրա ազդեցության առումով կարող է սահմանափակվել՝ պայմանավորված գաղտնիության և (կամ) Հիմնադրամի անուղղակի միջամտության և (կամ) մյուս կողմի վրա ազդեցության սահմանափակ հնարավորության հանգամանքներով: Հետևաբար, անհրաժեշտ է, որ Ուսուցիչ-առաջնորդները իրենք ծանոթ լինեն տվյալ հաստատությունում խտրականության դեմ վարվող քաղաքականությանը և գործելակերպին:

## Հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավում

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ում առկա է այն համոզմունքը, որ մասնագիտական որակավորում ունեցող, բայց հաշմանդամություն ունեցող անձը կարող է ներդրում ունենալ մեր գործունեության մեջ: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը անվերապահորեն ընձեռում է հավասար հնարավորություններ յուրաքանչյուրի համար և արգելում է հաշմանդամությամբ պայմանավորված խտրականությունը ինչպես դիմումների գործընթացում, այնպես էլ Ուսուցիչների առաջնորդության ծրագրի ընթացքում:

## Աշխատանքը Ուսուցիչ-առաջնորդների աջակիցների հետ

Հիմնադրամը գիտակցում է, որ Ուսուցիչ-առաջնորդները Ծրագրում իրենց գործունեության ընթացքում շարունակական աջակցություն են ստանում ընտանիքի անդամներից՝ օրինական ներկայացուցիչներից, ամուսիններից կամ զուգընկերներից, եղբայրներից ու քույրերից, ինչպես նաև երեխաներից (այսուհետ՝ Աջակից): Շատ հաճախ հենց այս կարևոր աջակցության շնորհիվ է, որ Ուսուցիչ-առաջնորդները կարողանում են լիովին տրվել իրենց գործին՝ որպես առաջնորդներ իրենց դասարանների և համայնքների համար:

Այդ պատճառով Հիմնադրամը Ուսուցիչ-առաջնորդից խնդրում է կոնտակտային անձի տվյալներ, որի հետ կարելի է կապ հաստատել արտակարգ իրավիճակների դեպքում:

Այդուհանդերձ, ելնելով Ուսուցիչ-առաջնորդների հանդեպ մասնագիտական հարգանքից՝ Հիմնադրամը Ուսուցիչ-առաջնորդների գործունեության վերաբերյալ չի վարի որևէ տեսակի քննարկում նրանց Աջակիցների հետ, բացառությամբ այնպիսի դեպքերի, երբ անձն ունի հաշմանդամության տեսակ, որի դեպքում նա ունի լրացուցիչ աջակցության կարիք՝ հաղորդակցության համար:

## Դժբախտ պատահարներից ապահովագրություն

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը պատրաստակամ է յուրաքանչյուր Ուսուցիչ-առաջնորդի տրամադրելու դժբախտ պատահարներից ապահովագրություն՝ սկսած Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիայի առկա դասընթացներին ներգրավվելու պահից մինչև Ուսուցիչների առաջնորդության ծրագրի ավարտը:

Ուսուցիչ-առաջնորդի ապահովագրությունը դժբախտ պատահարներից գործում է հետևյալ ծածկույթներով.

- Մահվան ելքով պատահարի դեպքում-100% փոխհատուցում
- 1-ին խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում-100% փոխհատուցում
- 2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում-70% փոխհատուցում
- 3-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում-40% փոխհատուցում
- Պատահարներից առաջացած բժշկական ծախսեր-100% փոխհատուցում

Դժբախտ պատահարի հետևանքով պատճառված մարմնական վնասվածքների դեպքում 100% փոխհատուցումը վերաբերում է ապահովագրական գումարի սահմաններում փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերի հատուցմանը, այդ թվում՝ հոդախախտի շտկմանը, կոտրվածքի բեկորային համադրմանը, ինչպես նաև դրանց կապակցությամբ անցկացվող լաբորատոր, գործիքային քննությունների ծախսերի հատուցմանը, սակայն չի վերաբերում պահպանողական և վերականգնողական բուժման գծով ծախսերին:

Հայտերի կարգավորման ընթացակարգը

- Պատահարի մասին անհապաղ տեղեկացում իրավասու մարմիններին (բուժհաստատություն, ոստիկանություն և այլն),
- Հայտի գրանցում 48 ժամվա ընթացքում՝ զանգահարելով 012 888 888 հեռախոսահամարով կամ այցելելով www. RGS.am կայք և գրանցելով հայտը,
- Հայտադիմումի և հարակից փաստաթղթերի ներկայացում 30 օրվա ընթացքում՝ Վարդանանց 15 հասցեում,
- Փոխհատուցում 15 աշխատանքային օրվա ընթացքում:

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից առաջարկվող «Դժբախտ պատահարներից ապահովագրության վերաբերյալ հարցերով կարող եք դիմել info@teachforarmenia.org էլեկտրոնային փոստի հասցեով:

## Հաղորդակցությունը արտակարգ իրավիճակներում

Տեղային կամ անձնական բնույթի արտակարգ իրավիճակների դեպքում (Օրինակ՝ բնական աղետ, հակամարտություն, առևանգում և այլն) Ուսուցիչ-առաջնորդները պետք է տեղեկացնեն իրենց Առաջնորդության զարգացման ղեկավարին (հնարավորության

դեպքում): Ուսուցիչ-առաջնորդների կողմից Առաջնորդության զարգազման ղեկավարի հետ կապ հաստատելու անհնարինության դեպքում, դպրոցի տնօրենը պարտավոր է առկա իրադրության մասին տեղեկացնել «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամին:

Արտակարգ իրավիճակի մասին տեղեկանալուց հետո Առաջնորդության զարգազման ղեկավարը պետք է տեղեկությունն անհապաղ հաղորդի իր վերադասին՝ Տարածաշրջանային ղեկավարին: Այնուհետև, Տարածաշրջանային ղեկավարը «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Ղեկավար թիմին է ուղարկում «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ» ձևակերպմամբ վերնագրված էլեկտրոնային նամակ, որում նկարագրում է իրադրությունը և ներկայացնում, թե ինչ քայլեր են ձեռնարկվում խնդիրների լուծման ուղղությամբ: Այդ ընթացքում Առաջնորդության զարգացման ղեկավարը շարունակում է կապի մեջ լինել Ուսուցիչ-առաջնորդի կամ նրա դպրոցի տնօրենի հետ, մինչև Ղեկավար թիմի աջակցությամբ խնդիրների հանգուցալուծումը:

## «Դասավանդի՛ր, Հայաստան»-ից կատարվող հարցումներ

«Դասավանդի՛ր, Հայաստանը» ջանում է ամեն գնով արձագանքել բոլոր հարցումներին, որոնք վերաբերում են Ուսուցիչների առաջնորդության ծրագրին մասնակցությունը հաստատող փաստաթղթերին, տեղեկանքերին, երաշխավորագրերին: Միևնույն ժամանակ, հարցումներին արձագանքելը պահանջում է պահպանել ստորև ներկայացված ընթացակարգերը:

## Հարցումների վերաբերյալ վարվող քաղաքականությունը

**Փաստաթղթերի ձեռքբերման հայտ.** «Դասավանդի՛ր, Հայաստան»-ից տեղեկանքներ, հավաստագրեր կամ այլ բնույթի հաստատման փաստաթղթեր խնդրելիս Ուսուցիչ-առաջնորդները դրանք կարող են ստանալ ոչ շուտ, քան դիմումը ներկայացնելուց 5 աշխատանքային օր հետո: Տեղեկանքների և այլ բնույթի փաստաթղթերի հայտը պետք է լրացնել հետևյալ հղումով:

**Տեղեկության տրամադրման հայտ.** Այն դեպքում, երբ Ուսուցիչ-առաջնորդին անհրաժեշտ է Առաջնորդության զարգացման ղեկավարի կողմից տրվող որևէ փաստաթուղթ, որն իր հերթին պահանջում է Տարածաշրջանային ղեկավարի կամ «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի տնօրինության հաստատումը կամ համաձայնությունը, ապա պատասխանը կարող է տրամադրվել ոչ շուտ, քան 3 աշխատանքային օր հետո:

**Կապը «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի աշխատակազմի հետ**. Ուսուցիչների առաջնորդության ծրագրի ողջ ընթացքում կարևոր է, որ Ուսուցիչ-առաջնորդի և Հիմնադրամի միջև հաղորդակցությունն ապահովվի Առաջնորդության զարգացման ղեկավարի միջոցով: Այդուհանդերձ, այն դեպքերում, երբ կապ է հաստա

տվում «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի աշխատակազմի անդամների հետ և (կամ) նրանց կողմից, Առաջնորդության զարգացման ղեկավարը[3] ևս պետք է ներգրավվի հաղորդակցության ողջ ընթացքի մեջ և տեղեկացվի վերջնարդյունքի վերաբերյալ:

# Հիմնադրամի հարաբերությունները գործընկեր համայնքների հետ

## Հարաբերությունները մեր դպրոցների այցելուների հետ

Ուսուցիչների առաջնորդության ծրագրի ընթացքում Ուսուցիչ-առաջնորդներին կարող է հանձնարարվել դպրոցում հյուրընկալել այցելուների՝ նրանց ներկայացնելու անձամբ իրենց և Հիմնադրամի ունեցած ներազդեցությունը տվյալ դպրոցում: Այդ դեպքում, երբ այցելությունը կազմակերպված է «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից, Առաջնորդության զարգացման ղեկավարի և (կամ) աշխատակազմի այլ անդամներ Ուսուցիչ-առաջնորդներին կաջակցեն դպրոցի տնօրենության հետ հանդիպման և այցելությանը նախապատրաստվելու հարցում:

Պետք է նշել, որ երբեմն որևէ նվիրատու կարող է ցանկություն հայտնել հովանավորելու որևէ Ուսուցիչ-առաջնորդի կամ դպրոցի, այն է. «Դասավանդի՛ր, Հայաստան»-ին հատկացնել ֆինանսական միջոցներ՝ տվյալ դպրոցում Հիմնադրամի կողմից իրականացված գործողություններին վերաբերող ծրագրային ծախսերի գումարի չափով: Նման համագործակցության նպատակով Նվիրաբերողը կարող է ցանկություն հայտնել հանդիպումներ ունենալու Ուսուցիչ-առաջնորդի և (կամ) դպրոցական համայնքի հետ:

Պատվավոր հյուրերի, այդ թվում՝ պետական պաշտոնյաների կողմից այցելության ծանուցում ստանալուն պես և (կամ) զանգվածային լրատվության միջոցների կողմից հաղորդման շրջանակներում նկարահանվելու կամ հարցազրույց տալու ցանկացած առաջարկի դեպքում Ուսուցիչ-առաջնորդը պարտավոր է այդ մասին տեղեկացնել իր Առաջնորդության զարգացման ղեկավարին:

## Ամենօրյա հաղորդակցություն

Հիմնադրամը ձգտում է Ուսուցիչ-առաջնորդներին ապահովել Ուսուցիչների առաջնորդության բազմակողմանիորեն մշակված ծրագրով, որի նպատակն է կատարելագործել մասնակիցներին՝ դարձնելով նրանց այնպիսի Ուսուցիչ-առաջնորդներ, որոնց կարիքն ունեն աշակերտներն ու համայնքները:

[3] Կարող է պատճենել ողջ հաղորդագրությունները կամ հաղորդել էլեկտրոնային նամակի զուգահեռ հասցեագրմամբ (cc)

Առաջնորդության հմտությունների զարգացումը Հիմնադրամը իրականացնում է բազմաթիվ ձևաչափերով, այդ թվում՝ շարունակական վերապատրաստումներով ու քոուչինգով, արտաքին ռեսուրսների հասանելիության ապահովմամբ և այլն: Բոլոր աշխատարաններին կամ դասընթացներին մասնակցելը, ինչպես նաև հանձնարարությունների կատարումը պարտադիր են և հանդիսանում են Ուսուցիչների առաջնորդության ծրագրի հաջող իրականացման հիմնարար տարրեր:

Հիմնադրամի կողմից Ուսուցիչ-առաջնորդին տրամադրվող աջակցության ամենակարևոր եղանակներից մեկը Հիմնադրամի կապն է դպրոցի, դպրոցի տնօրենի, Առաջնորդության զարգացման ղեկավարի, Տարածաշրջանային ղեկավարի և այլ Ուսուցիչների հետ՝ պարբերական շփումների միջոցով Ուսուցիչ-առաջնորդի գործունեության վերաբերյալ բոլոր ընկալումները համադրելու նպատակով[4]:

Տեղեկությունները, որոնք հայտնում կամ ճշտվում են, վերաբերում են.

- Ուսուցիչ-առաջնորդի դասավանդման, դասարանային մշակույթի մասին կարծիքներին,
- Գործընկերների, ուսուցչական կազմի, աշակերտների, նրանց ընտանիքի անդամների և համայնքի հետ հարաբերություններին,
- Շահագրգիռ կողմերի շրջանում Ուսուցիչ-առաջնորդի մասին ձևավորված կարծիքներին,
- Հիմնադրամի կողմից ցուցաբերված աջակցության բնույթին և Ուսուցիչ-առաջնորդի համար դրա օգտակարությանը,
- Դպրոցի կամ մասնագիտական որակավորում տվող գործընկերների կողմից տրամադրվող աջակցության և դրա օգտակարության վերաբերյալ[5]:

Հիմնադրամը հիմնականում այս տեղեկություններով փոխանակվում է ոչ պաշտոնական եղանակներով, ինչպես զրույցներն ու հաղորդագրությունները[6]: Հիմնադրամը նկատել է, որ այսպիսի համագործակցության միջոցով կհաջողվի ավելի արդյունավետորեն աջակցել Ուսուցիչ-առաջնորդներին՝ խորապես ըմբռնելով իրենց ուժեղ կողմերն ու մասնագիտական աճի հնարավորությունները: Ուսուցիչ-առաջնորդները տեղյակ են այս տեղեկությունների հասանելիության մասին, քանի որ դրանք իրենց ներկայացվում են նաև հենց վերոնշյալ գործընկերների կողմից:

## Տեղեկություններ, որոնք ենթակա չեն հաղորդման գործընկեր դպրոցներին

Հիմնադրամի գործընկեր դպրոցներին հաղորդման ենթակա չեն նախևառաջ Ուսուցիչ-առաջնորդի մասին անձնական բնույթի տեղեկությունները, քանի որ դրանք

[4] Ընդ որում՝ այս մարդկանց կարծիքը Ուսուցիչ-առաջնորդի կողմից դասավանդման մասին կարևոր է, քանի որ նրանք հաճախ նաև լավ պատկերացում ունեն այն մասին, թե ինչ է տեղի ունենում դպրոցում առհասարակ, ինչը կարող է տարբերվել Հիմնադրամի թիմի պատկերացումներից: Միևնույն ժամանակ, նրանք հաճախ հետաքրքրված են լինում Հիմնադրամի՝ դպրոցի հետ աշխատող անձնակազմի ընկալումներով:

[5] Սա վերաբերում է նաև մանկավարժի/ուսուցչի որակավորում չունեցող Ուսուցիչ-առաջնորդներին, որոնք մասնակցում են Ուսուցիչների առաջնորդության ծրագրին Հայաստանում և Արցախում:

[6] Չպետք է շփոթել Կողմերի միջև հաստատված Էլեկտրոնային նամակագրության հետ, որը հանդիսանում է պաշտոնական գրագրության միջոց:

դիտվում են որպես գաղտնի տեղեկություններ: Այս առումով՝ Ուսուցիչ-առաջնորդի մասին հաղորդվող անձնական տեղեկություն է համարվում ցանկացած տվյալ՝ իր անձնական կյանքի մասին (ամուսնական կարգավիճակ, ընտանիք և այլն):
Հիմնադրամը ՈՒսուցիչ-առաջնորդների մասին տեղեկությունը բացահայտում է միայն ծայրահեղ դեպքերում, երբ համոզված է, որ նման տեղեկություններ չհայտնելը կարող է վտանգ ներկայացնել Ուսուցիչ-առաջնորդի կամ այլ անձանց համար. օրինակ՝ եթե Ուսուցիչ-առաջնորդը վտանգ է ներկայացնում ինքն իր կամ իրեն վստահված երեխաների համար:

Հիմնադրամը չի ներգրավվում դպրոցի ներքին պաշտոնական գործընթացների մեջ իբրև Ուսուցիչ-առաջնորդի գործատու: Հիմնադրամը մշտապես ջանում է ամենայն հարգանքով վերաբերվել տվյալ դպրոցի աշխատակցի՝ Ուսուցիչ-առաջնորդի իրավունքներին և պարտականություններին և, հետևաբար, չի փորձում միջամտել Ուսուցիչ-առաջնորդի եւ դպրոցի՝ գործատու-աշխատակից հարաբերություններին: Երբեմն դպրոցները կարող են խնդրել Հիմնադրամին պաշտոնապես մասնակցել ուսուցչի զարգացմանն ուղղված որոշ գործընթացների (օրինակ՝ համատեղ կարգով կազմել պլան, որը կօգնի Ուսուցիչ-առաջնորդի զարգացմանը՝ որպես ուսուցիչ): Այդ դեպքերում Հիմնադրամը նշված աշխատանքներում ներգրավվելու որոշման դեպքում Ուսուցիչ-առաջնորդին կտեղեկացնի Հիմնադրամի ունեցած դերի մասին:

## Դպրոցի և (կամ) գերատեսչական կարգապահական ընթացակարգեր

Հազվադեպ, Ուսուցիչ-առաջնորդները կարող են ներգրավվել ծառայողական քննության մեջ, ինչպես օրինակ՝ դպրոցի կամ վարչական շրջանի կողմից կազմակերպված քննչական կամ կարգապահական գործընթացներում : Հիմնադրամը խորհուրդ է տալիս, որ նման դեպքերում Ուսուցիչ-առաջնորդը ներկայանա վարչական վարույթներում մասնագիտացված փաստաբանի հետ: Հաշվի առնելով Հիմնադրամի իրավասությունների սահմանափակումները՝ Հիմնադրամը պարզապես չի տիրապետում անհրաժեշտ մասնագիտական կարողության՝ նման ընթացակարգերում Ուսուցիչ-առաջնորդի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու համար: Հիմնադրամը այդ ընթացակարգերի ողջ ժամանակամիջոցում կշարունակի աջակցել Ուսուցիչ-առաջնորդներին՝ դասարանում իր ուսուցչական գործունեության գործում: Հիմնադրամը իրեն իրավունք կվերապահի առավել ակտիվ կերպով հանդես գալ, եթե գտնի, որ դա տեղին և օգտակար կլինի, օրինակ՝ Ուսուցիչ-առաջնորդի կամ նրա ուսուցչական գործունեության մասին բնութագրական տեղեկանք ներկայացնելով: Այնուամենայնիվ, նման ընթացակարգերում պաշտոնապես ներգրավվելը հաճախ չի համարվում տեղին և օգտակար քայլ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից:

## Հարաբերությունները մանկավարժական որակավորում/ մագիստրոսական կրթական աստիճան շնորհող գործընկեր բարձրագույն ուսումնական հաստատության հետ

Ուսուցիչների առաջնորդության երկամյա ծրագրի շրջանակներում՝ ուսուցչի որակավորում չունեցող Ուսուցիչ-առաջնորդները հնարավորություն է ստեղծվում ներգրավվել «Ուսուցչական առաջնորդություն» մագիստրոսական ծրագրում, որը մշակվել և ներդրվել է ԵՊՀ-ի և «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի համագործակցության արդյունքում և որն էլ ապահովելու է Ուսուցիչ-առաջնորդների շարունակական և անխախտ գործունեությունը դպրոցներում: Մագիստրոսական ծրագրի կրթաթոշակը հովանավորվում է Հիմնադրամի կողմից՝ ԲՈՒՀ-երի հետ (այսուհետև՝ ատեստավորող գործընկեր) պաշտոնական գործընկերությունների շրջանակում: Ուսուցիչ-առաջնորդները չեն կարող ներգրավվել որևէ այլ հետբուհական կրթական ծրագրում՝ առանց «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի թույլտվության՝ նախքան Ուսուցիչների առաջնորդության երկամյա ծրագրի մեկնարկը: Ուսուցիչ-առաջնորդները, ովքեր ներգրավված են մագիստրոսական ծրագրում, պարտավոր են ապահովել՝ պահանջվող միջին որակական գնահատականը (GPA) կամ գնահատականների նվազագույն շեմը, որը հիմք կհանդիսանա պահպանելու մագիստրոսական կրթաթոշակը և շարունակելու իրենց մասնակցությունը Ուսուցիչների առաջնորդության ծրագրին: Այն Ուսուցիչ-առաջնորդը, որին չի հաջողվում ավարտել Մագիստրոսական ծրագիրը և ստանալ համապատասխան որակավորում, պարտավորվում է «Դասավանդի՛ր, Հայաստան»-ին փոխհատուցել որակավորման համար Հիմնադրամի կողմից կատարված ծախսերը:

## Հարաբերությունները լրատվամիջոցների հետ

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը համագործակցում է զանգվածային լրատվության միջոցների հետ՝ կրթական հնարավորությունների հավասարությանն ուղղված շարժման և դրանում Հիմնադրամի ունեցած դերի մասին հանրության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար: Հիմնադրամը չի կարող կյանքի կոչել իր առաքելությունն ու տեսլականը՝ առանց իր աշխատանքի մասին իրազեկությունը խթանելու: Այդ նպատակով Հիմնադրամը հաճախ օգտագործում է լուսանկարներ, ֆիլմեր, տեսանյութեր կամ Ուսուցիչ-առաջորդների կենսագրական տվյալներ իր հանրայնացման միջոցառումներում, գովազդային նյութերում, տեղեկատուներում և նմանատիպ այլ նախաձեռնություններում, և Ուսուցիչ-առաջնորդները հաճախ կարող են հայտնվել այդ նյութերում: **Սույն Ձեռնարկին համաձայնությունը փաստացի դիտվում է Ուսուցիչ-առաջնորդի կողմից նշված դրույթներին ուղղակի համաձայնություն:**

Լրատվական հարթակները նաև գործուն միջոց են ճշգրիտ տեղեկատվության տարածման և Հիմնադրամի հեղինակության պահպանման համար: Այս փաստաթղթում լրատվական հարթակներ ասելով՝ նկատի են առնվում տեղական, պետական և

միջազգային մասշտաբի լրագրերը, ամսագրերը, ռադիոն, հեռուսատեսությունը, առցանց նորությունները, սոցիալական մեդիայի հարթակները, բլոգերը և այլն: Տեղեկատվության ապահովման համար Հիմնադրամը սահմանափակում է այն մարդկանց թիվը, որոնք մեդիահարթակներում կարող են հանդես գալ որպես «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի խոսնակներ:

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից կատարվող բոլոր մամուլի հրապարակումները, հայտարարությունները, մեջբերումները, ճեպազրույցներն ու մեկնաբանությունները պետք է համակարգվեն և հաստատվեն Մարքեթինգի, հաղորդակցության և ներգրավմանան բաժնի կողմից: Ցանկացած միջոցառման վերաբերյալ լուսաբանման որոշումները վերջնական են և կայացվում են Մարքեթինգի, հաղորդակցության և ներգրավմանան բաժնի ռազմավարությանը համահունչ: Դա վերաբերում է նաև «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի գործունեության և միջոցառումների վերաբերյալ շփումները, տեղեկատվությունը և լրատվամիջոցների կամ լրագրողների հետ հանդիպման հրավերները ևս պետք է համակարգվեն և հաստատվեն Մարքեթինգի, հաղորդակցության և ներգրավմանան բաժնի կողմից:

Ուսուցիչ-առաջնորդները կարող են հանդես գալ լրատվամիջոցներում, սակայն ոչ որպես «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի պաշտոնական խոսնակներ, բայց անհրաժեշտ է բոլոր դեպքերում պատշաճ կերպով նախապատրաստվել Մարքեթինգի, հաղորդակցության և ներգրավմանան բաժնի օգնությամբ: Նաև Մարքեթինգի, հաղորդակցության և ներգրավման» բաժնի խնդրանքով Ուսուցիչ-առաջնորդները կարող են հարցազրույց տալ կամ հանդես գալ իրենց մասնագիտական ոլորտին առնչվող թեմաներով: Այս առումով՝ Մարքեթինգի, հաղորդակցության և ներգրավման բաժնի աշխատակիցները պատասխանատու են լրագրողների և լրատվամիջոցների հետ բոլոր տեսակի հարաբերությունների համակարգման համար:Ուսուցիչ-առաջնորդին ուղղված լրատվամիջոցների հարցումներն ու հանդես գալու առաջարկները Մարքեթինգի, հաղորդակցության և ներգրավմանան բաժնին marketing@teachforarmenia.org էլեկտրոնային հասցեով պետք է ներկայացվեն ելույթի օրվանից առնվազն 5 աշխատանքային օր առաջ հաղորդակցության մեջ պահելով նաև իրենց հետ աշխատող Առաջնորդության զարգացման ղեկավարին:

Մասնավոր դեպքերում կամ բացառությունների դեպքում, պետք է կրկին նախապես համաձայնեցնել Մարքեթինգի, հաղորդակցության և ներգրավմանան բաժնի հետ: Սա վերաբերում է նաև բոլոր տեսակի ոչ պաշտոնական «չարձանագրվող ձևաչափով զրույցների» խնդրանքներին և «կուլիսային» ճեպազրույցներին: Մարքեթինգի, հաղորդակցության և ներգրավմանան բաժնի գործունեության հիմնական նպատակը Ուսուցիչ-առաջնորդին աջակցելն է, ուստի նրանց իրազեկված լինելու բարձր մակարդակը պահպանելը արդյունավետության լավագույն երաշխիքն է:

**Համաձայնություն՝ անձնական տվյալների մշակման** և օգտագործման մասին

Բոլոր Ուսուցիչ-առաջնորդները սույնով տալիս են իրենց համաձայնությունը իրենց անձնական տվյալների և կամ իրենց մասնակցությամբ տեսալուսանկարահանված

նյութերի հրապարակման մասին՝ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից իրականացվող ծրագրի հրապարակայնության շրջանակներում օգտագործելու նպատակով՝ նախքան Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիա հաճախելը: Ուսուցիչ-առաջնորդները«Դասավանդի՛ր, Հայաստան»-ին թույլ են տալիս տարբեր հարթակներում օգտագործելու իրենց նկարները, Ուսուցիչ-առաջորդների մասնակցությամբ և նրանց վերաբերյալ տեսանյութերը և բոլոր այլ տեղեկությունները: Բացի այդ, Ուսուցիչ-առաջնորդները սույնով հավաստում են, որ ունեն պարտականություն ստանալու[7] «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի լրատվական հրապարակումներում դպրոցի աշակերտների օրինական ներկայացուցիչներից համաձայնություններ[8] ՝աշխատանքի մասին պատմող լուսանկարների և տարբեր պատկերների հրապարակման նպատակով:

## II.«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի Ուսուցիչների առաջնորդության ծրագիր

### Նախապատրաստական առցանց դասընթաց

Հանուն կրթական հավասարության գործող **Ուսուցիչների առաջնորդության ակադեմիայում** (ՈՒԱԱ) ներգրավումը տալիս է նոր փորձի, գիտելիքի և աճի լայն հնարավորություններ: ՈՒԱԱ-ին առավել լավ նախապատրաստվելու համար յուրաքանչյուր թեկնածուից պահանջվում է անցնել նախապատրաստական առցանց դասընթաց:
Առցանց վերապատրաստումը հինգշաբաթյա դասընթաց է, որն ամբողջովին անցկացվում է առցանց ռեժիմով: Յուրաքանչյուր շաբաթ թեկնածուներից պահանջվում է կատարել հանձնարարություններ, որոնք նախատեսված են Հիմնադրամի, Ծրագրի և ՈՒԱԱ-ի մասին առավել խոր իմացություն ձեռք բերելու համար: Այս հանձնարարությունների կատարումը կդիտարկվի որպես թեկնածուի Ընտրության գործընթացի մաս: Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիա ընդունվելու համար թեկնածուները պետք է հաջողությամբ անցնեն նախապատրաստական առցանց դասընթացը:

Դասընթացը հաջող կերպով անցնելու համար՝ թեկնածուները պետք է.

- Ժամանակին հանձնեն կատարված բոլոր առաջադրանքները,
- Բոլոր առաջադրանքների կատարումից ստանան առնվազն «Բավարար»՝ ըստ գնահատման սանդղակի,
- Բոլոր հանձնարարությունները կատարեն ինքնուրույն,
- Առցանց հարթակում պահպանեն հարգալից շփում / հաղորդակցություն:

[7] Հարկ կլինի ներկայացնել Հիմնադրամ ուսումնական տարվա մեկնարկին հաջորդող առաջին շաբաթվա ընթացքում:
[8] Համաձայնության օրինակելի ձևը տրամադրվում է «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից և լիովին համապատասխանում է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքին:

Ստորև ներկայացված են նախապատրաստական դասընթացի ընդհանուր դրույթներ.

- Եթե թեկնածուի առաջադրանքի կատարումը գնահատվել է որպես «Անբավարար», նրան տրվում է առաջադրանքի կատարման ևս մեկ հնարավորություն:
- Եթե պարզվում է, որ թեկնածուի կողմից թույլ է տրվել առաջադրանքի կատարման էթիկական խախտում (գրագողություն և այլն), նրան տրվում է **զգուշացում, բայց** առաջադրանքի ինքնուրույն կատարման ևս մեկ հնարավորություն: Էթիկական խախտման ցանկացած երկրորդ դեպքը հանգեցնում է Ծրագրից հեռացման համապատասխան հետևանքներով:
- Եթե երկրորդ հնարավորության դեպքում ևս թեկնածուի աշխատանքը գնահատվում է «Անբավարար», կամ թույլ է տալիս առաջադրանքի կատարման էթիկական խախտում, նա հեռացվում է առցանց դասընթացից և այլևս չի կարող մասնակցել ՈՒԱԱ-ին: Թեկնածուն նաև չի համարվի Ուսուցիչ-առաջնորդ:
- Եթե թեկնածուին չի հաջողվում առցանց դասընթացին մասնակցել նշանակված ժամկետում, ապա նա կարող է դիմել հերթական դասընթացին մասնակցության համար, եթե այդպիսին հայտարարվի: Թեկնածուն այդ մասին պետք է նախքան դասընթացի մեկնարկը տեղեկացնի Ընտրության բաժնին՝ անհրաժեշտ պայմանավորվածություններ ձեռք բերելու նպատակով:
- Եթե թեկնածուն չի արձագանքում առցանց դասընթացի ժամանակահատվածում, ապա այս հանգամանքը Հիմնադրամի կողմից կդիտարկվի որպես թեկնածուի փաստացի հրաժարական Ուսուցիչների առաջնորդության Ծրագրի մասնակցությունից:
- Հարգելի պատճառներ ունենալու դեպքում թեկնածուն կարող է դիմել Ընտրության բաժնի ղեկավարին, եթե անհրաժեշտ է ձեռք բերել որոշակի պայմանավորվածություններ (հիվանդության, ուսուցման առանձնահատուկ պայմանների վերաբերյալ և այլն):
- <u>«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը նախապատրաստական առցանց դասընթացը ևս դիտարկում է որպես ընտրության փուլ, որի ընթացքում Հիմնադրամը իրավասու է հեռացնել այն անձանց, որոնք չեն համապատասխանի Ծրագրով նախատեսված պահանջներին:</u>
  <u>Հարկ է նշել նաև, որ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը անցկացնում է առարկայական մասնագիտական ստուգում՝ որպես նախապատրաստական առցանց դասընթացի բաղադրիչ տարր</u>:

## Կրթական հնարավորությունների հավասարության Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիա (ՈՒԱԱ)

Ուսումնական տարվա մեկնարկից առաջ բոլոր Ուսուցիչ-առաջնորդները պարտադիր պետք է անցնեն ինտենսիվ ամառային վերապատրաստում՝ որպես

Հիմնադրամի Ուսուցիչների առաջնորդության ծրագրի մաս՝ զինվելու իրենց տեղակայման համայնքներում հաջողելու համար անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով և մտածելակերպով: Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիայի (ՈՒԱԱ) վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել հետևյալ կայքէջում.https://www.teachforarmenia.org/am/tfaprogram

ՈՒԱԱ-ն խստապահանջ ծրագիր է, որը ներառում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքներ: Այդ ժամանակամիջոցում Ուսուցիչ-առաջնորդներից ակնկալվում է դասավանդել Ամառային դպրոցում (կամ առցանց ճամբարում), մասնակցել բոլոր պարապմունքներին ու աշխատարաններին : Բացի այդ, Ուսուցիչ-առաջնորդներից պահանջվում է ժամանակին ներկայացնել բոլոր հանձնարարություններն ու առաջադրանքները ՈՒԱԱ-ի եւ հետագայում Ծրագրի ողջ ընթացքում:

Որպես ցուցաբերվող գործնական աջակցություն՝ Ուսուցիչ-առաջնորդները անցնում են «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից կիրառվող «Ուսուցիչ-առաջնորդների կատարելագործման պլանը» (ՈՒԿՊ)[9], եթե նրանք չեն համապատասխանում դասավանդման, մասնակցության կամ պրոֆեսիոնալիզմի նվազագույն պահանջներին (տե՛ս հաջորդիվ): ՈՒԿՊ-ն մշակված է այնպես, որ Ուսուցիչ-առաջնորդներին տրամադրի նրանց անհրաժեշտ ինտենսիվ աջակցությունը՝ լավագույնս հանդես գալու համար որպես ուսուցիչ և մասնագետ:

Ակնկալվող պահանջները չբավարարելու կամ Հիմնադրամի հիմնարար արժեքների ոտնահարման դեպքում «Դասավանդի՛ր, Հայաստան»-ն իրեն իրավունք է վերապահում ՈՒԱԱ-ից հեռացնելու ցանկացած Ուսուցիչ-առաջնորդի: ՈՒԱԱ-ից հեռացումը նշանակում է հեռացում ամբողջ Ծրագրից: ՈՒԱԱ-ն «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից դիտարկվում է որպես հաջորդական ընտրության փուլ, որի ընթացքում նույնպես, կազմակերպությունն իրավասու է հեռացնել այն անձանց, որոնք չեն համապատասխանի Ծրագրով սահմանված  պահանջներին:

Ուսուցիչ-առաջնորդ դառնալու նպատակով Հայաստան տեղափոխվող անձինք, որոնք ունեն այլ երկրների քաղաքացիություն, պետք է ներկայացնեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ նախքան Հիմնադրամը կսկսի նրանց Հայաստան տեղափոխման գործընթացի կազմակերպումը: Բոլոր փաստաթղթերը տպագիր տարբերակներով պետք է ներկայացվեն իրավասու  մարմիններին Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիայի առաջին օրվանից ոչ ուշ: Անհրաժեշտ փաստաթղթերը պետական մարմիններին չներկայացրած անձինք չեն ներգրավվի Ծրագրում և հնարավորություն չեն ունենա ստանալ Հիմնադրամի կողմից տրամադրվող որևէ ֆինանսական օգնություն: Ուսուցիչ-առաջնորդների

[9] ՈՒԿՊ-ի մասին ավելի մանրամասն ներկայացված է հաջորդ բաժիններում:

ակադեմիայի մեկնարկից առաջ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կարող է օգնել Ուսուցիչ-առաջնորդներին՝ պարզելու, թե որոնք են պետական մարմինների կողմից պահանջվող փաստաթղթերը: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ն իրեն իրավունք է վերապահում Ծրագրից հեռացնելու սփյուռքից ներգրավված մասնակցին, որը ժամանակին չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը:

## Երեսուն կրեդիտով Մանկավարժական դասընթաց

2022թ.-ին Հայաստանի կառավարությունն ընդունեց նոր օրենք, որը հավատարմագրված կազմակերպություններին թույլատրեց դասավանդողի հավաստագիր շնորհել 30 կրեդիտով մանկավարժական դասընթացն ավարտած մասնագետներին:
Հավաստագիրը դիմումատուներին հնարավորություն է տալիս զբաղեցնել ՀՀ բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերում գործող դպրոցներում առկա ուսուցչական կարևորագույն թափուր հաստիքները:
ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երաշխավորությամբ՝ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը տրամադրում է 30 կրեդիտով մանկավարժական դասընթացի հավաստագրեր իր Նախապատրաստական և Ամառային արագացված վերապատրաստման (նաև հայտնի որպես «Ուսուցիչների առաջնորդության ակադեմիա») շրջանավարտներին, որոնք հաջողությամբ անցնում են նաև գործնական փուլը՝ դասավանդման առաջին տարում:
30 կրեդիտով մանկավարժական դասընթացի ավարտին ներառյալ մեկ ուսումնական տարվա գործնական դասավանդումը տրվում է հավաստագիր:

## «Ուսուցիչների առաջնորդություն» մագիստրոսական ծրագիր և ինքնուրույն ուսումնառություն

Ուսուցիչների առաջնորդության մագիստրոսական ծրագիրը նախագծված է Հայաստանի և Արցախի համայնքներում աշխատող Ուսուցիչ-առաջնորդների համար, ովքեր չունեն մանկավարժի որակավորում: Մագիստրոսական ծրագրին զուգահեռ իրականացվում է մասնագիտական զարգացման ծրագիր, որի հիմնական մասն իրականացվում է ինքնուրույն ուսումնառության դասընթացների միջոցով: Ե՛Վ մագիստրոսական, և՛ մասնագիտական ծրագրի շրջանակներում ուսումնասիրվող թեմաները ներառում են.

- «Դասավանդիր Հայաստան»-ի կրթության փիլիսոփայությունը
- Կրթական հավասարությունն ու երեխաների իրավունքները դպրոցում
- Ուսումնառության պլանավորում և գնահատում
- Դասարանական մշակույթ՝ հիմնված նեյրոգիտության և սոցիալ-հուզական ուսումնառության վրա,
- Փոփոխությունների վրա հիմնված ուսումնառություն
- Դասավանդման ժամանակակից մոտեցումներ
- Դիզայն մտածողություն և ապրումակցային հարցազրույցներ,
- Գաղափարի գեներացում,
- Փոփոխության տեսություն և ՍՄԱՐԹ նպատակներ,
- Գործողությունների պլան,

- Բյուջետավորում և դրամահավաք,
- Փիչինգ,
- Զափում և գնահատում (ֆինանսավորման համար ընտրված անձանց համար)

## Տարածաշրջանային հանդիպումներ և Կրթական համաժողովներ

Ինքնուրույն ուսումնառության մոդուլներին զուգահեռ՝ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը Ուսուցիչ-առաջնորդների համար կազմակերպում է եռամսյակային հավաքներ, ինչպիսիք են տարածաշրջանային աշխատարանները և Ուսուցիչ-առաջնորդների կրթական համաժողովները): Միջոցառումները կազմակերպվում են հաշվի առնելով Ուսուցիչ-առաջնորդների մասնագիտական և ինքնազարգացման կարիքները՝ օգտագործելով կազմակերպության «Առաջնորդության հայեցակարգը», որը կենտրոնացած է մանկավարժության և առաջնորդության զարգացման վրա:
Կրթական համաժողովները նախատեսված են «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Առաջնորդության զարգացման ծրագրին միացած Ուսուցիչ-առաջնորդների համար: Համաժողովները անցկացվում են տարին առնվազն երկու անգամ: Դրանց ընթացքում «Դասավանդի՛ր, Հայաստան»-ից և առաջատար տարբեր կազմակերպություններից մասնագետներ անցկացնում են թիրախային քննարկումներ և աշխատարաններ՝ ուղղված ուսուցիչների մասնագիտական և առաջնորդական հմտությունների զարգացման, ինչպես նաև կրթական տարբեր կարիքների արձագանքմանը:

## Առաջնորդության Ֆուչինգ

Ծրագրի յուրահատկությունն այն է, որ բոլոր Ուսուցիչ-առաջնորդներին (անկախ ընտրած առաջնորդության զարգացման ուղուց) աջակցում է քոուչը՝ Առաջնորդության զարգացման ղեկավարը:
«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի երկամյա ծրագրի շրջանակներում նրանք Ուսուցիչ-առաջնորդներին տրամադրում են նպատակային և տարբերակված աջակցություն:

## Նորարարության հայեցակարգ

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը նպատակ ունի վերափոխել երկիրը կրթության միջոցով: Մենք վստահ ենք, որ մեր աշակերտներն ու ուսուցիչներն ունեն այդ փոփոխությունը բերելու բավավար ունակություններ: Այդ պատճառով մեր ծրագիրը հնարավորություն է տալիս իրականացնել նորարարական նախագծեր՝ աշակերտների առաջնորդությամբ և Ուսուցիչների առաջնորդությամբ:
Կարևոր է ընդգծել, որ աշակերտները և համայնքի բնակիչները կարևոր դեր են

խաղում վերը նշված նախագծերի համաստեղծման և իրականացման գործում: Հավաքական առաջնորդությունը մեր ծրագրի հիմնական ուղղություններից է: Նաև «Դասավանդի'ր, Հայաստանը» աջակցում է Ուսուցիչ-առաջնորդներին, որոնք ուղղակիորեն ֆինանսավորում չեն ստանում կազմակերպությունից՝ տրամադրելով օժանդակություն ֆոնդհայթայթում կազմակերպելու համար:

## Ուսուցիչների առաջնորդության հնարավորություններ ամռանը

Հանձնառության առաջին և երկրորդ տարվա միջանկյալ ամռան ընթացքում «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կշարունակի վճարել Ուսուցիչ-առաջնորդներին:

Վերջիններս իրենց հերթին պարտավոր են մասնակցել ամառային ամիսներին անցկացվող Ուսուցիչների առաջնորդության հնարավորությանը: Նախևառաջ, Ուսուցիչների առաջնորդության ակադեմիային միջոցով «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը ձգտում է իրենց հանձնառության երկրորդ տարվան պատրաստվող Ուսուցիչ-առաջնորդներին ներգրավել որպես մենթորներ՝ նոր եկող կազմի համար: Այդուհանդերձ, եթե հնարավոր չի լինում Ուսուցիչ-առաջնորդներին առաջարկել դառնալ ՈւԱԱ մենթոր՝ Աշակերտների առաջնորդության ամառային առցանց ճամբարի կազմակերպման և անցկացման համար, ապա վերջիններս պարտավորվում են իրենք կազմակերպել ամառային ամիսներին անցկացվող Ուսուցիչների առաջնորդության իրենց փորձառությունը՝ հասարակական հիմունքներով: Դրանք կարող են ներառել ինչպես կամավորական, այնպես էլ վճարովի աշխատանքներ, որոնք համահունչ են «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի՝ Ուսուցիչների առաջնորդության ուղիներին:

- Դասավանդում,
- Դպրոցի առաջնորդություն և կրթության կառավարում,
- Սոցիալական ներազդեցություն,
- Հանրային քաղաքականություն և վարչարարություն,
- Գիտություն,
- Կորպորատիվ համագործակցություն:

Ուսուցիչ-առաջնորդները կարող են նաև ընտրել ամառային ամիսներն անցկացնել իրենց համայնքներում և կենտրոնանալ համայնքային նորարարական նախագծի իրականացման վրա:

Անկախ Ուսուցիչ-առաջնորդների կողմից ընտրված ներգրավածության տարբերակից՝ այն պետք է հաստատվի Հիմնադրամի կողմից: Փորձառությունը կամ վճարովի աշխատանքի վերաբերյալ հաստատումը ստանալու համար Ուսուցիչ-առաջնորդը պետք է կազմի աշխատանքի առաջարկի նամակ և աշխատանքի նկարագրություն, որն արտացոլում է պահանջվող պարտականությունները: Եթե Ուսուցիչ-առաջնորդը որոշում է մնալ իր համայնքում, որպեսզի կարողանա կենտրոնանալ իր համայնքային նորարարական նախագծի իրականացման վրա, ապա անհրաժեշտ է ներկայացնել ծրագրի պլան, որում

ուրվագծված է, թե ինչպես է օգտագործվելու ժամանակը, ինչպես նաև տնօրենի կամ համայնքի ղեկավարի կողմից տրվող գրություն, որով հաստատվում է, որ Ուսուցիչ-առաջնորդը կշարունակի մնալ համայնքում:

Ուսուցիչ-առաջնորդները պետք է ներկա գտնվեն իրենց համայնքներում Աշակերտների առաջնորդության ճամբարի ողջ ընթացքում, եթե նրանք հանդիսանում են ՈւԱԱ մենթորներ: Այն Ուսուցիչ-առաջնորդները, որոնք չեն ընտրվել դառնալու ՈւԱԱ մենթորներ, պարտավոր են պարզել, թե ամառային արձակուրդների ընթացքում իրենց դպրոցը ինչ հատուկ պահանջներ ունի իր ուսուցիչներից : «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը Ուսուցիչ-առաջնորդներից ամառային ամիսներին պահանջում է առնվազն 3-շաբաթյա ներգրավում՝ առաջնորդության զարգացման որևէ ուղղությամբ: Հիմնադրամը խորհուրդ է տալիս հանգստի մնացած մասն օգտագործել ուժերի վերականգնման և հաջորդ ուսումնական տարվան նախապատրաստվելու համար: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ն իրավունք է վերապահում կասեցնելու դրամական օգնությունը այն դեպքում, երբ Ուսուցիչ-առաջնորդները ամռան ամիսների ընթացքում չեն հատկացրել բավարար ժամանակ փորձնակությանը, մենթորությանը, վճարովի աշխատանքին կամ համայնքներում նորարարական նախագծին:

Ամառային ամիսներին Ուսուցիչների առաջնորդության փորձառության վերջում Ուսուցիչ-առաջնորդը պետք է ներկայացնի երաշխավորագիր իր ԱՁՂ-ին՝ իր ամառային փորձնակության կամ վճարովի աշխատանքի վերաբերյալ: Կարող են նաև ներկայացնել հաշվետվություն համայնքային նորարարական նախագծի առաջընթացի մասին:

## Tech4Armenia (T4A)

Հիմնադրամի կողմից մշակված եւ ներդրված Tech4Armenia ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր կամ T4A) վրա տարածվում են սույն ձեռնարկի կարգավորումները եւ դրույթները: Հաշվի առնելով դրա փորձարարական բնույթը ՝ սահմանված են հետեւյալ կարգավորումները (սույն գլխի եւ ձեռնարկի միջեւ տարբերությունների դեպքում գերակա են համարվում սույն գլխում սահմանված դրույթները):

T4A ծրագրի շրջանակներում ընդգրկվում են SS ոլորտի կազմակերպություններում աշխատող անձիք (այսուհետ՝ T4A Ուսուցիչ-առաջնորդներ)՝ ստանձնելով երկամյա հանձնառություն: Ծրագրում ներգրավվելուց հետո T4A Ուսուցիչ-առաջնորդները պահպանում են իրենց հիմնական աշխատանքը ոչ ամբողջական դրույքով եւ/կամ ճկուն աշխատաժամանակով՝ հեռավար ձեւաչափով (այլ վայրից աշխատելու հնարավորությամբ), հնարավություն ունենալով հաստատվել այն համայնքում, որի դպրոցում փաստացի դասավանդելու են: T4A Ուսուցիչ-առաջնորդներից ակնկալվում է շաբաթական 7 ժամ դասավանդել դպրոցում, ինչպես նաեւ երկու ժամ հատկացնել վերապատրաստման եւ մասնագիտական զարգացման գործընթացին: Արտադասարանային խմբակների, ինչպես նաեւ դասավանդմանը

նախապատրաստվելու համար Ուսուցիչ-առաջնորդները կունենան ժամանակային ճկունություն՝ իրենց համար առավել հարմար եւ արդյունավետ տարբերակով գործընթացը կազմակերպելու համար:

T4A Ուսուցիչ առաջնորդները պետք է մասնակցեն Ուսուցիչ-առաջնորդների ամառային ակադեմիային: Այս դեպքում ակադեմիան կերկարաձգվի մինչեւ ինը շաբաթ, ինչը նշանակում է, որ երեք շաբաթվա փոխարեն Ուսուցիչ-առաջնորդները կմասնակցեն միայն մեկ շաբաթ տեւող ամբողջական զբաղվածություն ակնկալող դասընթացների, իսկ մնացյալ ութ շաբաթների ընթացքում դասընթացները օրական կտեւեն առավելագույնը չորս ժամ: Այս դեպքում T4A Ուսուցիչ-առաջնորդները կսկսեն իրենց վերապատրաստումը մյուսներից երկու շաբաթ շուտ:

Կարեւոր է նշել, որ բոլոր դասընթացները կկազմակերպվեն առավոտյան, որպեսզի մասնակիցները կարողանան օրվա երկրորդ հատվածում կենտրոնանալ իրենց աշխատանքի, ինչպես նաեւ ծրագրի հետ կապված առաջադրանքների վրա: Նախանշված ինը շաբաթներից միայն մեկ շաբաթն է, որին անհրաժեշտ կլինի մասնակցել առկա ձեւաչափով: Մնացած ընթացքում վերապատրաստումը իրականացվելու է առցանց/ հեռավար տարբերակով: Հիմնադրամը խրախուսում է T4A Ուսուցիչ-առաջնորդներին ստեղծել հնարավորություններ, որոնք աշակերտներին կկապեն այն գործունեությանը, որ իրենք իրականացնում են իրենց աշխատավայրում: Այսպես, ծրագրավորողները կարող են դասերից հետո իրականացնել ծրագրավորման կուրսեր աշակերտների համար, ինչպես նաեւ աշակերտներին օժանդակել SS ուղղվածությամբ նորարարական ծրագրերի իրականացման հարցում: Նման գործունեությունը Ծրագրի շրջանակներում դիտվում է որպես արտադասարանական դասընթացների կազմակերպում եւ բավարարում է Ծրագրի առաջադրած պահանջներին:

## III.«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Ծրագրի շրջանակներում մասնակցի հանձնառությունները

### Ուսուցիչ-առաջնորդից ակնկալվող վարքը

Դառնալով Ուսուցիչ-առաջնորդ՝ մասնակիցները համալրում են ուսուցիչների շարքերը և համարվում են դպրոցի աշխատող: Հիմանդրամն ակնկալում է, որ Ուսուցիչ-առաջնորդները կցուցաբերեն պրոֆեսիոնալիզմ աշակերտների, նրանց ընտանիքների, ուսուցչական կազմի և այլ անդամների, ինչպես նաև «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի անձնակազմի հետ հարաբերություններում: Այն հանգամանքը, որ Հիմնադրամի հետ համատեղ աշխատանքի շնորհիվ Ծրագրի մասնակիցները դառնում են ավելի լայն կրթական բարեփոխումների, այն է՝ կրթական հնարավորությունների հավասարության շարժման մի մասը, ավելի է մեծացնում Հիմնադրամի ակնկալիքները Ուսուցիչ-առաջնորդի դրսևորած ընդհանուր կեցվածքի և ողջամիտ դատողության վերաբերյալ: Ըստ այդմ՝ մենք ակնկալում ենք, որ Ուսուցիչ-առաջնորդները կգործեն պրոֆեսիոնալիզմի ընդունված ընկալումներին համապատասխան, որը, ի թիվս այլ տարրերի,

ենթադրում է նաև գործունեությանը համապատասխան հանդերձանք, պարտաճանաչություն, վերջնաժամկետների պահպանում և պատշաճ հաղորդակցություն:

## Քաղաքական գործունեություն

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ն անկախ կրթական հիմնադրամ է, որը չի հարում ոչ մի քաղաքական ուղղության և նվիրված է կրթական գերազանցության և համայնքային նորարարության միջոցով Հայաստանի ապագայի կառուցման գործին: Որպես դասավանդողներ և հանրային ծառայողներ՝ Ուսուցիչ-առաջնորդների քաղաքական չեզոքությունը անկյունաքարային գործոն է՝ դասարաններում և համայնքում լիարժեք և ներառող կրթական գործունեության համար, որտեղ հասարակական կյանքի բոլոր շերտերն ու աշխարհայացքները ներկայացնող երեխաներն ազատ կզգան՝ բաց և ազնիվ կերպով ներգրավվելու ուսումնառությանը: Հայաստանում կրթական անհամաչափության վերացման մեր առաքելության մեջ հաջողելու հրամայականներից է Հայաստանի Հանրապետության կառավարության հետ Հիմնադրամի համագործակցությունը՝ անկախ իշխող քաղաքական կուսակցությունից: Բացի այդ, կարևոր է նաև Ուսուցիչ-առաջնորդների իրազեկությունն այն մասին, որ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հաստատում է գործընկերություններ, ընդունում նվիրատվություն, դրամական և ոչ դրամական աջակցություններ տարբեր քաղաքական և ոչ քաղաքական ուղղությունների հարող անհատներից, հիմնադրամներից և ընկերություններից, հանրային և մասնավոր մարմիններից: Քաղաքական չեզոքությունը կարևոր է Հիմնադրամի ֆինանսական կայունության և ֆինանսական միջոցների հայթայթման նկատառումներով:

Որպես Հիմնադրամի շահառուներ Ուսուցիչ-առաջնորդները պարտավոր են հարգանք ցուցաբերել կազմակերպության քաղաքական չեզոքության սկզբունքի հանդեպ՝ Ծրագրին ընթացքում ցանկացած գործունեության մեջ ներգրավվելիս: Այդ նպատակով Ուսուցիչ-առաջնորդները պետք է առաջնորդվեն ստորև ներկայացված ուղեցույցով.

- Ուսուցիչ-առաջնորդները սահմանափակված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և ապահովում են կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը: Քաղաքական գործունեության մեջ ներգրավումը կամ ուղղորդված պրոպագանդման քայլերը կրթական հաստատություններում արգելված են:
- Ուսուցիչ-առաջնորդները կարող են ներգրավվել քաղաքական արշավներում միայն իրենց անունից և աշխատանքային և/կամ Ծրագրին մասնակցության ժամերից դուրս ժամանակահատվածում: Եթե որևէ Ուսուցիչ-առաջնորդ գրանցվում է որպես քաղաքական արշավի կամ նախաձեռնության աջակից, ապա դա կարող է կատարվել՝ առանց նշելու այն կազմակերպությունը, որտեղ

նա աշխատում է: Հակառակ դեպքում վերջինս պարտավոր է տրամադրել պարզաբանում առ այն, որ իր գործողություններն ու հայտարարությունները ներկայացնում են իր սեփական և ոչ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի դիրքորոշումները:

- Ուսուցիչ-առաջնորդները չպետք է ընդգրկվեն քաղաքական արշավների մեջ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի պաշտոնական հրապարակումների միջոցով, կամ օգտագործելով «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի անունն ու ապրանքանիշը, այդ թվում՝ խորհրդանշաններ, շապիկներ, գլխարկներ, պայուսակներ, ինքնակպչող պիտակներ կամ որևէ այլ հանդերձանք կամ տարրեր, որոնք առնչվում են «Դասավանդի՛ր, Հայաստան»-ին:
- Հիմնադրամի շինությունների կամ ռեսուրսների օգտագործումը ի աջակցություն քաղաքական պայքարի որևէ թեկնածուի, կուսակցության, հանրաքվեի կամ քաղաքական ակցիայի հանձնաժողովի, որը կարող է ստեղծել տպավորություն, թե «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը սատարում է որևէ թեկնածուի կամ դիրքորոշման, արգելվում է: Ռեսուրսների օգտագործման արգելքը ներառում է նաև (1) «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի գրենական պիտույքների, լոգոյի, կնիքի, պաշտոնական էլեկտրոնային փոստի, հեռախոսների, համակարգիչների, տպիչ և պատճենահանման սարքերի օգտագործումը և (2) փոստային կամ էլեկտրոնային հասցեների, գրասենյակային տարածքների, հեռախոսների կամ Հիմնադրամի այլ ռեսուրսների օգտագործումը,
- Որպես Հիմնադրամի բրենդի դեսպաններ՝ Ուսուցիչ-առաջնորդներից ակնկալվում է դրսևորել ողջամտություն առցանց հրապարակումներ կատարելիս: Եթե «Դասավանդի՛ր, Հայաստանը» ունի օբյեկտիվ և ողջամիտ համոզում, որ Ուսուցիչ-առաջնորդների կողմից սոցիալական մեդիայի հարթակներում, հեռուստատեսությամբ կամ լրատվական գործակալության միջոցով կատարված մեկ կամ մեկից ավելի հրապարակումներ ստեղծում են տպավորություն, թե «Դասավանդի՛ր, Հայաստանը» կարող է հավանություն տալ որևէ թեկնածուի կամ հանրաքվեի որևէ արդյունքի, ապա Հիմնադրամը կարող է պահանջել՝ հեռացնել նման հրապարակումը և/կամ միևնույն հարթակով հրապարակել ծանուցում առ այն, որ արտահայտված մոտեցումները վերագրվում են հեղինակին և չեն ներկայացնում «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի տեսակետը:

Ուսուցիչ-առաջնորդներից ակնկալվում է Ծրագրի իրականացման ողջ ընթացքում, այդ թվում Ծրագրի ավարտից հետո ցանկացած նախաձեռնության շրջանակներում, որտեղ հանդես են գալիս որպես Հիմնադրամի շահառու, գործել Հիմնադրամի հիմնարար արժեքներին և սկզբունքներին համապատասխան: Այդ սկզբունքների խախտման դեպքերը կդիտարկվեն առանձին-առանձին և կարող են հանգեցնել Ուսուցիչների առաջնորդության ծրագրից Ուսուցիչ-առաջնորդի հեռացման: Հիմնադրամն իրեն իրավունք է վերապահում կասեցնելու Ուսուցիչ-առաջնորդի դրամական օգնությունը և (կամ) հեռացնելու Ծրագրում ներգրավված այլ անձանց,

եթե նրա/նրանց քաղաքական գործունեությունը (այդ թվում սոցիալական հարթակներում) վնասում է Հիմնադրամի բարի համբավն ու հեղինակությունը :

## Գաղտնիության և տեղեկությունների չբացահայտման քաղաքականություն

Տեղեկատվական աղբյուրները մեծ կարևորություն ունեն «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի համար: Թեև Հիմնադրամը կարևորում է տեղեկությունների բաց և թափանցիկ շրջանառությունը Հիմնադրամի հաջող գործունեության համար, այնուամենայնիվ անհրաժեշտ է պահպանել ծրագրի գործողություններին, դիմորդներին, Ուսուցիչ-առաջնորդներին, անձնակազմին, Նվիրաբերողներին և ֆինանսներին վերաբերող որոշակի տվյալների գաղտնիությունը:

Ծրագրի ընթացքում Ուսուցիչ-առաջնորդներին հասանելի կլինեն տեղեկությունների որոշ աղբյուրներ, ինչպիսիք են տվյալների բազան կամ ներքին հաղորդակցությունները: Ուսուցիչ-առաջնորդները պարտավոր են զգուշորեն օգտագործել այդ տեղեկությունները, չտարածել դրանք երրորդ անձանց շրջանում և ճշտումներ անել իրենց Առաջնորդության զարգացման ղեկավարների հետ՝ նախքան այդ նյութերով կիսվելը կամ դրանցում փոփոխություններ կատարելը:

## Երեխաների իրավունքները և մեր աշակերտների պաշտպանությունը

Բարեվարքությունը Ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում ընկած է Հիմնադրամի դասարանային գործունեության հիմքում: Այս հարաբերության կառուցումը մեծապես վստահված է ուսուցչին, որն իր հերթին կրում է մենթորի, դասավանդողի և գնահատողի պատասխանատվություն և լիազորություններ: Այս հարաբերություններին բնորոշ ինստիտուցիոնալ անհավասարությունը բարձրացնում է աշակերտների խոցելիության աստիճանն ու հարկադրանքի հավանականությունը: Ներկայում և ապագայում Ուսուցիչ-առաջնորդի կողմից ուսուցման, խորհրդատվության կամ աշակերտի նկատմամբ ուղղակի վերահսկողության պատասխանատվություն ստանձնելու պահից սկսած՝ նրանց հարաբերություններում չափազանց մտերմությունը համարվում է անհարկի, և դրանից անհրաժեշտ է խուսափել:

Հարկադրանքի, ճշման հավանականությունը մեծացնելուց զատ նման հարաբերությունները վտանգում են նաև կրթական գործընթացը՝ առաջացնելով շահերի բախում և կարող են խաթարել ուսումնական միջավայրը մյուս աշակերտների համար: Եվ վերջապես, այսպիսի իրադրությունները կարող են Ուսուցիչ-առաջնորդին, իր տեղակայման դպրոցին և «Դասավանդի՛ր, Հայաստան»-ին կանգնեցնել սեռական բնույթի ճնշումներից և սեռական խտրականությունից երեխաների պաշտպանության օրենքների խախտման պատասխանատվության առջև: Նույնիսկ այն դեպքերում, երբ աշակերտը հասել է չափահասության տարիքի (18 տարեկան), Հիմնադրամը գտնում է, որ չափազանց

մտերմությունն ապակառուցողական է ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների համար և միանգամայն հակասում է Հիմնադրամի արժեքներին:

Հետևաբար, Ուսուցիչ-առաջնորդները պարտավոր են խուսափել որևէ աշակերտի հետ (ներառյալ չափահասության տարիքի հասած աշակերտների) չափազանց մտերիմ հարաբերություններից: Հիմնադրամն ակնկալում է, որ Ուսուցիչ-առաջնորդը ողջամիտ կգտնվի իր աշակերտների հետ շփման մեջ՝ լինի դա դպրոցում, թե դպրոցից դուրս, դասերից հետո, ոչ աշխատանքային օրերին կամ արձակուրդների ընթացքում: Սա բխում է ինչպես երեխաների պաշտպանության ուղղությամբ Հայաստանում վարվող քաղաքականությունից, այնպես էլ Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի հռչակագրի պահանջներից:

Ավելին, երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի հռչակագրում ներառված է նաև երեխաների պաշտպանության իրավունքը բռնությունից, որը ներառում է բռնության բոլոր տեսակները (ֆիզիկական, հոգեբանական, սեռական, արհամարհանք, տնտեսական ): «Բռնություն» եզրույթը ներառում է (առանց սահմանափակվելու թվարկվածներով) ծեծը, հարվածը, ճմկտոցը, ապտակը, ոտքով հարվածը, բռունցքով հարվածը կամ որևէ տեսակի ագրեսիվ հպումը, ինչպես նաև վերբալ և հոգեբանական բոլոր տեսակի ճնշումները, որոնք վնասում են երեխայի սոցիալական, հուզական, ճանաչողական և ուսումնական զարգացմանը: Բռնության կիրառումը համարվում է Հիմնադրամի հիմնարար արժեքների ակնհայտ ոտնահարում և անհամատեղելի է մեր առաքելության հետ: Ուստի, երեխային ուղղված ցանկացած բռնություն համայնքում, դպրոցում կամ դասարանում և այլուր, հիմք է հանդիսանում Ուսուցիչ-առաջնորդի Ծրագրից անհապաղ հեռացման և օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվության միջոցների կիրառման համար:

## Մտավոր սեփականության և գնահատման գործընթացների բարեվարքության հանձնառություն

Որպես կրթական գերազանցության ձգտող կազմակերպություն՝ Հիմնադրամը խստորեն կարևորում է ինչպես մտավոր սեփականության, այնպես էլ գնահատման գործելակերպերի բարեվարքությունը : Ուսուցիչների առաջնորդության ծրագիր ընդունվող անձանց համար, ինչպես ՈՒԱԱ-ի այնպես էլ Ծրագրի ողջ ընթացքում՝ ներառյալ Ինքնուրույն ուսումնառության մոդուլները, **գրագողությունը, աշխատանքների կեղծումը,** (օրինակ՝ մեկ ուրիշի աշխատանքի կրկնօրինակումը կամ «համահեղինակումը»), ինչպես նաև ցանկացած այլ բնույթի կեղծիք, կհանգեցնի կարգապահական վարույթի,որի շրջանակներում, գնահատելով խախտման բնույթը, կարող է կիրառվել նաև տուգանք, ընդհուպ մինչև ծրագրից հեռացում՝ հաշվի առնելով, որ խախտվում են կազմակերպության Հիմնարար արժեքները:

Աշակերտների ցուցանիշները արտացոլող տվյալների պարագայում, գնահատման և քննական արդյունքների նենգափոփոխումը կարող է աշակերտին և (կամ) ուսուցչին զրկել այն գործիքներից, որոնք անհրաժեշտ են այնպիսի ռազմավարությունների մշակման համար, որոնք կապահովեն աշակերտների կողմից իրենց կրթական ներուժի լիարժեք դրսևորումը: Ավելին, որևէ համայնքում արձանագրված խաբեության դեպքերը կարող է ստվերել այլ համայնքներում արձանագրված իրական առաջադիմությունը: Այսպիսի դրսևորումները կարող են ամրապնդել այն համոզումը, թե ցածր եկամուտ ունեցող սոցիալական շերտեր ներկայացնող երեխաներն ունակ չեն ապահովելու բարձր առաջադիմություն: Նման համոզումն ինքնին խարխլում է կրթական հավասարության շարժման հրամայականն առհասարակ: Գնահատման և քննական թեստերի արդյունքների նենգափոփոխումը անօրինական է և ենթակա է պատժի՝ ոլորտը վերահսկող պետական լիազոր մարմնի կողմից: Հիմնադրամն անհրաժեշտ է համարում գնահատման և քննական խարդախությունների բոլոր ձևերը և լրջորեն է վերաբերում դրան առնչվող մեղադրանքներին: Գնահատման և քննական խարդախությունների հաստատված մեղադրանքները կարող են հանգեցնել Ուսուցիչների առաջնորդության ծրագրից Ուսուցիչ-առաջնորդի անհապաղ հեռացմանը և միջադեպի մասին համապատասխան մարմիններին հաղորդում ներկայացնելուն:

## Տվյալների հավաքագրման և վերլուծության հանձնառություն

Ուսուցիչ-առաջնորդի երկամյա գործունեության ընթացքում նրանից կպահանջվի լրացնել հարցումներ, որոնք նախատեսված են «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի անձնակազմի հետ հետադարձ կապ պահպանելու համար՝ Հիմնադրամի աշխատանքը բարելավելու նպատակով: Բոլոր Ուսուցիչ-առաջնորդներից պահանջվում է լրացնել այդ հարցումները ազնվորեն և կառուցողական կերպով:

Ծրագրի ազդեցության չափման պահանջներից է նաև աշակերտների շրջանում իրականացվող հարցումները, որը կազմակերպվում է Ուսուցիչ-առաջնորդների կողմից: Այս հարցումը օգնում է և՛ Ուսուցիչ-առաջնորդներին, և՛ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի աշխատակազմին հասկանալ աշակերտների ընկալումները իրենց ուսումնական միջավայրի վերաբերյալ և ձեռնարկել համապատասխան փոփոխություններ:

Եվ վերջապես, Ուսուցիչ-առաջնորդներից պահանջվում է յուրաքանչյուր կիսամյակ Հիմնադրամին ներկայացնել տվյալներ՝ աշակերտների ցուցաբերած արդյունքների վերաբերյալ: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ն օգտվում է տվյալների պահպանման տարբեր հարթակներից, ինչպիսին է «Salesforce»-ը, որպեսզի կարողանա գնահատել իր ներազդեցությունը տարբեր ժամանակահատվածներում: Այս տվյալներից ելնելով է, որ Հիմնադրամը կատարում է եզրակացություններ իր կատարած աշխատանքի վերաբերյալ, և հնարավորություն է ունենում գնահատել Հիմնադրամի

ունեցած ներազդեցությունը: Ուսուցիչ-առաջնորդներից ակնկալվում է մշտապես կատարել սույն հանձնառությունը ազնիվ և թափանցիկ կերպով:

## Սոցիալական մեդիայում պատշաճ ներկայացվածության հանձնառություն

Որպես Հիմնադրամի բրենդի դեսպան և տեղակայման համայնքի անդամ՝ յուրաքանչյուր Ուսուցիչ-առաջնորդ կարևոր դերակատարություն ունի կրթական հնարավորությունների ընդլայնման և դրանց հավասարության ապահովման վերաբերյալ քննարկումներում: Հաշվի առնելով, որ սոցիալական մեդիան կարող է մարդկանց մոտ ձևավորել պատկերացումներ աշակերտների, նրանց ընտանիքների, դպրոցների, համայնքների և «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի մասին՝ դրանցում ներկայացվածությունը ունիառավել մեծ կարևորություն:

Անկախ այն բանից, թե Ուսուցիչ-առաջնորդն իր մտքերով ու փորձով կիսվում է Թվիթերում, Ֆեյսբուքում, Ինստագրամում, անձնական բլոգում թե այլ հարթակում, նրանից ակնկալվում է դա անել այնպես, որ խորապես հարգալից լինի աշակերտների, նրանց ընտանիքների, համայնքների, դպրոցի գործընկերների, «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի՝ որպես կազմակերպության հանդեպ: Հարգալից վերաբերմունքը չի սահմանափակում Ուսուցիչ-առաջնորդի կողմից կարծիքի արտահայտումը և ճշմարտության բարձրաձայնումը, սակայն պահանջում է, որ դրանք արտացոլեն բարեվարքության և պարկեշտության հիմնարար արժեքները: Ընտանիքների, դպրոցների, պետության և համայնքների նկատմամբ անհարգալից որևէ մեկնաբանության կամ նյութի նույնիսկ հումորային հրապարակումը նշանակում է, որ Ուսուցիչ-առաջնորդը չի հետևում Հիմնադրամի հիմնարար արժեքներին, ուղղակիորեն խախտում է բազմազանության նկատմամբ Հիմնադրամի մոտեցումը և կարող է հիմք ծառայել դրամական օգնության կասեցմամբ ՈՒԿՊ ներգրավվելու ապա նաև Ուսուցիչների առաջնորդության ծրագրից հեռացման համար:
Սոցիալական հարթակների պատշաճ ներկայացվածության համար առաջարկում ենք հետևել սույն Ձեռնարկում նշված կետերին:

## Շարունակական ուսուցման և աճի հանձնառություն

Ուսուցիչ-առաջնորդից ակնկալվում է հետևողականորեն զարգացնել իր հմտությունները՝ դառնալու հնարավոր ամենալավ ուսուցիչը աշակերտների համար և լավագույն առաջնորդը համայնքի համար: Դրան աջակցելու համար «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը պատրաստ է տրամադրել մասնագիտական զարգացման բազմաթիվ հնարավորություններ: Թեև Հիմնադրամը խորապես համոզված է, որ Ուսուցիչ-առաջնորդն ինքը պետք է ընտրի հմուտ ուսուցիչ դառնալու իր զարգացման ուղին, այնուամենայնիվ, Հիմնադրամի հանձնառությունը աշակերտների նկատմամբ պահանջում է, որ Հիմնադրամը ևս

ունենա որոշակի ներդրում Ուսուցիչ-առաջնորդի հմտությունների զարգացման գործում: Հետևաբար, Հիմնադրամն ակնկալում է Ուսուցիչ-առաջնորդի մասնակցությունը **Ծրագրի բոլոր միջոցառումներին՝ Դասավանդողների համաժողովներ, Ուսումնական հանդիպումներ, առցանց մասնագիտական վեբինարներ, աշխատարաններ և Ծրագրի բովանդակ իրականացման աշխատանքներին**:

Հաշվի առնելով Ծրագրի յուրահատկությունը, Ուսուցիչ-առաջնորդի համար պարտադիր է մասնագիտական բոլոր վերապատրաստումներն անցնել, հետևաբար, պարբերական բացակայությունները կարող են հիմք ծառայել տրամադրվող ֆինանսական օգնության կասեցմամբ ՈՒԿՊ-ի մեջ ներգրավման (բացթողումների լրացման նպատակով) կամ Ծրագրից նրա հեռացման համար: Ուսուցիչ-առաջնորդներին վերջնաժամկետների և մասնակցության համար պարտադիր միջոցառումների մասին կծանուցվի դրանց մեկնարկից երկու շաբաթից մինչև մեկ ամիս շուտ՝ կապված միջոցառման բնույթից:

Այս հանձնառության մեջ մենք կարևորում ենք «Բարեվարքության» և «Մտավոր սեփականության» արժեքների պատշաճ դրսևորումը:

## Արտադասարանային ծրագրերի հանձնառություն

Լրիվ դրույքով աշխատող ուսուցիչ լինելուց զատ (գործընկեր դպրոցներից մեկում դասավանդելով շաբաթական առավելագույնը 22 ժամ ծանրաբեռնվածությամբ և համայնքում գտնվելով առնվազն 5 օր (ցանկալի է նաև ոչ աշխատանքային օրերին)՝ բոլոր Ուսուցիչ-առաջնորդները պարտավոր են պլանավորել և պարբերաբար իրականացնել արտադասարանային միջոցառումներ իրենց տեղակայման դպրոցներում՝ սկսած հոկտեմբերից, ամբողջ Ծրագրի ընթացքում: Այդ միջոցառումները կարող են ներառել, բայց սահմանափակված չեն հետևյալով[10].

- «Փոփոխությունների հենքով ուսումնառություն»
- Ուսումնական խմբակներ (բանավեճի, պատմության, գիտական կամ այլ ակումբներ)
- Սպորտային խմբակներ
- Նախասիրական խմբակներ (շախմատ, շյուղագործություն, բուսաբուծություն և այլն)
- Օլիմպիադաներ և ինտելեկտուալ մրցութային խաղեր
- Առարկայական արտադասարանային պարապմունքներ
- Ռազմավարական գործընկերների հետ նախապես հաստատված խմբակներ:

Բոլոր Ուսուցիչ-առաջնորդներից ակնկալվում է յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում առնվազն մեկ անգամ վարել «Փոփոխությունների հենքով ուսումնառություն» մոտեցմամբ նախագիծ: Փոփոխությունների հենքով ուսումնառություն կազմակերպելուց զատ, Ուսուցիչ-առաջնորդները կարող են

[10] «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը գործընկերային հարաբերություններ ունի այլ կազմակերպությունների հետ:

աշխատել իրենց դպրոցների հետ՝ ներկայացնելով արտադասարանային գործունեության այլ առաջարկներ:

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ում կարևորվում է այն, որ ուսուցիչները բավարար ժամանակ հատկացնեն ուսումնական նյութի արդյունավետ յուրացմանը: Հիմնադրամը նաև կարևոր է համարում ուսուցման և ներազդեցության գնահատումը: Այդ նպատակով մեր Ուսուցիչ-առաջորդները պետք է նախատեսեն առնվազն 60 րոպե նախապատրաստություն՝ նույնքան տևողությամբ դասաժամի համար: Ուստի, ցանկալի չէ Ուսուցիչ-առաջորդների կողմից շաբաթական 15 ժամից ավելի դասավանդումը: Միևնույն ժամանակ չի թույլատրվում ուսումնական հաստատությունում դասավանդել շաբաթական 22 ժամից ավելի՝ բացառությամբ Տարածաշրջանային ղեկավարի կողմից հաստատված դեպքերի: Մնացած ժամանակը նրանք պետք է նվիրեն արտադասարանային գործունեությանը և (կամ) իրականացնեն Փոփոխությունների հենքով ուսումնառություն:

Անհրաժեշտ է, որ մեր Ուսուցիչ-առաջորդները ջանք ու եռանդ ներդնեն իրենց աշակերտների ուսումնառության և զարգացման կարիքները ապահովելու համար: Ըստ այդմ՝ Հիմնադրամն ընդունում է, որ դասավանդման ժամանակացույցը կարող է փոփոխվել շաբաթական՝ կախված տվյալ կիսամյակից: Ստորև բերված աղյուսակը ուղեցույց է Ուսուցիչ-առաջորդների կողմից շաբաթական 40-ժամյա աշխատանքին համարժեք զբաղվածություն ապահովելու համար:

| **Դասաժամեր** | **Պլանավորման ժամեր** | **«Փոփոխությունների վրա հիմնված ուսումնառություն» և արտադպրոցական գործունեություն** |
|---|---|---|
| 1 - 6 դասաժամ* | 1 - 6 ժամ դասապլանավորում | 28 - 38 ժամ** շաբաթական (ներառյալ՝ նախապատրաստությանը հատկացվող ժամանակը) |
| 7 - 11 դասաժամ | 7 - 11 ժամ դասապլանավորում | 18 - 26 ժամ շաբաթական (ներառյալ՝ նախապատրաստությանը հատկացվող ժամանակը) |
| 11 - 15 դասաժամ | 11 - 15 ժամ դասապլանավորում | 10 - 18 ժամ շաբաթական (ներառյալ՝ նախապատրաստությանը հատկացվող ժամանակը) |
| 16 - 22** դասաժամ | 16 - 22 ժամ դասապլանավորում | 2 - 8 ժամ շաբաթական (ներառյալ՝ նախապատրաստությանը հատկացվող ժամանակը) |

* Ուսուցիչ-առաջորդների մեծ մասից ակնկալվում է դասավանդել շաբաթական առնվազն 11 ժամ (նվազագույն սահմանաչափ): Արցախում և Հայաստանի որոշ համայնքներում, ինչպես նաև դասավանդվող առարկայի առանձնահատուկություններից ելնելով, ժամային նվազագույն սահմանաչափի հնարավորություն կարող է չլինել: Նման դեպքերում Ուսուցիչ-առաջորդները պետք է անցկացնեն «Փոփոխությունների վրա հիմնված ուսումնառություն» (օրինակ՝ դա իրականացնելով տարբեր դպրոցներում, որպեսզի լրացնեն Ծրագրի պահանջած սահմանաչափը):
** «Փոփոխությունների վրա հիմնված ուսումնառության» մեկ ժամը համարժեք է դասարանային ուսուցման 40 րոպեին:

## Ծնողների կամ օրինական ներկայացուցիչների ներգրավման հանձնառություն

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կարևորում է աշակերտի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների ներգրավվածությունը երեխաների ուսումնական և անձնական կյանքում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դպրոցներում օրինական ներկայացուցիչների ներգրավվածությունը բարելավում է աշակերտների ակտիվությունը դպրոցական կյանքում և նպաստում է նրանց ընդհանուր առաջադիմությանը: Այդ նպատակով Ուսուցիչ-առաջնորդներից ակնկալվում է Ծրագրի ողջ ընթացքում ապահովել ծնողների կամ օրինական ներկայացուցիչների ներգրավումը ուսումնառության գործընթացում: Այդ ներգրավվածությունը ենթադրում է հեռախոսազրույցներ, տնայցեր, ծնողական ժողովներ, ծնողների կողմից դասալսումներ, նրանց մասնակցություն դասերին և դպրոցի միջոցառումներին և այլն:

Ուսուցիչ-առաջնորդներից պահանջվում է կազմել ծնողների կամ օրինական ներկայացուցիչների ներգրավման պլան յուրաքանչյուր տարեսկզբին՝ ուրվագծելով այդ ուսումնական տարում նրանց ներգրավման գործողությունների ծրագիրը: Առաջնորդության զարգացման ղեկավարները պետք է հետևեն այդ գործողությունների իրականացմանը ողջ տարվա ընթացքում՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին Ուսուցիչ-առաջնորդների կողմից ներկայացվող արդյունքների հաշվետվության միջոցով:

Շատ կարևոր է, որ Ուսուցիչ-առաջնորդները Ծրագրի ողջ ընթացքում շարժվեն Հիմնադրամի բարեվարքության և համեստության հիմնարար արժեքներին համապատասխան՝ այդ արժեքները հատկապես կարևորելով աշակերտների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների և ընտանիքի մյուս անդամների հետ հարաբերություններում:

## Նորարարությունների հանձնառությունը

2050 թվականի խոստումն իրագործելու համար շատ կարևոր է, որ Ուսուցիչ-առաջնորդները, Ծրջանավարտ-դեսպանները և կազմակերպության անձնակազմը սատարեն աշակերտներին և նրանց համայնքներին՝ տեղական մակարդակում նորարարությունների կյանքի կոչման ուղղությամբ: Այդ

նպատակով Ծրագրի առաջին տարում ակնկալվում է, որ Ուսուցիչ-առաջնորդները «Փոփոխությունների վրա հիմնված ուսումնառության» եղանակով կնախագծեն Աշակերտների առաջնորդությամբ նորարարական ծրագրեր, անհրաժեշտության դեպքում կկազմակերպեն հանրային ֆինանսավորում և կհամակարգեն այդ ծրագրերը: Կարևոր է նկատի ունենալ, որ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը սկսած 2021թ.-ից Ուսուցիչ-առաջնորդներին տրամադրվող ֆինանսական օգնության չափը հաշվարկելիս, հաշվի է առել նաև այն, որ բոլոր Ուսուցիչ-առաջնորդները տիրապետեն առնվազն մինիմալ միջոցների՝ աջակցելու համայնքներում աշակերտների կողմից «Փոփոխությունների վրա հիմնված ուսումնառության» միջոցով փոքրածավալ նորարարական նախագծերի իրականացմանը:
Միևնույն ժամանակ, առաջին տարվա ընթացքում Ուսուցիչ-առաջնորդները կանցնեն Համայնքներում նորարարական նախագծերին վերաբերող մոդուլների շարք, իսկ մինչև նույն տարվա վերջը բոլոր Ուսուցիչ-առաջնորդները պարտավոր են ներկայացնել Համայնքներում նորարարական նախագծերի իրականացման առաջարկներ: Ներկայացվածներից կընտրվեն որոշ թվով նախագծեր, որոնց ֆինանսավորում կհատկացվի «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից: Այդուհանդերձ, ինքնուրույն կերպով ֆինանսական միջոցների հայթայթումը և նախագծի իրականացումը ակնկալվում է բոլոր Ուսուցիչ-առաջնորդներից: Երկամյա ծրագիրն ավարտելուց հետո դառնալով Ծրջանավարտ-դեսպաններ՝ Ուսուցիչ առաջնորդներն իրավունք կունենան միանալու «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի «Կայծ» սոցիալական նորարարությունների ինկուբատորին՝ իրենց նախագծերն ամբողջ երկրով ընդլայնելու համար:

Համայնքներում նորարարական նախագծերի իրականացումը կարող է համարվել Ուսուցիչ-առաջնորդների արտադպրոցական կամ «Փոփոխությունների վրա հիմնված ուսումնառության» պարտավորությունների կատարում, եթե այն հստակ պլանավորված է և հաստատված Առաջնորդության զարգացման ղեկավարի կողմից:

## «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի նախաձեռնած դրամահավաքներին աջակցության հանձնառություն

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում Ուսուցիչ-առաջնորդների աջակցության հիմնական ուղղություններն են.

- Աուդիովիզուալ նյութերի և տվյալների պատրաստում,
- Ստեղծագործ բովանդակային նյութերի և ֆինանսական միջոցների հայթայթման գաղափարների առաջարկների ներկայացում,
- Նվիրաբերողների (նաև հեռանկարային) հյուրընկալում իրենց համայնքներ՝ նրանց ուղեկցելով և ցուցադրելով իրենց աշխատանքի արդյունքները:

Ուսուցիչ-առաջնորդների կողմից անհատապես նախաձեռնվող դրամահավաքային միջոցառումների դեպքում նրանցից պահանջվում է.

- ֆոնդհայթայթումը «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի հետ ուղակիորեն չկապել՝ որևէ կերպ նշելով կազմակերպության անունը
- Ներկայացնել ճշգրիտ և թափանցիկ հաշվետվություն բոլոր ստացված միջոցների վերաբերյալ,
- «Դասավանդի՛ր, Հայաստան»-ին, ինչպես նաև Նվիրաբերողին և աջակիցներին պարբերաբար տրամադրել ընթացիկ թարմացվող տեղեկություններ իրենց ծրագրերի մասին,
- «Դասավանդի՛ր, Հայաստան»-ին տեղեկացնել իրենց ֆինանսավորման աղբյուրների մասին և չներքաշվել կասկածելի գործարքների մեջ, և դրանցից խուսափելու նպատակով հետևել հաջորդ կետում նշված ցուցմանը
- Խորհրդակցել «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի հետ ֆինանսավորման շուրջ, եթե հանգանակությունների աղբյուրներն առնչվում են այնպիսի ընկերությունների հետ, որոնք զբաղվում են ալկոհոլի և (կամ) ծխախոտի արտադրությամբ, խաղային գործունեությամբ՝ մոլախաղեր, խաղատներ և այլ հանրային առողջությանն ու բարօրությանը հակասող գործունեության մեջ և ունեն հանրային շրջանակներում կասկածելի հեղինակություն:

Նման դեպքերում ֆինանսավորումն ընդունելու որոշումները կկայացվեն «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի համապատասխան մարմնի կողմից:

## Պրոֆեսիոնալ և պատշաճ հաղորդակցության հանձնառություն

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ում առկա է այն գիտակցումը, որ բաց և ազնիվ հաղորդակցությունը առաջընթացի և զարգացման գրավականն է, այդ իսկ պատճառով իր ամբողջ անձնակազմն ու բոլոր Ուսուցիչ-առաջնորդները պարտավոր են հաղորդակցության մեջ մշտապես պահպանել խոհեմություն և բարեվարքություն:

Ասվածը վերաբերում է ինչպես Ուսուցիչ-առաջնորդների, անձնակազմի, դպրոցների և գործընկեր կազմակերպությունների միջև շփումներին, այնպես էլ սոցիալական մեդիայի հարթակներում ծավալվող հաղորդակցմանը:

Ուսուցիչ-առաջնորդների բոլոր հաղորդակցությունները պետք է զերծ լինեն անվայել և հայհոյանք ու վիրավորանք պարունակող խոսքից, որի առկայությունը կարող է հանգեցնել կարգապահական գործողությունների և ծրագրից հեռացման՝ կախված միջադեպի բարդությունից:

# IV. Ուսուցիչ-առաջնորդների հանձնառության կարգավորումներ

## Դրամական օգնություն

Ուսուցիչ-առաջնորդները չեն հանդիսանում Հիմնադրամի աշխատակից: ՀՀ Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ուսուցիչ-առաջնորդների աշխատավարձերի վճարման համար պատասխանատու են համայնքային դպրոցները: Այնուամենայնիվ, երկամյա Ծրագրի ընթացքում Հիմնադրամը Ուսուցիչ-առաջնորդներին կարող է տրամադրել դրամական աջակցություն, եթե նրանք բավարարում են սույն գլխով սահմանված դրամական օգնության հատկացման հետևյալ պայմաններին.

- Հիմնադրամի կանոնադրությամբ համարվում են շահառուներ և ընդգրկված են շահառուների ցանկում:
- Հաջողությամբ անցել են հիմնադրամի կողմից կազմակերպված Նախապատրաստական 5-շաբաթյա առցանց դասընթացը և «Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիան» (այսուհետ՝ Ակադեմիա):
- Ընդգրկված են այն Ուսուցիչ-առաջնորդների ցանկում, որը հաստատվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից (ԿԳՄՍՆ)կամ ուղարկվել է Արցախի կրթության, գիտության և մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՍՆ)՝ տեղակայում կատարելու նպատակով:
- Տվյալ Ուսուցիչ-առաջնորդների անունները ներառված են Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍՆ և Արցախի Հանրապետության ԿԳՄՆ համապատասխան հրամաններում՝ ՀՀ և ԱՀ մարզերի/համայնքների հանրակրթական դպրոցներում ուսուցչի թափուր հաստիքները լրացնելու նպատակով:
- Առկա է Հիմնադրամին ուղղված Ուսուցիչ-առաջնորդի դիմում՝ երկամյա առաքելությունն իրականացնելու ընթացքում դրամական օգնություն ստանալու համար:
- Ուսուցիչ- առաջնորդը դիմումի մեջ նաև փաստում է, որ չունի անձնական ֆինանսական խնդիրներ, իսկ, եթե ունի ֆինանսական դաշտում չլուծված խնդիրներ (չվճարված վարկային պարտավորություններ, անձնական բանկային հաշիվների կալանք և այլն), դիմումի մեջ հաստատում է , որ գիտակցում է, որ «Դասավանդի՛ր, Հայաստանի» կողմից տրվող դրամական օգնությունը կամ դրամաշնորհները կարող է բռնագանձվել ԴԱՀԿ-ի կողմից
- ՈՒսուցիչ-առաջնորդը հայտի մեջ ընտրում է դատվածություն չունենալու պնդումը և հավաստում առ այն, որ ամբողջությամբ իրավասու է զբաղեցնելու մանկավարժական աշխատողի պաշտոնը, ինչպես նաև չի տառապում այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը: (մանրամասների համար տե՛ս

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 24-ով շարադրված որևէ սահմանափակում:)

- Դիմումի հիման վրա առկա է Կողմերի միջև կնքված դրամական աջակցություն տրամադրելու մասին պայմանագիր (տե՛ս Հավելված Ե), ընդ որում՝ դրամական օգնության տրամադրման վերաբերյալ պայմանագրով սահմանված գումարի չափը և ժամկետները համարվում են ծառայողական գաղտնիք և ենթակա չեն հրապարակման երրորդ անձանց:

Ուսուցիչ-առաջնորդի մասնակցությունը Ուսուցիչների առաջնորդության ծրագրին հանդիսանում է Հայաստանում և Արցախում կրթական հնարավորությունների անհավասարության վերացման առավել մեծ առաքելության մի մասը, և ակնկալվում է, որ ծրագրին մասնակցելու Ուսուցիչ-առաջնորդի պատրաստակամությունը պայմանավորված չլինի դրամական օգնության չափով:

**<u>Ցանկացած ժամանակ և պարագայում դրամական օգնության փաթեթների շուրջ որևէ բանակցություն իսպառ բացառվում է:</u>**

Ուսուցիչների առաջնորդության ծրագիրը ենթադրում է, որ Ուսուցիչ-առաջնորդը պետք է տեղափոխվի և բնակվի տեղակայման համայնքում և/կամ տվյալ տարածաշրջանում, մասնակցի Ուսուցիչների առաջնորդության ծրագրին, մանրակրկիտ դասապլանավորմամբ կազմակերպի որակյալ դասավանդում, անցկացնի պարտադիր արտադասարանային խմբակներ, մասնակցի Ուսուցիչների առաջնորդության ամառային ծրագրի (օրինակ՝ փորձնակության), մշակի և իրականացնի համայնքային նորարարական նախագծեր: Վերը նշված բոլոր պարտականությունները Ուսուցիչ-առաջնորդից պահանջում են աշխատել լիարժեք ծանրաբեռնվածությամբ և ամբողջապես նվիրվել գործին՝ բոլոր ակնկալիքները արդարացնելու համար: Խիստ ողջունելի կլինի, եթե Ուսուցիչ-առաջնորդներն իրենց ոչ աշխատանքային օրերը ևս անցկացնեն իրենց համայնքների հետ՝ խթանելու համար հարաբերությունները բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Հիմնադրամի ընդհանուր փորձը հուշում է, որ այն Ուսուցիչ-առաջնորդները, որոնք ավելի շատ ժամանակ են անցկացնում իրենց տեղակայման համայնքների բնակիչների հետ, ավելի մեծ և հաջող փոփոխություններ են բերում, որոնցից շահում են իրենց աշակերտները:

Կարևոր է շեշտել, որ ֆինանսական օգնությունները, այդ թվում՝ «Վերաբնակեցման համար տրամադրվող գումարը» և «Հայաստան տեղափոխվելու ֆինանսական օգնությունը», Ուսուցիչ-առաջնորդներին կարող են տրամադրվել միայն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց և պետական մարմինների կողմից հաստատումներ ստանալուց հետո: Առանց այդ փաստաթղթերի, Հիմնադրամը հնարավորություն չի ունենա օրինական կարգով անհատներին ներգրավել Ծրագրում՝ որպես շահառուների, ինչպես նաև կազմակերպել նրանց տեղաբաշխումը համայնքային դպրոցներում:

Հոգ տանելով այն մասին, որ Ուսուցիչ-առաջնորդները կարողանան կենտրոնանալ Ուսուցիչների առաջնորդության ծրագրի արդյունավետ իրականացման վրա և լիովին նվիրվել դրված նպատակների իրականացմանը,՝ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը տրամադրում է դրամական օգնություն՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի.

| ՀՀ-ում իրականացվող Ծրագրի շրջանակներում ընտրված Մասնակիցներին | Արցախում [11] իրականացվող Ծրագրի շրջանակներում ընտրված Մասնակիցներին |
|---|---|
| 170,000.00 ՀՀ դրամ | 200,000.00 ՀՀ դրամ |

[11]Անհրաժեշտ է նշել, որ Արցախում դասավանդող Ուսուցիչ-առաջնորդներին հատկացվում են դրամական ավելի մեծ օգնության փաթեթներ՝ հաշվի առնելով ծրագրի պահանջների կատարման նպատակով հեռավոր համայնքներ ուղևորվելու արժեքները:

| **Գործոններ, որոնք չեն ազդում դրամական օգնության չափի վրա** | **Հաշվի չառնելու պատճառը** |
|---|---|
| • Սեռ<br>• Ռասա/ազգային պատկանելություն<br>• Տարիք (եթե թեկնածուի տարիքը Ուսուցիչների առաջնորդության ծրագրի ընթացքում չի գերազանցում Հայաստանի Հանրապետությունում և Արցախում պաշտոնապես ընդունված կենսաթոշակային տարիքը՝ 63 տարեկանը)<br>• Ազգություն<br>• Կրոն<br>• Սահմանափակ կարողություն (հաշմանդամություն)<br>• Կուսակցական պատկանելություն<br>• Արտաքին տեսք<br>• Առողջական վիճակ (եթե այն անհնարին չի դարձնում մասնակցությունը Ուսուցիչների առաջնորդության ծրագրին)<br>• Սոցիալ-տնտեսական կարգավիճակ<br>• Ընտանեկան դրություն<br>• Սեռական կողմնորոշում | • Հակասում է Հիմնադրամի հիմնարար արժեքներին, ՀՀ Սահմանադրությանը, այլ օրենսդրական ակտերին և սովորութային կանոններին,<br>• Խախտում է թափանցիկության և արդարության սկզբունքները,<br>• Չի տեղավորվում ֆինանսական աջակցության սկզբունքների շրջանակներում[12]: |
| Անձնական ֆինանսական նկատառումներ, օրինակ՝<br>• Հիպոթեքային և այլ վարկերի, կամ այլ պարտավորությունների առկայություն<br>• Անձնական ունեցվածք կամ դրա բացակայություն[13] | |

[12] Կիրառելի են բոլոր գործոնների պարագայում:

[13] Ուսուցիչ-առաջնորդների անձնական ֆինանսական դրությունը չի ազդում մասնակցության համար իրենց որակավորման և դրամական օգնության չափի որոշման վրա:

| | |
|---|---|
| • Կրթական աստիճան և (կամ) նախկին աշխատանքային փորձ<br>• Եկամուտի վերաբերյալ մասնակիցների ակնկալիքներ<br>• Բանակցելու փորձեր և ցանկություն[14]: | |
| Ծախսեր, որոնք կապված են[15]<br>• Նյութերի տպագրման հետ,<br>• Գրենական պիտույքների գնման հետ,<br>• Դպրոցական սարքավորումների գնման հետ,<br>• Արտադպրոցական միջոցառումների և խմբակների անցկացման հետ,<br>• Աշակերտական միջոցառումների, օրինակ՝ էքսկուրսիաների կազմակերպման հետ,<br>• Ուսուցիչների առաջնորդության ծրագրի շրջանակներում ընդհանուր գործունեության հետ: | |

[14] Բանակցությունների վերաբերյալ մեր կոշտ քաղաքականությունը վկայում է Ուսուցիչ-առաջնորդների տվյալ ողջ խմբի համար արդարացի դրամական օգնության չափ ապահովելու մեր վճռականության մասին:

[15] Ուսուցիչ-առաջնորդն ինքն է որոշում ինչպես կազմակերպել ամենօրյա դասերը, արտադպրոցական և դասաժամից դուրս միջոցառումները, ուստի և ինքն է ապահովում դրանց համար անհրաժեշտ պարագաները և (կամ) ռեսուրսները կամ դա անում է դպրոցի կողմից առաջարկվող ռեսուրսների և նյութերի շրջանակներում:

| | |
|---|---|
| Կեցության հետ կապված ծախսեր[16], օրինակ՝<br>● Նշանակված տարածաշրջան տեղափոխվելիս տնային գույքի ձեռքբերում,<br>● Լրացուցիչ անձնական պարագաների ձեռքբերում,<br>● Լրացուցիչ ինտերնետի և հեռախոսակապի ձեռքբերում<br><br><u>Հիմնադրամը կարող է տրամադրել լրացուցիչ ֆինանսավորում մասնակցի տեղակայման արդյունավետ կազմակերպման նպատակով, ինչպես նաև ըստ անհրաժեշտության և տեղակայման վայրը հաշվի առնելով կարող է տրամադրել նաև լրացուցիչ ֆինանսական աջակցություն մասնակցի կենցաղային պայմանների բարելավման նպատակով:</u> | |
| Ուսուցիչների վարձատրության հետ կապված ծախսեր[17]<br>● Դասավանդման ժամաքանակ,<br>● Դպրոցի աշխատավարձի դրույքաչափեր,<br>● Աշխատավարձի փոխանցումների ժամանակացույց (ուշացումներ): | |
| Ծախսեր, որոնք ենթակա չեն փոխհատուցման.<br>● Համայնք կատարված այցելություն՝ նախքան | Պետական դպրոցում պաշտոնապես աշխատանքի ընդունվելու և դասավանդելու համար Ուսուցիչ-առաջնորդը |

[16] Հիմնադրամը **պատասխանատու չէ Ուսուցիչ-առաջնորդներին տնով և (կամ) բնակարանով ապահովման համար**: Ուսուցիչ-առաջնորդն ինքն է ընտրում այն տունը կամ բնակարանը, որտեղ ապրելու է նշանակված համայնքում: Հիմնադրամը Ուսուցիչ-առաջնորդներին հատկացնում է թվային սարքավորումներ և ինտերնետային տվյալների փոխանցման սահմանաչափ ու պատասխանատու չէ մալուխային և (կամ) լրացուցիչ ինտերնետ կապի ձեռքբերման հետ կապված հավելյալ ծախսերի փոխհատուցման համար: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը երախտապարտ է իր հովանավորներին՝ Ուսուցիչ-առաջնորդներին անվճար հեռախոսներով և ինտերնետային կապով ապահովելու համար: Այն Ուսուցիչ-առաջնորդները, որոնք չարաշահում են հեռախոսների և հատկացված սահմանաչափերի օգտագործումը (օրինակ՝ միջազգային զանգեր կատարելով), ստիպված կլինեն վճարել օգտագործման դիմաց, իսկ հեռախոսները հետ կվերադարձվեն:
[17] Ուսուցիչ-առաջնորդները համարվում են համապատասխան դպրոցների աշխատակիցներ: Դպրոցներն են կրում պատասխանատվություն աշխատավարձի գումարի հաշվարկի և ժամանակին փոխանցման համար:

| | |
|---|---|
| Ուսուցիչների առաջնորդության ծրագրին մասնակցելու որոշումը,<br>● Մեկնում Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիայի անցկացման վայր (Ուսուցիչների առաջնորդության ծրագրի մեկնարկից առաջ) և հետադարձ,<br>● Մինչև Ուսուցիչների առաջնորդության ծրագրի մասնակցության առաջարկն ընդունելը դպրոց կամ համայնք կատարվող այցելությունների հետ կապված ծախսեր,<br>● Նշանակված համայնքում դեպի դպրոց և հետադարձ ուղղությամբ ամենօրյա տեղաշարժ,<br>● Տրանսպորտային ծախսեր՝ դեպի գործընկեր համալսարան և հետադարձ ուղղությամբ,<br>● Գործընկեր համալսարան դիմելու և այնտեղ ուսանելու հետ կապված բոլոր ծախսերը (բացառությամբ ուսման վարձի)<br>  ○ Դիմումի հետ կապված վճարումներ<br>  ○ «Լուսանկարի» հետ կապված ծախսեր<br>  ○ «Ստուգման գրքույկի» հետ կապված ծախսեր<br>  ○ Տրանսպորտային ծախսեր (դեպի համալսարան և հակառակ ուղղությամբ)<br>  ○ Կեցության հետ կապված ծախսեր (գիշերակացի, քնաշրջանի և այլ դեպքերում)<br>● Ուսուցիչների առաջնորդության ծրագրի | պարտադիր պետք է ունենա ուսուցչի որակավորում: Պետականորեն հաստատված ուսուցչի որակավորում չունեցող Ուսուցիչ-առաջնորդների փոխարեն Հիմնադրամը վճարում է որակավորման ձեռք բերման ուսմանական վարձերը, սակայն պատասխանատվություն չի կրում դրանից դուրս ծագող ծախսերի վճարման համար: |

| | |
|---|---|
| ընթացքում նշանակված համայնքից կամ տարածաշրջանից անձնական խնդիրների բերումով դեպի այլ վայր և հետադարձ ուղղությամբ տեղաշարժի հետ կապված ծախսեր, | |

| **Գործոններ, որոնք հաշվի են առվել դրամական օգնության գումարի չափը և նպատակը որոշելիս** |
|---|
| • Դեպի նշանակման տարածաշրջան կամ համայնք նախնական տեղափոխման և վերադարձի հետ կապված ծախսեր,<br>• Հայաստանի Հանրապետությունում և Արցախում նշանակված շրջաններում կենցաղային ծախսերի (ԿԾ) գումարը[18],<br>• Ուսուցիչների առաջնորդության ծրագրի բաղադրիչներին մասնակցելու հետ կապված տրանսպորտային ծախսեր[19]: |

| **Օժանդակ տեղեկություն** |
|---|
| • Ուսուցիչ-առաջնորդներից ակնկալվում է դասավանդման նվազագույնը 11 ժամ (միայն ինֆորմատիկա առարկայի պարագայում դասաժամերի նվազագույն քանակը 7 ժամ է):<br>• Մասնակիցների շաբաթական դասաժամերը կազմում են առավելագույնը 22 ժամ:<br>• Ծրագիրը ենթադրում է լիարժեք պարտավորվածություն, ուստի Ուսուցիչ-առաջնորդները, նշանակված դպրոցում որպես ուսուցիչ աշխատելուց բացի, **կողմնակի աշխատանք չեն կարող ունենալ, բացառությամբ գիտական գործունեության ուղղված աշխատանքի և TechForArmenia նախաձեռնության, որը չի խանգարում շաբաթական 5 օր համայնքում գտնվելու պահանջի պատշաճ կատարմանը:** |

Հիմնադրամի կողմից **«Գործող ուսուցիչներ՝ որպես Ուսուցիչ-առաջնորդներ»** ծրագրի շրջանակում Ուսուցիչ-առաջնորդներին հատկացվելիք դրամական օգնության չափը որոշվում է՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի.

[18]Հիմնադրամը «Բրեվիս» հետազոտությունների և հաղորդակցման գործակալության հետ համատեղ անցկացրել է հարցում ԿԾ-ի վերաբերյալ, որի հիման վրա հաստատել է դրամական օգնության գումարի չափը:
[19] Ծրագրի ընթացքում Հիմնադրամը կազմակերպում է միջոցառումներ, ինչպիսիք են «Մասնագիտական զարգացման օրերը», «Ուսումնական հանդիպումները», «Երդմնակալության արարողությունը», «Ես դառնում եմ դեսպան» միջոցառումները, որոնց հաճախումը պարտադիր է, և Հիմնադրամի կողմից Ուսուցիչ-առաջնորդին հատկացվող դրամական օգնության նպատակներից է նաև այդ միջոցառումների մասնակցության համար առաջացած տրասպորտային ծախսերը հոգալը:

| ՀՀ-ում իրականացվող Ծրագրի շրջանակներում ընտրված գործող ուսուցիչները, որոնք տեղակայվում են իրենց համայնքում որպես Ուսուցիչ-առաջնորդներ | Արցախում իրականացվող Ծրագրի շրջանակներում ընտրված գործող ուսուցիչները, որոնք տեղակայվում են իրենց համայնքում որպես Ուսուցիչ-առաջնորդներ |
|---|---|
| 70,000.00* ՀՀ դրամ | 100,000.00 ՀՀ դրամ |

*** «Գործող ուսուցիչները՝ որպես Ուսուցիչ-առաջնորդներ» ծրագրի շրջանակում անհատներին հատկացվող դրամական օգնության չափը փ է Ուսուցիչ-առաջնորդներին հատկացվող չափից՝ հաշվի առնելով, որ այս Ուսուցիչ-առաջնորդներն արդեն իսկ բնակվում և աշխատում են տվյալ համայնքում, և, հետևաբար, կրում են ավելի քիչ ծախսեր՝ կապված Ծրագրին մասնակցելու հետ**:

| Գործոններ, որոնք չեն ազդում դրամական օգնության չափի վրա | Հաշվի չառնելու պատճառը |
|---|---|
| • Սեռ<br>• Ռասա/ազգային պատկանելություն<br>• Ազգություն<br>• Կրոն<br>• Սահմանափակ կարողություն (հաշմանդամություն)<br>• Կուսակցական պատկանելություն<br>• Արտաքին տեսք<br>• Առողջական վիճակ (եթե այն անհնարին չի դարձնում մասնակցությունը Ուսուցիչների առաջնորդության ծրագրին) | • Հակասում է Հիմնադրամի հիմնարար արժեքներին, ՀՀ Սահմանադրությանը, այլ օրենսդրական ակտերին և սովորութային կանոններին,<br>• Խախտում է թափանցիկության և արդարության սկզբունքները,<br>• Չի տեղավորվում ֆինանսական աջակցության սկզբունքների շրջանակներում[20]: |

[20] Կիրառելի են բոլոր գործոնների պարագայում:

| | |
|---|---|
| ● Սոցիալ-տնտեսական կարգավիճակ<br>● Ընտանեկան դրություն<br>● Սեռական կողմնորոշում | |
| Անձնական ֆինանսական նկատառումներ, օրինակ՝<br>● Հիպոթեքային և այլ վարկերի, կամ այլ պարտավորությունների առկայություն<br>● Անձնական ունեցվածք կամ դրա բացակայություն[21]<br>● Կրթական աստիճան և (կամ) նախկին աշխատանքային փորձ<br>● Եկամուտի վերաբերյալ մասնակիցների ակնկալիքներ<br>● Բանակցելու փորձեր և ցանկություն[22]: | |
| Ծախսեր, որոնք կապված են[23]<br>● Նյութերի տպագրման հետ,<br>● Գրենական պիտույքների գնման հետ,<br>● Դպրոցական սարքավորումների գնման հետ,<br>● Արտադպրոցական միջոցառումների անցկացման և դասավանդման ակումբների հետ,<br>● Աշակերտական միջոցառումների, օրինակ՝ էքսկուրսիաների կազմակերպման հետ, | |

[21] Ուսուցիչ-առաջնորդների անձնական ֆինանսական դրությունը չի ազդում մասնակցության համար իրենց որակավորման և դրամական օգնության չափի որոշման վրա:

[22] Բանակցությունների վերաբերյալ մեր կոշտ քաղաքականությունը վկայում է Ուսուցիչ-առաջնորդների տվյալ ողջ խմբի համար արդարացի դրամական օգնության չափ ապահովելու մեր վճռականության մասին:

[23] Ուսուցիչ-առաջնորդն ինքն է որոշում ինչպես կազմակերպել ամենօրյա դասերը, արտադպրոցական և դասաժամից դուրս միջոցառումները, ուստի և ինքն է ապահովում դրանց համար անհրաժեշտ պարագաները և (կամ) ռեսուրսները կամ դա անում է դպրոցի կողմից առաջարկվող ռեսուրսների և նյութերի շրջանակներում:

| | |
|---|---|
| • Ծրագրի շրջանակներում ընդհանուր գործունեության հետ: | |
| Կեցության հետ կապված ծախսեր[24], օրինակ՝<br>• Նշանակված տարածաշրջան տեղափոխվելիս տնային գույքի ձեռքբերում,<br>• Լրացուցիչ անձնական պարագաների ձեռքբերում,<br>• Լրացուցիչ ինտերնետի և հեռախոսակապի ձեռքբերում: | |
| Ուսուցիչների վարձատրության հետ կապված ծախսեր[25]<br>• Դասավանդման ժամաքանակ,<br>• Դպրոցի աշխատավարձի դրույքաչափեր,<br>• Աշխատավարձի փոխանցումների ժամանակացույց (ուշացումներ): | |
| Ծախսեր, որոնք ենթակա չեն փոխհատուցման.<br>• Համայնք կատարված այցելություն՝ նախքան Ուսուցիչների առաջնորդության ծրագրին մասնակցելու որոշումը,<br>• Մեկնում Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիայի անցկացման վայր (Ուսուցիչների առաջնորդության ծրագրի | |

[24] Հիմնադրամը պատասխանատու չէ Ուսուցիչ-առաջնորդներին տնով և (կամ) բնակարանով ապահովման համար: Ուսուցիչ-առաջնորդն ինքն է ընտրում այն տունը կամ բնակարանը, որտեղ ապրելու է նշանակված համայնքում: Հիմնադրամը Ուսուցիչ-առաջնորդներին հատկացնում է թվային սարքեր և ինտերնետային տվյալների փոխանցման սահմանաչափ ու պատասխանատու չէ մալուխային և (կամ) լրացուցիչ ինտերնետ կապի ձեռքբերման հետ կապված հավելյալ ծախսերի փոխհատուցման համար:

[25] Ուսուցիչ-առաջնորդները համարվում են համապատասխան դպրոցների աշխատակիցներ: Դպրոցներն են կրում պատասխանատվություն աշխատավարձի գումարի հաշվարկի և ժամանակին փոխանցման համար:

| | |
|---|---|
| մեկնարկից առաջ) և հետադարձ,<br>● Նշանակված համայնքում դեպի դպրոց և հետադարձ ուղղությամբ ամենօրյա տեղաշարժ,<br>● Հիմնադրամը լրացուցիչ ֆինանսավորում չի տրամադրում տեղափոխության կամ տրանսպորտային ծախսերը հոգալու համար: Այս քաղաքականությունը բացառություններ չի ենթադրում:<br>● Հիմնադրամը չի հատկացնում օրապահիկի գումար ծրագրին չառնչվող միջոցառումներին մասնակցելու դեպքում: | |
| **Գործոններ, որոնք հաշվի են առվել դրամական օգնության գումարի չափը և նպատակը որոշելիս** | |
| ● Դրամական օգնության փաթեթը սահմանելիս հաշվի են առնվել Ուսուցիչների առաջնորդության ծրագրի բաղադրիչներին մասնակցելու հետ կապված օրապահիկային և տրանսպորտային ծախսերին համարժեք ծախսերը: Հիմնադրամը չի կրում պատասխանատվություն ծրագրին առնչվող միջոցառումներին մասնակցելու նպատակով փոխադրամիջոցի տրամադրման և այլ ծախսերի համար[26]: | |

**Նշում. <u>Հիմնադրամի կողմից Ուսուցիչ-առաջնորդներին հատկացվող դրամական օգնության գումարից հարկային պահումներ չեն կատարվում, և Ուսուցիչ-առաջնորդը փաստացի ստանում է վերոնշյալ գումարը, որին գումարվում է նաև դպրոց(ներ)ից ստացված աշխատավարձ(եր)ը՝ ըստ համապատասխան դասաժամային ծանրաբեռնվածության: Դրամական օգնության գումարի չափը ենթակա է փոփոխման՝ պայմանավորված միայն տեղակայման վայրի փոփոխմամբ՝ համաձայն վերոնշյալ սանդղակի:</u>**

[26] Ծրագրի ընթացքում Հիմնադրամը կազմակերպում է միջոցառումներ («Մասնագիտական զարգացման օրեր», «Ուսումնական հանդիպումներ», «Երդմնակալության արարողություն», «Ես դառնում եմ դեսպան» և այլն), որոնց հաճախելը պարտադիր է: Կարող են լինել նաև չպլանավորված միջոցառումներ, որոնց մասնակցելը ևս պարտադիր է, և Հիմնադրամի կողմից Ուսուցիչ-առաջնորդին (դպրոցի գործող ուսուցչին) փոխանցվող դրամական օգնության նպատակներից է նաև այդ միջոցառումներին մասնակցելու հետ կապված տրասպորտային ծախսերը հոգալը:

## Տեղափոխման համար տրամադրվող գումար և կանխավճար

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը հաշվի է առնում այն, որ նոր համայնք տեղափոխվելը պահանջում է լրացուցիչ միջոցներ: Այդ նպատակին են ուղղված Հիմնադրամի կողմից վերաբնակեցման համար տրամադրվող գումարն (այսուհետ՝ Վերաբնակեցման գումար) ու նախնական վճարը (այսուհետ՝ Կանխավճար):

Նոր համայնքներ տեղափոխվող Ուսուցիչ-առաջնորդներին Վերաբնակեցման գումարը կտրամադրվի տեղափոխման գումար ներքոնշյալ սանդղակով:

| ՀՀ-ի ներսում | ՀՀ- Արցախ* |
|---|---|
| 50,000 ՀՀ դրամ | 200,000 ՀՀ դրամ |

*Արցախի ներսում տեղափոխվող անձանց նույնպես տրամադրվում է *50,000* ՀՀ դրամ:

Տեղափոխման գումարից բացի, նոր համայնքներում տեղակայվող Ուսուցիչ-առաջնորդները կստանան նաև Կանխավճար՝ իրենց տրամադրվող ֆինանսական օգնությունից 50,000 ՀՀ դրամի չափով: Այս գումարը ամսական հավասարաչափ պահումներով հետ կգանձվի Ծրագրի մասնակցության շրջանակներում տրամադրվող առաջին չորս ամսվա դրամական օգնության գումարից:
Թե՛ Տեղափոխման գումարը և թե՛ Կանխավճարը կտրամադրվի Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիան հաջողությամբ ավարտելուց, համայնքում տեղակայվելուց և համապատասխան փաստաթղթերը հիմնադրամին ներկայացնելուց հետո:

## Հայաստան տեղափոխվելու/վերաբնակեցման ֆինանսական օգնությունը

Նախքան Ուսուցիչների առաջնորդության երկամյա ծրագրին դիմելը, Հայաստանից և Արցախից դուրս մշտական բնակության վայր ունեցող Ուսուցիչ-առաջնորդներին Հիմնադրամը կտրամադրի ֆինանսական օգնություն՝ կապված տեղափոխման ծախսերի հետ:

Այն անձանց համար, որոնք ապրում են Հայաստանից դուրս, հաջողությամբ ավարտել են ընտրության և Ծրագրի մյուս փուլերը և պատրաստակամություն են հայտնել տեղափոխվելու և Ծրագրի գործողություն ողջ ընթացքում բնակություն հաստատելու

Հայաստանում կամ Արցախում, Հիմնադրամը կարող է տրամադրել հետևյալ օժանդակությունները.

- Դեպի Հայաստան միակողմանի ավիատոմսի ձեռքբերում (ըստ անհրաժեշտության):
- Հնարավորության դեպքում Մասնակցի կեցության ապահովում Ուսուցիչ-Առաջնորդների ակադեմիայի տևողության ողջ ընթացքում՝ Մասնակցի դիմումի հիման վրա:
- Աշխատանքային կամ կեցության թույլտվության հիման վրա Դպրոցից ստացված տեղեկանքը Հիմնադրամին ներկայացնելուց հետո՝ տրամադրել ֆինանսական օգնություն 200,000 /երկու հարյուր հազար/ՀՀ դրամի չափով՝ որպես աշխատանքի կամ կեցության թույլատվությունների ձեռք բերման գործընթացների աջակցություն: Սույն հարաբերությունների կարգավորման նպատակով Կողմերի միջև կնքվում է պայմանագիր՝ հիմք ընդունելով Հավելված Զ -ում ներկայացված օրինակելի ձևը:
- 200,000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով ֆինանսական օգնություն ստացած անձինք կարող են ստանալ նաև սույն գլխի աղյուսակով սահմանված չափերի գումար՝ Հայաստանում և Արցախում վերաբնակեցվելու համար:

**ՆՇՈՒՄ**. Հիմնադրամը չի կարող տրամադրել նշված գումարները գերազանցող լրացուցիչ միջոցներ՝ անկախ յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունից:

Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների համար, որոնք ունեն մշտական բնակության վայր Հայաստանում կամ Արցախում, սակայն վերադառնում են Հայաստան կամ Արցախ՝ արտերկրում մեկ տարի կամ ավելի երկար ապրելուց հետո, Հիմնադրամը նախատեսում է միայն դեպի Հայաստան միակողմանի ավիատոմսի գնում:

**ՆՇՈՒՄ**. Դեպի Հայաստան միակողմանի ավիատոմսի գնումից բացի, Հիմնադրամը չի կարող տրամադրել լրացուցիչ միջոցներ Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներին, որոնց մշտական բնակության վայրը գտնվում է Հայաստանում կամ Արցախում:

**ՆՇՈՒՄ**. Դեպի Հայաստան միակողմանի ավիատոմսի գումարը ավելանում է Ծրագրից միակողմանի հրաժարումից բխող փոխհատուցման գումարին և տուգանքի վճարման պարտավորությունն ուժի մեջ է մտնում Ծրագրի մասնակցի կողմից «Պարտավորության հայտարարության» ստորագրման պահից (Հավելված Գ) սահմանված կարգով, որը կազմում է Ուսուցիչ-առաջնորդ ձեռնարկի անբաժանելի մասը:

Կարևոր է նշել, որ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը համագործակցում է ավիագործակալության հետ՝ ամենամատչելի ավիաթռիչքները գտնելու համար: Բացի այդ, ելնելով լոգիստիկ նպատակահարմարությունից, Ծրագրի բոլոր մասնակիցները

արտերկրից կժամանեն Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիայի մեկնարկի օրվան մոտ ամսաթվի: Հիմնադրամը չի կարող փոխհատուցել Ծրագրի մասնակիցների կողմից անձամբ ամրագրված ավիաթռիչքների համար: Եթե որևէ մեկը ցանկություն է հայտնում գալ Հայաստան ավելի վաղ, ապա «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը չի կարողանա հոգալ լրացուցիչ օրերի համար պահանջվող թռիչքի և կեցության հետ կապված ծախսերը: Արտերկրից Հայաստան տեղափոխվող թեկնածու Ուսուցիչ-առաջնորդները պետք է Հիմնադրամին ներկայացնեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը նախքան «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից ավիատոմսերի ամրագրումը: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը նաև չի ամրագրի ավիատոմսեր արտերկրից ժամանող այն մասնակիցների համար, որոնք չեն վկայի, որ իրենց մոտ առկա են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Հայաստանում աշխատելու համար: Անհրաժեշտ փաստաթղթերը չունեցող անձինք չեն կարողանա ներգրավվել Ծրագրում:

«Հայաստան տեղափոխվելու ֆինանսական օգնությունը» կտրամադրվի մասնակցի կողմից աշխատանքային և/կամ կեցության թույլատվությայն, ՀԾՀ-ի և դպրոցի կողմից համապատասխան տեղեկանքի Հիմնադրամին ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

## Տուգանքներ և փոխհատուցում

Ծրագրի պահանջներին համապատասխանող Ուսուցիչ-առաջնորդները դիմումը ստորագրելիս ընդունում և գիտակցում են, որ եթե Ծրագրով նախատեսված ժամկետից շուտ իրենց և Դպրոցի, իրենց և Հիմնադրամի հարաբերությունները դադարեցվում են Ուսուցիչ-առաջնորդի նախաձեռնությամբ և անհիմն պարզաբանմամբ, ապա իրենք դադարում են համարվել Ծրագրի մասնակից, որը ենթադրում է Հիմնադրամի կողմից դրամական օգնության տրամադրման դադարեցում, որի արդյունքում Մասնակիցը պարտավոր է Հիմնադրամին վճարել ներքոնշյալ սանդղակով տուգանք, որպես փոխհատուցում՝ Ծրագրին ներգրավման և մասնակցության նախապատրաստության համար ծախսերի:

- 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ՈՒԱԱ -ի, տեղավորման հետ անհամաձայնություն ունենալու կամ տեղավորումից հետո առաջին ամսվա ընթացքում (մինչև սեպտեմբերի 15), որպես Վերապատրաստման շրջանակներում Հիմնադրամի կողմից իր համար կատարված փաստացի ծախս, ինչպես նաև Տեղափոխման նպատակով օգնության գումարները, որոնք Մասնակիցը ստացել է Հիմնադրամից:
- 600,000 (վեց հարյուր հազար), եթե դադարեցրել է հանձնառությունը առաջին ուսումնական տարվա ընթացքում (մինչև հունիսի 30 ներառյալ), որպես Վերապատրաստման և շարունակական աջակցության կազմակերպման համար կատարված փաստացի ծախս և Տեղափոխման նպատակով տրամադրված օգնության փոխհատուցում:
- Եթե Ծրագիրը դադարեցնում է առաջին ուսումնական տարվանից հետո մինչև Ծրագրի ավարտը, ապա տուգանքը կկազմի 800,000 դրամ (ութ հարյուր հազար), որպես Վերապատրաստման և շարունակական աջակցության կազմակերպման համար կատարված փաստացի ծախս:

Սույն բաժնի կարգավորումները տարածվում են նաև այն Ուսուցիչ-առաջնորդների վրա, ովքեր նախքան Ծրագրին միանալը ստացել են STEM կրթաթոշակ, բայց Ծրագրով նախատեսված ժամկետից շուտ իրենց և դպրոցի միջև կնքված աշխատանքային հարաբերությունները իրենց նախաձեռնությամբ և անհիմն պարզաբանմամբ դադարեցնում են: Տուգանք վճարվում է նաև այն դեպքերում, երբ STEM կրթաթոշակ ստացող Ուսուցիչ-Առաջնորդի դիտավորյալ գործողությունները հանգեցնում են նրան, որ հարաբերությունները դադարեցվում են Հիմնադրամի նախաձեռնությամբ: Այս դեպքում Հիմնադրամն իրավասու է կայացնել տուգանքի նշանակման որոշում՝ ելնելով տվյալ դեպքի առանձնահատկություններից:
Միևնույն ժամանակ, բացի սույն Ձեռնարկով սահմանված փաստացի ծախսի փոխհատուցումը, STEM կրթաթոշակ ստացած մասնակիցները պարտավորվում են նաև փոխհատուցել Մասնագիտական ուսուցման կազմակերպման մասին պայմանագրով Հիմնադրամի կրած վնասները:
Յուրաքանչյուր դեպքում վնասի փոխհատուցման և դրա չափի սահմանման որոշումները կայացնում է Հիմնադրամը:
Դրամական օգնության գումարի չափը որոշվում է՝ հիմք ընդունելով տվյալ ուսումնական տարին, տարածաշրջանը, միջոցների առկայությունը և այլ հանգամանքներ:

## Դպրոց/ համայնք տեղակայման համակարգ

Ուսուցիչ-առաջնորդի գործուղման ուղղությունը և տեղակայման դպրոցի / համայնքի ընտրությունը կատարվում է բացառապես «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի հայեցողությամբ: Այդ որոշումը կատարվում է Հիմնադրամի գործընկեր դպրոցների կարիքների և ԿԳՄՍՆ համագործակցության, ինչպես նաև Ուսուցիչ-առաջնորդի կողմից դասավանդվող առարկայի կարիքի հիման վրա: ՈՒսուցիչ-առաջնորդի տեղակայման մասին նախնական հաղորդակցությունը չի կարող համարվել նախադրյալ կամ հիմք վերջնական տեղակայման համար, քանի որ վերջնական տեղակայման ընթացքում առաջնահերթ դիտարկվում է համայնքների և աշակերների կարիքների և թեկանծուների կարողությունների (որը գնահատվում է նախապատրաստական և ՈՒԱԱ փուլերում) համադրելիությունը: Տեղակայման դպրոցները հրապարակվում է ակադեմիայի 5-րդ շաբաթից հետո: Հիմնադրամը ակնկալում է, որ Ուսուցիչ-առաջնորդը լիարժեք կերպով պետք է ավարտի իր երկամյա հանձնառությունը տեղակայման համայնքում/դպրոցում, և «Գործող ուսուցիչը՝ որպես Ուսուցիչ-առաջնորդ» ծրագրով ներգրավված ուսուցիչը՝ այն գործընկեր դպրոցում, որտեղից ներգրավվել է ի սկզբանե: Ծրագիրն ու տեղակայումը ենթադրում են <u>ինգօրյա աշխատանքային շաբաթ Հայաստանում և վեցօրյա աշխատանքային շաբաթ՝ Արցախում:</u> Դա նաև ներառում է Ուսուցիչ-առաջնորդի բնակությունն ու ներկայությունը համայնքում ու դպրոցում՝ կատարելով իր ուսումնական և ուսուցչական պարտականությունները, իրականացնելով նորարարական նախագծերը ու արտադասարանային գործունեությունը:

Եթե «Գործող ուսուցիչը՝ որպես Ուսուցիչ-առաջնորդ» ծրագրի մասնակիցների բնակության վայրը գտնվում է 30 կմ հեռավորության (30 որպե ավտոմեքենայով փոխադրման հեռավորության) վրա, հանդիսանում են հրամանագրված ուսուցիչներ և շարունակում են գործունեությունը իրենց դպրոցում, նրանցից ևս ակնկալվում է գտնվել իրենց համայնքներում շաբաթական 5 օր և իրականացնել իրենց արտադասարանային գործունեությունը: Եթե «Գործող ուսուցիչը՝ որպես Ուսուցիչ-առաջնորդ» ծրագրի մասնակիցները բնակվում են 30 կմ-ից մեծ հեռավորության վրա (30 որպե ավտոմեքենայով փոխադրման հեռավորություն) այն համայնքներից, որտեղ նրանք արդեն դասավանդում են, ապա «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի որոշմամբ նրանք կարող են ա) տեղակայվել մեկ այլ համայնքում, որտեղ նրանք կկարողանան ամբողջությամբ կատարել իրենց հանձնառությունները (այս դեպքում ոչ որպես «Գործող ուսուցիչ» ծրագրի մասնակից, բ) ստիպված կլինեն տեղափոխվել իրենց դպրոցի համայնքը առնվազն 5 օր բնակվելու այնտեղ:

Հազվադեպ, հանգամանքների բերումով «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կարող է իրեն իրավունք վերապահել Ուսուցիչ-առաջնորդին տեղափոխել այլ համայնք/դպրոց, երբ, Հիմնադրամի կարծիքով, նրա անվտանգությունը ենթարկված է ռիսկի կամ գործընկեր դպրոցում առաջ եկած հանգամանքներով պայմանավորված: Այս պարագայում Հիմնադրամը նոր տեղավորման պարտադիր պատասխանատվություն չի կրում, բայց աշխատանքներ կտանի նոր տեղավորման ուղղությամբ, նաև Ուսուցիչ-առաջնորդի հետ՝ փոփոխություն մտցնելով ծրագրի պահանջների մեջ:

Անձնական բնույթի արտակարգ կամ ճգնաժամային իրավիճակի դեպքում Ուսուցիչ-առաջնորդը կարող է խնդրել տեղափոխել իրեն՝ այդ մասին նախ տեղեկացնելով իր Առաջնորդության զարգազման ղեկավարին, այնուհետև գրավոր հայցով դիմելով Տարածաշրջանային ղեկավարին (նամակի պատճենը հասցեագրելով նաև Առաջնորդության զարգազման ղեկավարին): Հայցում պետք է բացատրված լինի արտակարգ իրավիճակի բնույթը, և Ուսուցիչ-առաջնորդից կարող է պահանջվել ներկայացնել ապացույցներ (ինչպես, օրինակ, բժշկական հավաստագիր):

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը վերը նշված հայցերի ուսումնասիրությունը կկատարի դեպք առ դեպք՝ որպես լիիրավ որոշում կայացնող մարմին: Այն դեպքում, երբ կազմակերպությունը կայացնի նման հայցի բավարարման որոշում, Ուսուցիչ-առաջնորդի տեղափոխությունը մեկ այլ գործընկեր դպրոց կիրականացվի հաջորդ ուսումնական տարվա ընթացքում: Նման տեղափոխությունները կարող են իրականացվել միայն դպրոցի տնօրենների համաձայնությամբ: Ուսուցիչ-առաջնորդի տեղափոխման հայցի բավարարման դեպքում նա պետք է ստանձնի ևս 2 տարի ժամկետով հանձնառություն նոր տեղակայման դպրոցում: Ծրագրում վերականգնվելու պահից Ուսուցիչ-առաջնորդի քսաներկու ամիսների

համար նախատեսված ամբողջական գումարի մնացորդը բաշխվում է կրկին միանալուց հետո Ծրագրի մասնակցության ամիսների վրա: Եթե Ուսուցիչ-առաջնորդին թույլատրվում է տեղափոխություն, սակայն նա չի վերադառնում հաջորդ տարի, ապա նրանից կպահանջվի վճարել տուգանք և կգործի սույն ձեռնարկի հրաժարման գլխով նախատեսված կարգավորումները:

## Աշխատանք մեկից ավելի դպրոցներում

Հաշվի առնելով Ուսուցիչների առաջնորդության ծրագրի հեղինակությունը՝ երբեմն հարևան համայնքների դպրոցները փորձում են Ծրագրում ներգրավված Ուսուցիչ-առաջնորդներին աշխատանքի վերցնել իրենց մոտ: Նման խնդրանքները կարող են բավարարվել «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից Ծրագրի մասնակցության երկրորդ տարում՝ դիտարկվելով յուրաքանչյուր առաջարկ առանձին-առանձին: Դա թույլ կտա որպեսզի Հիմնադրամը հավաստիանա, որ Ուսուցիչ-առաջնորդներն ի վիճակի են կատարել իրենց տարաբնույթ պարտականությունները՝ երկու դպրոցներում էլ ապահովելով դասավանդման բարձր որակական չափանիշները: Հաստատման դեպքում երկու դպրոցներում նրանց ունեցած ժամաքանակը միասին վերցրած չպետք է գերազանցի 22 ժամը: Ուսուցիչ-առաջնորդը աշխատանքի առաջարկը այլ դպրոցում ստանալուց հետո, նա այդ մասին պետք է անհապաղ տեղեկացնի իր Առաջնորդության զարգազման ղեկավարին: Երկրորդ դպրոցում աշխատանքի թուլտվության որոշումը «Դասավանդի՛ր, Հայաստան»-ն է կայացնում: Իր գործունեության մեջ թերանալու պարագայում, Ուսուցիչ-առաջնորդից կարող է պահանջվել դադարեցնել աշխատանքը երկրորդ դպրոցում՝ պահպանելու համար դասավանդման որակյալ մակարդակը:

## Բացակայություններ

«Դասավանդի՛ր, Հայաստանը» գիտակցում է, որ կան չկառավարվող հանգամանքներ, որոնց պատճառով մասնակիցը ստիպված է լինում որոշ ժամանակով բացակայել դասերից: Հիմնադրամը ամեն ինչ անում է, որպեսզի նման հանգամանքները չվտանգեն իր գործունեության հաջողությանը:

Բայց Հիմնադրամը նաև հավատացած է, որ աշակերտների կրթական հնարավորությունների բացահայտման վրա իրական ներազդեցություն ունենալու համար **պահանջվում է Ուսուցիչ-առաջնորդի ներկայությունը դասարանում:** Այդ նպատակով «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի բոլոր Ուսուցիչ-առաջնորդների համար գործում են բացակայության վերաբերյալ հետևյալ սկզբունքներն ու ընթացակարգերը.

- Հիմնադրամը իրավասու է Ուսուցիչ-առաջնորդին չտրամադրել իր հերթական (ամսական) դրամական օգնությունը, եթե դրամական օգնություն տրամադրելու օրվա դրությամբ Ուսուցիչ-առաջնորդը ունի **15 օրացուցային օր կազմող անընդմեջ կամ ընդմիջված բացակայություն մեկ ամսվա ընթացքում ,**
- Եթե ուսուցիչ-առաջնորդը բացակայում է **45 հաջորդական օրացուցային օր**,ապա Հիմնադրամը իրավասու է դադարեցնելու Ծրագրի մասնակցի նրա կարգավիճակը, կամ մասնակիցը ստիպված կլինի դադարեցնել իր մասնակցությունը Ծրագրին (տե՛ս մասնակցության դադարեցման վերաբերյալ հատվածը ստորև): Եթե այդ դադարեցումն ունի բավարար պատճառաբանություն (բժշկական փաստաթղթերով հաստատում և այլն), ապա Ուսուցիչ-առաջնորդը կարող է կրկին դիմել Ծրագրին ներգրավվելու համար՝ 2 տարվա ընթացքում:
- Ծրագրին մասնակցության դադարեցումը կհամարվի հարգելի այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք վեր են Ուսուցիչ-առաջնորդի վերահսկողությունից (հիվանդություն, ընտանեկան լուրջ խնդիրներ և այլն) և որոնց վերաբերյալ առկա են **պաշտոնական փաստաթղթեր**:
- Պաշտոնական փաստաթղթերով չհիմնավորված ցանկացած հանգամանք «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից կքննվի որպես առանձին դեպք և անհարգելի համարվելու դեպքում կարող է հանգեցնել Ուսուցիչ-առաջնորդի հեռացմանը Առաջնորդության զարգացման ծրագրից՝ դրանից բխող բոլոր հնարավոր հետևանքներով[27]: Ընդ որում՝ Ուսուցիչ առաջնորդը ընդունում և գիտակցում է, որ անհարգելի համարված պատճառների դեպքում Հիմնադրամի կողմից կայացված հեռացման որոշումից կարող են բխել հետևյալ պահանջները առ այն, որ ինքը.
    - ➢ կարող է զրկվել հետագա տարիներին Ծրագրին դիմելու իրավունքից,
    - ➢ կարող է պահանջ ներկայացվել վճարելու տուգանք՝ ըստ սույն Ձեռնարկում սահմանված սանդղակի,
    - ➢ կարող է ներկայացվել պահանջ Հիմնադրամին փոխհատուցելու մինչ այդ մասնակցի համար կատարած ուսման վարձավճարների գումարը,
    - ➢ այլևս չի համարվի Ուսուցիչների առաջնորդության ծրագիրը ավարտած Շրջանավարտ դեսպան,
    - ➢ չի կարող ստանալ ավարտական վկայական և երաշխավորական նամակներ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից:
- Եթե որևէ պատճառով Ուսուցիչ-առաջնորդը ստիպված է բաց թողնել դպրոցի դասեր, ապա այդ մասին անհապաղ ՊԱՐՏԱՎՈՐ Է տեղեկացնել իր դպրոցի տնօրենին, ինչպես նաև Առաջնորդության զարգացման իր ղեկավարին: Առաջնորդության զարգացման ղեկավարին և տնօրենին չտեղեկացնելը կհամարվի բացակայության թույլտվության քաղաքականության պահանջների խախտում և կարող է հանգեցնել Ծրագրից հեռացվելուն:

[27] Հեռացումների վերաբերյալ հատվածը տե՛ս ստորև:

## Մասնակցության դադարեցում

Ծրագրին մասնակցության հրավերն ընդունելով՝ Ուսուցիչ-առաջնորդը տալիս է իր համաձայնությունը առ այն, որ հետագա երկու տարիների ընթացքում իր ամենակարևոր առաջնահերթությունը դառնում է աշակերտների և համայնքների կրթական կարիքների բավարարումը: Հիմնադրամը իր հերթին պետք է վստահ լինի, որ Ուսուցիչ-առաջնորդը մակերեսորեն չի վերաբերվում այս հանձնառությանը: Այդուհանդերձ, Հիմնադրամը նաև հասկանում է, որ կարող են ծագել հանգամանքներ, որոնց դեպքում Ուսուցիչ-առաջնորդի կողմից վերոնշյալ երկամյա հանձնառության լիարժեք կատարումը չի բխում աշակերտների լավագույն շահից, և որ Ծրագրին մասնակցության դադարեցումը համարվում է ավելի գերադասելի: Հիմնադրամը առանձնացնում է 3 այդպիսի հանգամանք՝ առողջական խնդիրների պատճառով մասնակցության դադարեցում, հեռացում և մասնակցությունից հրաժարում:

## Մասնակցության դադարեցում առողջական խնդիրների պատճառով

Որոշ դեպքերում անձի առողջությունը և բժշկական ցուցումները կարող են ազդեցություն ունենալ Ուսուցիչ-առաջնորդի կողմից դասավանդման գործունեության պահանջների բավարարման կարողության վրա: Նման դեպքերում Ուսուցիչ-առաջնորդները կարող են ցանկություն հայտնել դադարեցնելու իրենց մասնակցությունը Ծրագրին՝ առողջական խնդիրների պատճառով: Առողջական խնդիրները հարգելի կամ ընդունելի կարող են համարվել հետևյալ դեպքերում.

- Բժշկական ծառայություն մատուցող որակավորված մարմնից Ուսուցիչ-առաջնորդին առողջական վիճակի հետ կապված խորհուրդ է տրվել ստանալ անհետաձգելի բուժում, որը Ուսուցիչ-առաջնորդից պահանջում է ստացիոնար բուժում կամ բացակայություն դպրոցից ավելի քան 45 օրացուցային օր և որը չի կարող համադրվել իր հանձնառության հետ կամ հետաձգվել մինչև մոտակա արձակուրդներ:
- Ուսուցիչ-առաջնորդի ամուսինը, երեխան կամ նրա խնամակալության տակ գտնվող անձը ստացել է առողջական խնդրի բուժման ցուցում, որը Ուսուցիչ-առաջնորդից պահանջում է նախորդ կետում նշված պայմանները:
- Ֆիզիկական կամ հոգեկան առողջության այլ խնդիրները (կապված Ուսուցիչ-առաջնորդի անձի կամ ընտանիքի այլ անդամի հետ), որոնք չեն մտնում վերոնշյալ դեպքերի մեջ, ենթակա են գնահատման մասնավոր կերպով:

Նշված բոլոր դեպքերում փաստերը պետք է հաստատված լինեն բժշկական տեղեկանքներով: Եթե վերոնշյալ դեպքերը վերաբերելի են Ուսուցիչ-առաջնորդին, ապա նա կարող է օգտվել առողջական նկատառումներով Ծրագրին մասնակցության դադարեցման իրավունքից: Հիմնադրամը գիտակցում է, որ նմանատիպ անձնական տեղեկությունների բացահայտումը նախընտրելի չէ Ուսուցիչ-առաջնորդի համար, հետևաբար, պահպանում է նման հայտերի լիարժեք գաղտնիությունը: Առողջական նկատառումներով ծրագրին մասնակցության դադարեցման խնդրանքով գրավոր հայտը ներկայացվում է Տարածաշրջանային տնօրենին:

- Ուսուցիչ-առաջնորդն իր ներկայացրած գրավոր հայտում պետք է ապահովի բավարար տեղեկություններ, որպեսզի Հիմնադրամը կարողանա հասկանալ նրա առողջական վիճակի բնույթը: Եթե առողջական վիճակը ստիպել է բացակայել տևական ժամանակով, ներկայացվող բժշկական տեղեկանքում պետք է նշված լինի բուժման ամբողջ ժամանակահատվածը (մեկ օրվա բացակայության մասին վկայող բժշկական տեղեկանքի ներկայացումը բավարար չէ):
- Ուսուցիչ-առաջնորդի գրավոր հայտին կից պետք է ներկայացվի նամակ կամ տեղեկանք բժշկական ծառայություն մատուցող որակավորված մարմնի կամ անձի կողմից, որում հստակ նշվում է բժշկի եզրակացությունը և կարող է ներկայացվել Ծրագրին մասնակցության դադարեցման վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ (առ այն, որ Ծրագրի մասնակցությունը համադրելի չէ առողջական նշված խնդրի հետ):
- Ուսուցիչ-առաջնորդի գրավոր հայտի լիարժեք և արդարացի բավարարման համար Հիմնադրամը այն քննարկում է Առաջնորդության զարգացման ղեկավարի հետ՝ հասկանալու համար, թե ինչպես է Ուսուցիչ-առաջնորդի առողջական վիճակը ազդեցություն թողել դասարանում իր դասավանդման պարտականությունների կատարման վրա: Այդուհանդերձ, Հիմնադրամը տեղեկատվության հավաքագրման ընթացքում չի բացահայտի կամ տրամադրի մանրամասներ Ուսուցիչ-առաջնորդի հայտի կամ առողջական վիճակի մասին:
- Ուսուցիչ-առաջնորդի **գրավոր հայտի** դիտարկման և որոշում կայացնելու համար «Դասավանդի՛ր, Հայաստանին» պետք է առնվազն 30 օրացուցային օր: Որոշման մասին Ուսուցիչ-առաջնորդը կտեղեկացվի գրավոր:
- Առողջական նկատառումներով Ծրագրին մասնակցության դադարեցման Ուսուցիչ-առաջնորդի խնդրանքի բավարարման դեպքում Տարածաշրջանային ղեկավարը դպրոցին և մասնագիտական որակավորում տվող հաստատությանը պարտավոր է տեղեկացնել խնդրանքի բավարարման մասին՝ առանց հաղորդելու հավելյալ մանրամասներ:
- Առողջության պատճառով Ծրագրին մասնակցության դադարեցման Ուսուցիչ-առաջնորդի խնդրանքի բավարարման դեպքում վերջինս իրավունք կունենա վերականգնվելու Ծրագրում երկու տարվա ընթացքում՝ **հավելյալ** մեկ տարի ժամկետով (եթե բացակայությունը կազմում է Ծրագրի քառորդ

մասից ավելին): Ծրագրում հավելյալ ժամկետով վերականգնվելու պահից Ուսուցիչ-առաջնորդին տրվող ամսական դրամական օգնության չափը վերանայվում է, և 22 ամիսների համար նախատեսված ամբողջական գումարի մնացորդը բաշխվում է կրկին միանալուց հետո Ծրագրի մասնակցության ամիսների վրա:

- Քանի որ Հիմնադրամի նպատակն է Ուսուցիչ-առաջնորդներին օգնել դառնալու լավագույն ուսուցիչները իրենց աշակերտների համար և լավագույն առաջնորդներն իրենց համայնքներում, նրանց վերականգնումը Ծրագրում կարող է ենթադրել լրացուցիչ պայմաններ: Այդ լրացուցիչ պայմանները չբավարարելու դեպքում վերականգնումը կարող է տեղի չունենալ, նույնիսկ եթե Ուսուցիչ-առաջնորդն ունի Ծրագրին միանալու համար անհրաժեշտ բժշկական հաստատումները:
- Եթե Ուսուցիչ-առաջնորդին անհրաժեշտ է ստանալ Առողջական նկատառումներով բացակայության թույլտվություն, նա պետք է Հիմնադրամին այդ մասին ծանուցի բացակայության սկզբնական օրվա և ակնկալվող վերջին օրվա մասին: 10-ից ավելի օրացուցային օր առողջական պատճառներով դպրոցից բացակայելու դեպքում Ուսուցիչ-առաջնորդը պարտավոր է Առաջնորդության զարգացման ղեկավարին ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ բացակայության առաջին օրվանից սկսած՝ 14 օրացույցային օրվա ընթացքում: Այս պահանջը չկատարելը կարող է հանգեցնել Ծրագրից հեռացման՝ անհարգելի պատճառներով: Այդ դեպքում «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կարող է պահանջել վճարել տուգանք ըստ սույն Ձեռնարկում սահմանված սանդղակի:
- Առողջական նկատառումներով Ծրագրին մասնակցության դադարեցման Հիմնադրամի կողմից Ուսուցիչ-առաջնորդի խնդրանքի մերժումը հնարավոր է բողոքարկել՝ սույն Ձեռնարկի «Պաշտոնական կարգավորում/բողոքարկման գործընթաց» բաժնում սահմանված կարգով:

Այն դեպքերում, երբ առողջական վիճակը կարող է վնասակար լինել կամ Ուսուցիչ-առաջնորդի կամ նրա աշակերտների համար, «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կարող է պահանջել բժշկական տեղեկանք մինչև Ուսուցիչ-առաջնորդի դպրոց վերադառնալը: Եթե առողջության համար համապատասխան պատասխանատու անձը խորհուրդ չի տալիս Ուսուցիչ-առաջնորդին վերադառնալ դպրոց, վերջինս կարող է ազատվել աշխատանքից կամ հեռացվել ծրագրից՝ առողջական խնդիրների առկայության հիմքով:

- Տարածաշրջանային տնօրենը դպրոցին և մասնագիտական որակավորում տվող հաստատությանը տեղեկացնում է Ուսուցիչ-առաջնորդի առողջական նկատառումներով ծրագրին մասնակցության դադարեցման թույլտվության մասին՝ առանց հաղորդելու հավելյալ մանրամասներ:
- Առողջական նկատառումներով ծրագրին մասնակցության դադարեցման Ուսուցիչ-առաջնորդի խնդրանքի բավարարման դեպքում վերջինս իրավասու կլինի վերականգնվելու Ծրագրում տարվա ընթացքում՝հավելյալ մեկ տարի

ժամկետով(եթե բացակայությունը կազմում է Ծրագրի քառորդ մասից ավելին), հաջորդ ուսումնական տարվա սկզբից՝ խնդրանքի բավարարման օրվան հաջորդող 2 տարվա ընթացքում: Քանի որ Հիմնադրամի կողմից մշակված Ծրագրի նպատակն է Ուսուցիչ-առաջնորդներին օգնել դառնալու լավագույն ուսուցիչները իրենց աշակերտների համար և լավագույն առաջնորդներն իրենց համայնքներում, նրանց վերականգնումը Ծրագրում կարող է ենթադրել լրացուցիչ պայմաններ: Այդ լրացուցիչ պայմանները չբավարարելու դեպքում վերականգնումը կարող է տեղի չունենալ, նույնիսկ եթե Ուսուցիչ-առաջնորդն ունի Ծրագրին միանալու համար անհրաժեշտ բժշկական հաստատումները:

## Հեռացում

Ծրագրից հեռացումը նշանակում է, որ Ուսուցիչ-առաջնորդը չի համարվի Ծրջանավարտ-դեպան և, հետևաբար, չի ունենա «Դասավանդի՛ր, Հայաստան» շարժման և «Կրթություն բոլորի համար» ցանցի անդամ լինելու արտոնությունները: Փոխարենը՝ նրա կարգավիճակը կնշվի որպես «Ծրագրից ազատված», և Հիմնադրամը կտա այդ կարգավիճակի ստանդարտ մեկնաբանությունը՝ երրորդ կողմերից ստացվող հարցումներին ի պատասխան (հեռանկարային գործատուներ, լրատվամիջոցներ և այլն):

Հեռացումների մասին որոշումները «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կայացնում է սույն փաստաթղթում նշված համապատասխան դեպքերում: Ուսուցիչ-առաջնորդի ցածր կատարողականության պարագայում Առաջնորդության զարգացման ղեկավարը կարող է նրա նկատմամբ կիրառել Ուսուցիչ-առաջնորդի կատարելագործման պլան (տե՛ս « Ի՞նչ է տեղի ունենում, երբ հանձնառությունը չի կատարվում» բաժինը): Եթե Ուսուցիչ-առաջնորդը չի բավարարում Հիմնադրամի ակնկալիքները, նա հեռացվում է Ծրագրից:

Առանձին դեպքերում Ծրագրային թիմը կարող է գալ միասնական համաձայնության, որ մասնակցության դադարեցումը տեղին է՝ ելնելով հանգամանքներից, որոնք նշված չեն սույն ուղեցույցում:

Առանձին հատուկ դեպքերում «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կարող է որոշում կայացնել Ուսուցիչ-առաջնորդի Ծրագրին մասնակցության ժամանակավոր կասեցման մասին և սահմանել Ծրագրին վերամիանալու հնարավորություն և հստակ ժամկետ:

Ուսուցիչների առաջնորդության ծրագրից հեռացմանը վերաբերող բոլոր որոշումները, որոնք կայացվում են «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից, վերջնական են և ենթակա չեն վիճարկման:

## Հրաժարական

Հրաժարականը անձի/մասնակցի որոշումն է որպես Ուսուցիչ-առաջնորդ ծրագրին մասնակցությունից հրաժարվելու մասին: Եթե Ուսուցիչ-առաջնորդը որևէ պատճառով հրաժարվում է Ծրագրին իր մասնակցությունից, նա մեխանիկորեն դադարում է համարվել Ծրագրի լիարժեք մասնակից, և նրա համար հասանելի չեն լինի Ծրագիրն ավարտած Ուսուցիչ-առաջնորդի՝ Շրջանավարտ դեսպանի համար նախատեսված ռեսուրսներն ու այլ արտոնությունները: Հրաժարականի համար սահմանված է հետևյալ ընթացակարգը.

- Հրաժարականի դիմումը պետք է կազմվի գրավոր, թղթային տարբերակով և ներկայացվի Առաջնորդության զարգացման ղեկավարին և Տարածաշրջանային տնօրենին,
- Ցանկացած պարագայում Ծրագրից հրաժարման մասին դիմումը առաջնահերթ պետք է ներկայացվի Հիմնադրամին, նոր միայն դպրոցին և այլ շահագրգիռ կողմերի,
- Ուսուցիչ-առաջնորդը հրաժարումը կարող է չեղարկել՝ (նույնպես գրավոր կարգով՝ տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով) 24 ժամվա ընթացքում՝ առանց որևէ հետևանքների՝ պայմանով, որ նա այդ մասին չի հայտնել այլ կողմերի, ինչպիսիք են դպրոցը կամ կրթական գերատեսչությունը:
- **Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիայի ընթացքում** հրաժարման դեպքում Ուսուցիչ-առաջնորդը պետք է որոշման մասին տեղեկացնի **Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիայի ղեկավարին**: Ուսուցիչ-առաջնորդից կպահանջվի հետևել ՈՒԱԱ-ից դուրս գալու պաշտոնական ընթացակարգին նախքան մեկնումը և լքել ակադեմիայի տարածքը՝ ՈՒԱԱ-ի ղեկավարին իր որոշման մասին ծանուցելուց հետո 24 ժամվա ընթացքում: Եթե Ուսուցիչ-առաջնորդը սկսի հաճախել ՈՒԱԱ և հրաժարական ներկայացնի 6 շաբաթյա դասընթացից հետո, ապա համապատասխան Տարածաշրջանային ղեկավարը պետք է տեղեկացվի գրավոր կամ էլեկտրոնային նամակով՝ պաշտոնական փաստաթղթավորման նպատակով: Ինչպես նշվեց նախորդ բաժիններում, հրաժարումը ևս կհանգեցնի Ծրագիրը մասնակցության և հաջողությամբ ավարտողի կարգավիճակի կորստին:
- «Պարտավորության հայտարարություն»-ը ստորագրումից և Ծրագրին միանալուց հետո, որևէ պահի հրաժարման դեպքում Ուսուցիչ-առաջնորդը պարտավոր է փոխհատուցել այն գումարը, որը «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը ծախսել է տվյալ անձի Ծրագրին մասնակցությունը ապահովելու, այդ թվում բայց ոչ միայն Հայաստան տեղափոխվելու ճանապարհածախս, ՈՒԱԱ վերապատրաստման և կեցության համար:

Ծրագրի ընթացքում հրաժարման դեպքում տուգանքի չափը կսահմանվի ըստ սույն Ձեռնարկում նշված սանդղակի:
Տուգանքի վճարման պարտավորությունն ուժի մեջ է մտնում մասնակցի կողմից «Պարտավորության հայտարարությամբ» (Հավելված Գ) ստորագրելու պահից սահմանված կարգով, որը կազմում է Ուսուցիչ-առաջնորդ ձեռնարկ 2023-ի անբաժանելի մասը: Սույն տուգանքը արտահայտում է այն ծախսերը, որ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը Ծրագրի շրջանակում առնվազն կատարել է յուրաքանչյուր Ուսուցիչ-առաջնորդի հաշվարկով:

«Պարտավորության հայտարարության» մանրամասներին կարող եք ծանոթանալ **այստեղ**:

## Հղիություն

Ուսուցիչ-առաջնորդ դառնալիս ակնկալվում է, որ տվյալ անձը ի վիճակի կլինի լիարժեք կերպով մասնակցել Ուսուցիչների առաջնորդության երկամյա ամբողջ Ծրագրին: Հիմնադրամը գիտակցում է, որ ծնող դառնալը բոլորի կարևոր իրավունքն է և հարգանքով է վերաբերում ընտանեկան կյանքի պլանավորման անձի իրավունքին: Միևնույն ժամանակ ակնկալվում է, որ Ուսուցիչ-առաջնորդները Ծրագիրը կդիտարկեն որպես առաջնահերթություն դրա ողջ ընթացքում՝ պահպանելով իրենց համայնքներում լրիվ աշխատաժամանակով ուսուցիչ և առաջնորդ լինելու հանձնառությունը: Հիմնադրամը խորհուրդ է տալիս ընտանիքի պլանավորման հեռանկարային ծրագրեր ունեցող բոլոր ծնողներին՝ հետաձգել իրենց դիմումը Ծրագրին, եթե պատրաստվում են մայրանալ երկամյա Ծրագրի մասնակցության ընթացքում:

Եթե Ուսուցիչ-առաջնորդը հղիանում է Ծրագրի ընթացքում, «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը չի կրում պարտավորություն վճարելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում նպատակային արձակուրդի տրամադրման համար նախատեսված վճարները, քանի որ Ուսուցիչ-առաջնորդները չեն հանդիսանում Հիմնադրամի աշխատակիցներ: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը Ուսուցիչ-առաջնորդներին չի պարտավորվում հատկացնել նաև դրամական օգնություն այն ամիսների համար, երբ Ուսուցիչ-առաջնորդը գտնվում է նպատակային արձակուրդում, չի դասավանդում և չի մասնակցում Ուսուցիչների առաջնորդության ծրագրի բաղադրիչներին: Ուսուցիչ-առաջնորդի գործատուն իր տեղակայման դպրոցն է, որն էլ կրում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր վճարումները կատարելու պարտավորությունը:

Ծրագրի տևողության ընթացքում ծննդաբերելու կամ հղիության արձակուրդի գնալու դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգրքով տրամադրվում է 70-ական արձակուրդային օր՝ ակնկալվող ծննդաբերության օրվանից առաջ և հետո (ընդամենը՝ 140 օր): Հաշվի առնելով, որ Ուսուցիչների առաջնորդության ծրագրին

մասնակցությունը 22 ամիս է, Ծրագրի քառորդ մասից բացակայելը ողջունելի չէ: Մենք գտնում ենք, որ երկու տարուց քիչ ժամանակամիջոցը բավարար չէ ներազդեցություն ապահովելու համար: Այս նկատառումներից ելնելով՝
ա)Ուսուցիչների առաջնորդության ծրագրի առաջին տարվա առաջին կիսամյակում հղիության արձակուրդ գնացող Մասնակիցը հեռացվում է Ծրագրից ընդհանուր հիմունքներով (140 օր և ավել) և արձակուրդից մեկ տարվա ընթացքում վերադառնալուց հետո, պարտավոր կլինի կատարել երկու ամբողջական ուսումնական տարվա Ծրագրային հանձնառություն:
Բ) Ծրագրի երկրորդ տարում հղիության արձակուրդի գնացած Ուսուցիչ-առաջնորդն արձակուրդից (առավելագույնը 140օր) վերադառնալուց հետո պարտավոր կլինի կատարել մեկ ամբողջական ուսումնական տարվա աշխատանքային հանձնառությունը:
Վերը նշված դեպքերում Ուսուցիչ-առաջնորդին տրվող դրամական օգնության չափը չի կարող ավելացվել, նույնիսկ եթե նրանք վաղաժամ կասեցման հիմքով ստիպված են լինում հանձնառությունը կատարել ավելին, քան ի սկզբանե նախատեսված էր:
Հաշվարկները կատարվում են հետևյալ կերպ՝ ա) Մայրության արձակուրդի ընթացքում կասեցվում է դրամական օգնության տրամադրումը (140 օրվա ընթացքում), և շարունակվում է տրամադրվել վերամիանալուց հետո՝ համապատասխան փաստաթղթերի հիմքով:
Մեկ տարով կասեցում հետո վերամիանալու դեպքում, 22 ամիսների համար նախատեսված ամբողջական գումարի մնացորդը բաշխվում է **կրկին միանալուց** հետո Ծրագրի մասնակցության ամիսների վրա: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից որոշ բացառություններ կարող են դիտարկվել՝ հաշվի առնելով անհատական հանգամանքները և յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները:Մայրության արձակուրդի կարգավորումը տարածվում է նաև Գործող ուսուցիչների վրա:

## Ընդհանուր բնույթի տարկետում

Չնայած իրենց հազվադեպությանը՝ տարկետումները տրվում են այն ընդունված դիմորդներին, որոնք հայտնվել են արտակարգ իրավիճակներում[28] կամ որոնց ընձեռվել է այնպիսի եզակի հնարավորություն[29], որը կարող է զգալիորեն նպաստել դասարանում իրենց ներդրումին կամ կրթական հնարավորությունների անհավասարությանը հաղթահարելուն կամ եթե տեղաբաշխման գործընթացին խանգարել է որևէ բան, որը կապված չէ որպես ուսուցիչ իր կատարողականի հետ, և արդյունքում անհնար է դարձել համայնքի կողմից լրիվ աշխատաժամանակով ուսուցչի աշխատատեղի ապահովումը ուսումնական տարվա մնացած հատվածի ընթացքում:

[28] Օրինակ՝լուրջ հիվանդությունը, Ընտանեկան հանգամանքներ
[29] Հետբուհական կրթություն, կրթական ոլորտում կարևոր ձեռքբերումներ,

Ընդունված դիմորդները կարող են լրացնել **մեկամյա տարկետման** հայտ: Հիմնադրամը չի կարող տրամադրել բազմամյա տարկետում՝ բացի զինվորական ծառայության դեպքից: Յուրաքանչյուր տարկետման հայտ Ընտրության բաժնի ղեկավարի կողմից կդիտարկվի և կքննվի որպես առանձին դեպք:

Տարկետում ստացած թեկնածուների համար երաշխավորված է նրանց տեղը Ծրագրում հաջորդ ուսումնական տարվա ընթացքում:

Դա նշանակում է, որ հաջորդ հուլիսին թեկնածուն կրկին կմասնակցի ՈՒԱԱ-ին և այն բարեհաջող ավարտելու դեպքում որպես Ուսուցիչ-առաջնորդ կտեղակայվի համայնքում:
Տարկետմանը վերաբերող բոլոր որոշումները, որոնք կայացվում են «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից, վերջնական են և ենթակա չեն վիճարկման:

## Տարկետում զինվորական ծառայության նպատակով

Եթե Ուսուցիչ-առաջնորդին զորակոչում են զինվորական ծառայության, երբ նա արդեն տեղակայված է և իրականացնում է իր երկամյա հանձնառությունը, Ուսուցիչ-առաջնորդը կարող է ստանալ տարկետում Ծրագրից՝ մինչև զինվորական ծառայության ավարտը: Նման դեպքերում տարկետման ավարտից հետո կարող է պահանջվել ևս մեկ անգամ հանձնել առարկայական քննությունը և մասնակցել պարզեցված հարցազրույցի: Բոլոր տեսակի ֆինանսական աջակցությունները կկասեցվեն մինչև զինվորական ծառայությունից Ուսուցիչ-առաջնորդի վերադարձը և վերականգնումը տեղակայման դպրոցում[30]: Քանի որ Ուսուցիչների առաջնորդության ծրագրին մասնակցությունը 22 ամիս է, Ծրագրի քառորդ մասը բաց թողնելը ողջունելի չէ: Մենք գտնում ենք, որ երկու տարուց քիչ ժամանակամիջոցը բավարար չէ ներազդեցություն ապահովելու համար: Այն անհատները, որոնք Ուսուցիչների առաջնորդության երկամյա ծրագրի ընթացքում օգտվում են տարկետումից եւ կորցնում են մասնակցության քառորդ մասը, Ծրագիր վերադառնալուց հետո ստիպված կլինեն մեկ հավելյալ տարի ևս դասավանդել Հիմնադրամի կողմից տեղակայված համայնքային դպրոցում՝ ակնկալելով ստանալ Ծրագրի բարեհաջող ավարտման հավաստագիր: Ծրագրում վերականգնվելու պահից Ուսուցիչ-առաջնորդի քսաներկու ամիսների համար նախատեսված ամբողջական գումարի մնացորդը բաշխվում է կրկին միանալուց հետո Ծրագրի մասնակցության ամիսների վրա:

Զինվորական ծառայություն անցնելուց առաջ ծրագրին դիմել ցանկացող թեկնածուներին «Դասավանդի՛ր, Հայաստանը» տարկետում չի տրամադրում: Այդ թեկնածուները պետք է սպասեն մինչև իրենց զինվորական ծառայության ավարտը, հետո միայն ներգրավվեն «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Ծրագրում:

[30]Ընդ որում՝ Կողմերը սույնով հավաստում են, որ Հիմնադրամը իրենից անկախ պատճառներով կարող է հնարավորություն չունենալ Մասնակցին տեղակայելու միևնույն դպրոցում կամ համայնքում:

# V. Հանձնառությունների բնույթը և դրանց չկատարման հետևանքները

Կարող են լինել դեպքեր, երբ Ուսուցիչ-առաջնորդը կամ «Դասավանդի՛ր, Հայաստանը» գտնեն, որ սույն ձեռնարկում կամ կանոնակարգում ներկայացված որևէ ակնկալիք չի արդարացվել: Այս բաժնում պարզաբանված են նման խնդիրների լուծման գործընթացները:

## Ուսուցիչ-առաջնորդների կատարելագործման պլան (ՈՒԿ պլան)

Հիմնադրամը շատ լուրջ է վերաբերվում Ուսուցիչ-առաջնորդներին որպես դասարանային և համայնքային առաջնորդներ ձևավորելու իր պատասխանատվությանը: Տարիների ընթացքում Հիմնադրամի համար պարզ է դարձել, որ Ուսուցիչ-առաջնորդներին իրենց կատարողականության մասին (Հիմնադրամի ակնկալիքների հետ համեմատության մեջ) հստակ, միանշանակ պատկերացումներ տալը առաջնային անհրաժեշտության քայլն է՝ շոշափելի առաջընթացի ապահովման համար: Յուրաքանչյուր Ուսուցիչ-առաջնորդի հաջող գործունեությունն ապահովելու համար Հիմնադրամը երբեմն կարող է գործի դնել համակարգված աջակցության պլան, որը կոչվում է Ուսուցիչ-առաջնորդների կատարելագործման պլան (ՈՒԿ պլան): Այն կարող է կիրառվել ՈՒԱԱ-ի ընթացքում կամ Ծրագրի ցանկացած հատվածում:

ՈՒԿ պլանի նպատակը Ուսուցիչ-առաջնորդին հստակ պատկերացում տալն է այն մասին, թե տվյալ պահին որ ուղղություններով նա չի ապահովում Հիմնադրամի ակնկալած արդյունքները, ինչ բարելավումներ են ակնկալվում իրենից իր գործունեության մեջ և թե ինչ ժամանակամիջոցում և ինչպես են նկատելի դառնալու այդ բարելավումները, ինչպես նաև՝ ինչ ռեսուրսներ են հասանելի ակնկալվող առաջընթացին հասնելու համար:

Ուսուցիչ-առաջնորդն անցնում է ՈՒԿ պլանը հետևյալ պատճառներից որևէ մեկի առկայության դեպքում.

- Չի համապատասխանում արդյունավետ դասավանդման չափանիշերին,

- Չի համապատասխանում «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Ծրագրի որևէ պահանջի կամ խախտում է դրանք,
- Չեն արդարացվել արտադասարանային միջացառումների մասով կամ համայնքային նորարարական նախագծով սահմանված ակնկալիքները,
- Խախտվել են սույն ձեռնարկի մեկ կամ ավելի դրույթներ,
- Տեղի է ունեցել «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի «Քոչարիի» սկզբունքների խախտում, հատկապես, կապված հիմնարար արժեքների և մշակույթի ձևավորման հանձնառության հետ:

Այն Ուսուցիչ-առաջնորդը, որը հայտնվել է ՈՒԿ պլանում և քայլեր չի ձեռնարկում համապատասխանելու ՈՒԿ պլանում ներկայացված պահանջներին, կարող է ներկայացվել դրամական աջակցության կասեցման կամ հեռացվել Ծրագրից: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ն իրավասություն ունի որոշելու, թե արդյոք Ուսուցիչ-առաջնորդը համապատասխանել է Հիմնադրամի ակնկալիքներին, թե՝ ոչ: ՈՒԿ պլանի ընթացքում «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կհավաքագրի տվյալներ և ապացույցներ, որոնք ներառում են, բայց չեն սահմանափակվում. հետևյալով.

- Բանավոր կամ գրավոր հայտարարություններ դպրոցի տնօրենի, այլ վարչական ղեկավարների, ծնողների, աշակերտների և համայնքնի անդամների կողմից,
- Դպրոցի կամ կրթական գերատեսչությունից տրվող պաշտոնական փաստաթղթեր, ինչպիսին է, օրինակ, հաճախման պատմությունը,
- Տվյալ Ուսուցիչ-առաջնորդի կողմից սոցիալական մեդիայում կատարված առցանց գրառումներ,
- Հանձնարարություն կամ աշխատանք, որը չի հանձնվել կրեդիտների, ստուգարքների և քննությունների ապահովման նպատակով,
- Անձնակազմի անդամների և Ուսուցիչ-առաջնորդի միջև արձանագրված կամ օրինական հիմունքներով ձայնագրված զրույցներ (օրինակ՝ հանդիպումների ժամանակ):

Չնայած այն բանին, որ ՈՒԿ պլանի ներգրավման հանգամանքները կարող են տարբեր լինել, որոնք պայմանավորված են Ուսուցիչ-առաջնորդների, աշակերտների ու դպրոցների յուրօրինակությամբ, Հիմնադրամը ՈՒԿ պլանները կիրառության մեջ է դնում հետևյալ դեպքերում.

## Դասարանային ցածր առաջադիմություն

Որպես աշակերտակենտրոն և համայնքակենտրոն կազմակերպություն՝ Հիմնադրամը գտնում է, որ նվիրված ուսուցիչների տեղակայումը գործընկեր դպրոցներում Հիմնադրամի պարտականությունն է: Ուսուցիչ-առաջնորդն իր հերթին պետք է դրական փոփոխություններ բերի աշակերտների ուսումնական առաջադիմության մեջ, նույնիսկ եթե Ուսուցիչ-առաջնորդներն իրենք են շարունակում սովորել և աճել որպես արհեստավարժ մասնագետներ: Դրական

փոփոխությունների համար առնվազն անհրաժեշտ է, որ աշակերտներն ունենան ֆիզիկական և հուզական անվտանգություն իրենց դասարաններում: Եթե Հիմնադրամը ունի որևէ պատճառ կարծելու, որ աշակերտների համար չի ստեղծվում անվտանգ ֆիզիկական կամ հուզական միջավայր, կամ եթե Ուսուցիչ-առաջնորդները, որպես դասավանդող, կարող են ձեռնարկել իրավիճակը շտկող կամ զգալիորեն բարելավող քայլեր, բայց այդպես չեն վարվում, ապա Հիմնադրամը իրավասու է Ուսուցիչ-առաջնորդի նկատմամբ ձեռնարկել կարգապահական միջոցներ: Բացի այդ, կան դասավանդման արդյունավետությունն ապահովող որոշ առանցքային տարրեր, որոնք պետք է տիրապետեն բոլոր Ուսուցիչ-առաջնորդները՝ որպես արհեստավարժ մասնագետներ: Այդ առանցքային տարրերից են օրական, շաբաթական, ամսական թեմատիկ պլանների կազմումը, գնահատման եղանակների մշակումը, աշակերտների արդյունքների գրանցումը, թիմի ձևավորման միջոցառումները և այլն: Առանց այս հիմնարար տարրերի՝ Ուսուցիչ-առաջնորդը պարզապես չի կարող լինել այն ուսուցիչը, որին ուզում է տեսնել Հիմնադրամը և որի կարիքն ունեն ու որին արժանի են աշակերտները:

Հիմնադրամը քաջ գիտակցում է, որ Ուսուցիչ-առաջնորդների հմտությունները վերը նշվածների իրականացման համար տարբեր կլինեն միմյանցից և կզարգանան ժամանակի ընթացքում: Այդուհանդերձ, Հիմնադրամը նաև գտնում է, որ կան նվազագույն չափանիշներ յուրաքանչյուր գործողության համար, որոնք պարզապես անհրաժեշտ է ապահովել, եթե Հիմնադրամը ձգտում է կատարել իր պարտականությունները աշակերտների և համայնքների նկատմամբ: Թեև Հիմնադրամը հաշվի է առնում դպրոցի ղեկավարության տեսակետը, այդուհանդերձ, Հիմնադրամն է որոշում, թե արդյոք Ուսուցիչ-առաջնորդը բավարարում է Հիմնադրամի հիմնական ակնկալիքները՝ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի ակտիվ Ուսուցիչ-առաջնորդ լինելու չափանիշներին համապատասխանելու առումով, թե՝ ոչ: Քանի որ Հիմնադրամի կողմից կիրառվող ստանդարտները կարող են տարբերվել դպրոցում գործող ստանդարտներից, հնարավոր է, որ Ուսուցիչ-առաջնորդի կատարողականի վերաբերյալ Հիմնադրամի եզրակացությունը տարբերվի դպրոցի ունեցած ընկալումից: Ուսուցիչ-առաջնորդի դասավանդման մակարդակը պետք է համապատասխանի «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի չափանիշներին: Այնուհանդերձ, եթե Ուսուցիչ-առաջնորդի դասավանդման մասին Հիմնադրամի եզրակացությունը համահունչ լինի դպրոցի կազմած եզրակացությանը, Հիմնադրամը կարող է համագործակցել դպրոցի հետ՝ միասին մշակելու կատարելագործման պլան և (կամ) մշակելու ռազմավարություն՝ օգնելով Ուսուցիչ-առաջնորդին բավարարել ՈւԿ պլանում արտացոլված ակնկալիքները, քանի որ մենք բոլորս ենք շահագրգռված Ուսուցիչ-առաջնորդի հաջողություններով:

## Պրոֆեսիոնալիզմի բացակայություն

Ուսուցիչ-առաջնորդի, և առհասարակ, ուսուցչի հաջողակ լինելը սկսվում է որոշակի հիմնարար տարրերից՝ որպիսինն է պրոֆեսիոնալիզմի դրսևորումը: Եթե Հիմնադրամը գտնում, որ Ուսուցիչ-առաջնորդի գործողություններում շարունակաբար բացակայում է պրոֆեսիոնալիզմը, ապա կարող է ձեռնարկել որոշակի քայլեր, (որոնցում կարող են ներգրավվել նաև տարբեր շահագրգիր կողմեր):
Յուրաքանչյուր իրավիճակի համար փաստերն ու հանգամանքները կարող են տարբերվել: Այնուհանդերձ, ոչ պրոֆեսիոնալ գործելաոճի օրինակներ կարող են դիտարկվել հետևյալ, սակայն նշյալներով չսահմանափակվող, վարքագծի/ային դրսևումները.

- բարեվարքության կանոններին հակառակ գործելը (ստախոսություն, ճշմարտության կոծկում, աշակերտներին կամ ուսուցիչներին վերաբերող տվյալների նենգափոխում),
- անհարգալից կերպով խոսելը, գրելը կամ այլ վարքագիծ դրսևորվելը աշակերտների, աշխատանքային գործընկերների, համայնքային գործընկերների, շահագրգիռ կողմերի, այլ Ուսուցիչ-առաջնորդների, «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի անձնակազմի, այցելուների և այլոց նկատմամբ,
- դպրոց չներկայնալը և դասերից բացակայելը,
- ուսուցիչ-առաջնորդի պարտականությունները չկատարելը (նյութերը ժամանակին չհանձնելը, առանց բացատրություններ ներկայացնելու դասերից բացակայելը և այլն),
- ուսուցիչ-առաջնորդի հետ կապ հաստատելու կամ այլ կերպ հաղորդակցվելու փորձերն անարձագանք թողնելը,
- Ուսուցիչ-առաջնորդների կատարելագործման պլանում սահմանված նպատակները չբավարարելը,
- «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի «Քոչարիի» և (կամ) սույն ձեռնարկում մատնանշված սկզբունքներին անհամապատասխան վարքագիծ դրսևորելը:

Հիմնադրամը կարող է Ուսուցիչ-առաջնորդին ներգրավել ՈւԿ պլանում, իսկ դպրոցը կարող է իրականացնել ուսուցչի գնահատման և կատարելագործման սեփական ընթացակարգը: Ուսուցիչ-առաջնորդի դասավանդման մասին Հիմնադրամի և դպրոցի կազմած եզրակացությունների անհամապատասխանության դեպքում Հիմնադրամը կներկայացնի իր եզրակացությունը և կառաջնորդվի իր եզրակացությամբ՝ աշխատելով Ուսուցիչ-առաջնորդի և դպրոցի հետ հաջորդ քայլերի մշակման ուղղությամբ:

## Ո՞ր դեպքերում ՈւԿՊ-ները կիրառելի չեն

Նախևառաջ, դրանք այնպիսի իրադրություններն են, որոնցում առկա է քրեածին վարք կամ Հիմնադրամի հիմնարար արժեքների կամ վարքի ակնկալիքների թեկուզ և մեկ ոչ հարիր խախտում, <u>Հիմնադրամը չի կրում որևէ պարտավորություն՝ Ուսուցիչ-առաջնորդի նկատմամբ կիրառելու ՈւԿ պլան և կարող է կայացնել</u>

<u>որոշում՝ միանգամից անցնելու կարգապահական այլ միջոցի, ինչպիսին Ծրագրին Ուսուցիչ-առաջնորդի մասնակցության կասեցումն է կամ հեռացումը:</u>

Բացի այդ, Հիմնադրամի հավաքական փորձը ցույց է տվել, որ ՈւԿ պլաններն ամենաարդյունավետ ձևով գործում են այն դեպքերում, երբ Ուսուցիչ-առաջնորդի կողմից Հիմնադրամի ակնկալիքներում թերանալու հիմքում ընկած է հմտությունների կամ գիտելիքի պակասը: ՈւԿ-ի կիրառությունը դրական փոփոխություններ բերելու հարցում ավելի նվազ հաջողության է հասել այն հանգամանքներում, որոնց խորքային պատճառը հանդիսանում են մտածելակերպը, վերաբերմունքը կամ արժեքները, որոնք ունի Ուսուցիչ-առաջնորդը: Առանձին դեպքերում Հիմնադրամի կողմից ՈւԿՊ-ի կիրառումը չի բացառվում: Սակայն, հիմնականում, երբ առկա փաստերի ամբողջականությունը վկայում է, որ ՈւԿՊ-ն չի գործի արդյունավետորեն՝ հաշվի առնելով Ուսուցիչ-առաջնորդի կողմից Հիմնադրամի կողմից անընդունելի վարքի դրսևորման հիմքում ընկած համոզմունքների փոփոխության նվազ հավանականությունը, կազմակերպությունը կարող է շրջանցել ՈւԿՊ-ի կիրառությունը և ձեռնարկել այլ միջոցներ:

## Ուսուցիչների առաջնորդության ծրագրին մասնակցության կասեցումը

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի և համայնքի անդամ լինելը մեծ պատիվ է յուրաքանչյուր անձի համար: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Հիմնադրամն իրեն վերապահում է իրավունք՝ կասեցնելու Ուսուցիչ-առաջնորդի կարգավիճակը: Կասեցումը կարող է համաչափ արձագանք լինել մի քանի հանգամանքների դեպքում, որոնք ներառում են հետևյալը, սակայն սահմանափակված չեն թվարկվածներով.

- Որպես արձագանք՝ ուղղված Ուսուցիչ-առաջնորդի վարքի վերաբերյալ լուրջ մտահոգությանը: Մասնավորապես՝ այն դեպքերում, երբ մտահոգությունը առաջացել է Հիմնադրամի կամ դպրոցի գործընկերների, մասնագիտական որակավորում տվող հաստատության կամ համայնքի անդամների մոտ, և Հիմնադրամից պահանջվում է ժամանակ՝ դիտարկելու բոլոր հանգամանքները: Այնուամենայնիվ, մտահոգության բնույթն այնքան լուրջ է, որ Հիմնադրամը չի կարող թողնել ամեն ինչ այնպես, ինչպես կա՝ մինչև իրադրության հարթվելը,[31] և մասնակցությունը կկասեցվի:
- Հիմնադրամի ակնկալիքներին չհամապատասխանելու համար սահմանված պատժամիջոց (դիցուք տեղի է ունեցել Հիմնադրամի վարքագծի կանոնների խախտում մի քանի Ուսուցիչ-առաջնորդների կողմից, և դուք եղել եք նրանց թվում): Քննության և միջադեպի վերաբերյալ տվյալ Ուսուցիչ-առաջնորդի դերի պարզաբանումից հետո Տարածաշրջանային ղեկավարը կամ Ծրագրի

[31] Դիցուք՝ դպրոցի կողմից հնչել են Ուսուցիչ-առաջնորդի վարքի խախտման լուրջ մեղադրանքներ, և ձեռնարկվել են պաշտոնական քննություն և/կամ կարգապահական ընթացակարգեր: Հիմնադրամը կարող է որոշում կայացնել կասեցնել Ուսուցիչ-առաջնորդի կարգավիճակը՝ մինչ քննությունը և/կամ կարգապահական ընթացակարգերի ավարտը և վերջնական եզրակացությունը:

տնօրենը կարող են որոշել, որ Ուսուցիչ-առաջնորդի գործողությունները արժանի են կարգապահական տույժի կիրառման, սակայն ՈՒԿ պլանի կիրառման կամ առավել շոշափելի արձագանքի (ինչպես օրինակ ծրագրից հեռացման) համար հիմքեր չկան:

Գործունեության կասեցում նշանակում է, որ Ուսուցիչ-առաջնորդը չի հանդիսանում Ծրագրի լիիրավ մասնակից, և, հետևաբար, իրավասու չէ մասնակցելու Ծրագրին նույն կերպ, ինչպես լիիրավ առաջնորդները: Այս կասեցման ժամանակամիջոցում կկասեցվի նաև «Դասավանդի՛ր, Հայաստան»-ից ստացվող դրամական աջակցությունը: Բացի այդ, կասեցման ժամանակամիջոցում Ուսուցիչ-առաջնորդին թույլատրված չի լինի մասնակցել Ուսուցիչ-առաջնորդներին առնչվող միջոցառումներին կամ օգտվել այն հնարավորություններից, որոնք հասանելի են այլ Ուսուցիչ-առաջնորդներին: Բացառություններ կարող են արվել առանձին դեպքերում, մասնավորապես, եթե դրանք կարող են բացասաբար անդրադառնալ աշակերտների վրա (օրինակ՝ դասարանային ռեսուրսների անհասանելիությունը): Կասեցումը սահմանվում է որոշակի ժամանակահատվածով:

Ուսուցիչ-առաջնորդը պաշտոնապես կտեղեկացվի ինչպես կասեցման, այնպես էլ այն մասին, թե երբ կավարտվի կասեցումը: Հիմնադրամն իրեն վերապահում է իրավունք՝ ընդունելու կասեցման վաղաժամ դադարեցման կամ դրա երկարաձգման վերաբերյալ որոշում (նախապես այդ մասին տեղեկացնելով), եթե հանգամանքները թույլ են տալիս այդպես վարվել: Սակավաթիվ դեպքերում հնարավոր է, որ Ուսուցիչ-առաջնորդի կասեցված վիճակը ազդեցություն ունենա դպրոցի աշխատանքի վրա՝ կախված դպրոցի աշխատանքային և կադրային քաղաքականությունից: Եթե Հիմնադրամի կողմից որոշում կայացվի չեղարկելու կասեցման որոշումը, ապա ֆինանսական աջակցության տրամադրումը ևս կվերսկսվի, սակայն չի փոխհատուցվի կասեցման ժամանակահատվածի ֆինանսական աջակցությունը: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը չի կրում պատասխանատվություն ֆինանսական դժվարությունների վերաբերյալ, որոնք Ուսուցիչ-առաջնորդը կարող է ունենալ կասեցման ժամանակաշրջանում:

## Ուսուցիչների առաջնորդության ծրագրից հեռացումը

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի համայնքի անդամ լինելը պետք է ընկալվի որպես մեծ առավելություն: Որոշ դեպքերում Հիմնադրամը հարկադրված է լինում եզրակացնել, որ Ուսուցիչ-առաջնորդի կողմից կարող է դրսևորվել այնպիսի վարք, որի արդյունքում Հիմնադրամը կարող է որոշել, որ տվյալ անձը չի պատկանում իր համայնքին կամ չի կարող ճշմարիտ ձևով Հիմնադրամը ներկայացնել այլ համայնքներում: Հետևաբար, Հիմնադրամը ունի բացառիկ իրավասություն՝ որոշելու ցանկացած պահի հեռացնել Ուսուցիչ-առաջնորդին երկամյա հանձնառության ընթացքում, եթե նրա վարքագիծը կասկած է ներշնչում՝ երեխաների, համայնքի կամ հենց «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի համայնքի վրա դրական ազդեցություն

<u>ունենալու մասով:</u> Սա կարող է ներառել հետևյալ հանգամանքները, սակայն չսահմանափակվել դրանցով:
Ուսուցիչ-առաջնորդը՝

- հիմնադրամի հիմնարար արժեքների լուրջ ոտնահարում է կամ ակնհայտ անվայելուչ վարք է դրսևորում,
- չի բավարարում սահմանված ակնկալիքները ՈՒԱԱ-ի ընթացքում,
- չի բավարարում սույն ձեռնարկում ներկայացված վարքային ակնկալիքները,
- չի հասնում ՈՒԿ պլանով սահմանված նպատակներին,
- ուսուցչի պաշտոնից հեռացվել է տեղակայման դպրոցի տնօրենի որոշմամբ
- չի դրսևորում գիտելիքների բավարար մակարդակ մագիստրոսական ծրագրում,
- ցուցաբերում է քրեածին վարք,
- դրսևորում է վարքագծային տարրեր, որոնք կարող են ուղղակի վտանգ ներկայացնել երեխայի համար և (կամ) խախտել երեխայի պաշտպանությանն առնչվող քաղաքականությունը,
- օգտագործում է թմրամիջոցներ կամ չարաշահում է ալկոհոլի օգտագործումը,
- չի հետևում Ուսուցիչ-առաջնորդների համար Հիմնադրամի կողմից սահմանված քաղաքականությանը, ընթացակարգերին կամ պահանջներին:

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ն իրեն իրավունք է վերապահում այս որոշումները կայացնել սեփական հայեցողությամբ:
Առաջնորդության զարգացման ծրագրից հեռացման համար գործում է հետևյալ ընթացակարգը.

- Էլեկտրոնային նամակով Ուսուցիչ-առաջնորդը ծանուցվում է ծրագրում իր փոխված կարգավիճակի մասին:
- Հրաժեշտի դեմ առ դեմ հարցազրույց է կազմակերպվում համապատասխան Տարածաշրջանային ղեկավարի կամ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի անձնակազմի անդամների հետ:
- Դպրոցը և տնօրենը տեղեկացվում են «Դասավանդի՛ր, Հայաստան»-ում Ուսուցիչ-առաջնորդի փոխված կարգավիճակի մասին:
- Ուսուցիչ-առաջնորդին առաջարկվում է ներկայացնել համառոտ բացատրագիր, որը կցվում է Առաջնորդության զարգացման ծրագրից նրա հեռանալու մասին ծանուցող նամակին: Հիմնադրամը չի հայտնում որևէ տեղեկություն, որը Ուսուցիչ-առաջնորդը չի ցանկանա բացահայտել:
- Ուսուցիչ-առաջնորդից պահանջվում է կապվել համալսարանի հետ և հայտնել, որ դուրս է գալիս մագիստրոսական ծրագրից:
- Ծրագիրը լքելու, ինչպես նաև տեղեկությունների չբացահայտման վերաբերյալ փաստաթղթերը ստորագրվում են Ուսուցիչ-առաջնորդի և Հիմնադրամի թիմից որևէ անդամի կողմից:

Կան մի քանի կարևոր կետեր, թե ինչ է ենթադրում և ինչ չի ենթադրում «Դասավանդի՛ր, Հայաստան»-ից հեռացվելը.

- Ուսուցիչների առաջնորդության ծրագրից հեռացումը ոչ մի առնչություն չունի դպրոցում Ուսուցիչ-առաջնորդի աշխատանքային կարգավիճակի հետ: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ից հեռացվելը նշանակում է այլևս չմասնակցել Հիմնադրամի կողմից մշակված ծրագրերին: Հիմնադրամը տեղեկացնում է դպրոցին Ուսուցիչ-առաջնորդի նոր կարգավիճակի մասին, սակայն աշխատանքի շարունակականությունը կմնա բացառապես դպրոցի հայեցողությանը:
- Եթե Ուսուցիչ-առաջնորդը ներգրավված է համալսարանական որակավորման ծրագրում, «Դասավանդի՛ր, Հայաստան»-ից հեռացվելը կարող է նշանակել հեռացում այդ դիպլոմավորման ծրագրից, սակայն նման որոշումը բացառապես գտնվում է որակավորման ծրագրի հայեցողության տակ:
- Եթե Ուսուցիչ-առաջնորդը ներգրավված է համալսարանական որակավորման ծրագրում, «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կդադարեցնի բոլոր վճարումները մագիստրոսական ծրագրի համար, և Ուսուցիչ-առաջնորդը անձամբ պատասխանատու կլինի բոլոր տեսակի ուսման վարձերի և վճարների համար, եթե ցանկանում է ավարտել այդ ծրագիրը:
- Հեռացվելու դեպքում Ուսուցիչ-առաջնորդը ինքնըստինքյան զրկվում է «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից տրվող ֆինանսական աջակցության իրավունքից, քանի որ այլևս չի համարվում Ուսուցիչ-առաջնորդ՝ սկսած Ուսուցիչների առաջնորդության ծրագրից հեռացման մասին Ուսուցիչ-առաջնորդին տեղեկացվելու օրվանից:
- Հեռացվելու դեպքում Ուսուցիչ-առաջնորդը չի կարող ակնկալել որևէ ֆինանսական աջակություն՝ կապված Ուսուցիչների առաջնորդության ծրագրից դուրս գալու հետ, կամ որևէ փոխհատուցում՝ կապված Ուսուցիչների առաջնորդության ծրագրից ընթացքում կամ դրա շարունակականության ակնկալիքով իր կատարած ծախսերի հետ,
- Հեռացվելու դեպքում Ուսուցիչ-առաջնորդը ինքնըստինքյան զրկվում է Ծրագրին միանալու համար կրկին դիմելու իրավունքից:
- Հեռացվելու դեպքում Ուսուցիչ-առաջնորդը մեխանիկորեն այլևս չի համարվում Ծրագրից շրջանավարտ, և նրա համար հասանելիին չեն Ուսուցիչների առաջնորդության ծրագիրն ավարտող Ուսուցիչ-առաջնորդների համար նախատեսված ռեսուրսներն ու այլ արտոնությունները:
- Պետք է նկատի ունենալ, որ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ն իրեն իրավունք է վերապահում համարելու, որ Ուսուցիչ-առաջնորդը խուսափում է իր պարտականությունների կատարումից և (կամ) դրսևորվում Հիմնադրամի կողմից վարվող քաղաքականությանը հակասող կերպով և կարող է կայացնել նրան ծրագրից հեռացնելու որոշում: Նման դեպքերում «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը Ուսուցիչ-առաջնորդից պահանջում է վճարել տուգանք՝ ըստ սույն Ձեռնարկում նշված կարգի:

## Ի՞նչ է տեղի ունենում, երբ Ուսուցիչ-առաջնորդը գտնում է, որ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը չի բավարարել սույն ձեռնարկով սահմանված ակնկալիքները

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ն Ուսուցիչ-առաջնորդների ու անձնակազմի անդամների, գործընկերների համայնք է, որն ունի հանձնառություն՝ փոխհարաբերվելու Հիմնադրամի հիմնարար արժեքներին համահունչ պրոֆեսիոնալիզմի և բարեվարքության սկզբունքներով: Հիմնադրամն ակնկալում է, որ համայնքի բոլոր անդամները պահպանեն այս արժեքները և դրսևորեն հարգանք միմյանց և այն համայնքների նկատմամբ, որտեղ գործում են: Հիմնադրամը գիտակցում է, որ կարող են լինել դեպքեր, երբ Ուսուցիչ-առաջնորդները տարաձայնություններ ունենան տարբեր որոշումների վերաբերյալ, այդ պատճառով մշակել է նման խնդիրների լուծման հետևյալ ընթացակարգերը.

### Ոչ պաշտոնական կարգավորում

- Վեճեր՝ կապված ՈՒԱԱ-ի հետ[32]. Եթե Ուսուցիչ-առաջնորդին անհանգստացնում է որևէ հարց, որը վերաբերում է իր մասնակցությանը ՈՒԱԱ-ին, ապա այն պետք է քննարկել Ծրագրի տնօրենի հետ:
- Վեճեր Հիմնադրամի որևէ անդամի հետ Ուսուցիչների առաջնորդության ծրագրի ընթացքում. Եթե Ուսուցիչ-առաջնորդն ունի որևէ բողոք կամ անհամաձայնություն, Հիմնադրամը խորհուրդ է տալիս այն քննարկել Առաջնորդության զարգացման ղեկավարի հետ: Եթե վեճը վերջինիս հետ է, Ուսուցիչ-առաջնորդը կարող է դիմել Տարածաշրջանային ղեկավարին կամ Ծրագրի տնօրենին: Հաշվի առնելով, որ ժամանակի ընթացքը հաճախ ազդեցություն է ունենում խնդրի լուծման հնարավորության վրա, անհրաժեշտ է խնդիրները բարձրացնել Ուսուցիչ-առաջնորդի մոտ տարաձայնություն հարուցող որոշման կայացումից կամ միջադեպերի տեղի ունենալուց հետո 30 օրվա ընթացքում: Որպես կանոն՝ Հիմնադրամը ձգտում է լուծել Ուսուցիչ-առաջնորդներին հուզող հարցերը՝ դրանց բարձրացվելուց հետո 30 օրվա ընթացքում:

### Պաշտոնական կարգավորում/բողոքարկման գործընթաց

- ՈՒԱԱ-ին վերաբերող բողոքներ. Եթե Ուսուցիչ-առաջնորդը հեռացվել է Ծրագրից ՈՒԱԱ-ի ընթացքում, նա կարող է ներկայացնել բողոք Ծրագրի տնօրենին իր հեռացումից հետո 24 ժամվա ընթացքում: Բողոքը պետք է հստակորեն պարզաբանի հեռացման որոշման հետ անհամաձայնությունը և

[32] Խնդրում ենք ծանոթանալ ՈՒԱԱ-ի քաղաքականության հետ (ՈՒԱԱ-ի ձեռնարկ) հավելյալ տեղեկատվության համար: Խնդրում ենք նաև հաշվի առնել, որ, ելնելով ամառային վերապատրաստման դասընթացների սեղմ ժամկետներից, խնդիրները պետք է բարձրացվեն և դրանց արձագանքները ստացվեն արագացված կարգով:

պետք է պարունակի հեռացմանը վերաբերող ցանկացած պաշտոնական գրավոր փաստաթուղթ կամ հարակից նյութ: Գրավոր բողոքը ստանալուց հետո Ծրագրի տնօրենը կամ նրա կողմից նշանակված անձը կհաստատի բողոքի ստացումը և կկապվի Ուսուցիչ-առաջնորդի հետ՝ քննարկելու հետագա քայլերը, որոնք կարող են ներառել անձնական հարցազրույց կամ այլ հնարավորություններ, և որոնք Ծրագրի տնօրենին կօգնեն Գրավոր բողոքը ստանալուց հետո հասկանալ ստեղծված իրավիճակը և գնահատել բողոքին ուղեկցող փաստերը: Գրավոր բողոքը ստանալուց հետո Ծրագրի տնօրենը կամ նրա կողմից նշանակված անձը կկայացնի որոշում և կտեղեկացնի Ուսուցիչ-առաջնորդին բողոքի ստացումից հետո 3 օրվա ընթացքում: Բողոքարկման հիման վրա «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից կայացված բոլոր որոշումները վերջնական են և ենթակա չեն հետագա վիճարկման:

- <u>Ուսուցիչների առաջնորդության ծրագրին վերաբերող բողոքներ</u>. Եթե Ուսուցիչ-առաջնորդը հեռացվել է Ծրագրից դրա երկամյա ժամկետի որևէ պահին, նա կարող է Ծրագրի տնօրենին ներկայացնել բողոք՝ Գրավոր ծանուցումը ստանալուց հետո 48 ժամվա ընթացքում: Բողոքը պետք է հստակորեն պարզաբանի հեռացման որոշման հետ անհամաձայնությունը և պետք է պարունակի հեռացմանը վերաբերող ցանկացած պաշտոնական գրավոր փաստաթուղթ կամ հարակից նյութ: Գրավոր բողոքը ստանալուց հետո Ծրագրի տնօրենը կամ նրա կողմից նշանակված անձը կհաստատի բողոքի ստացումը և կկապվի Ուսուցիչ-առաջնորդի հետ՝ քննարկելու հետագա քայլերը, որոնք կարող են ներառել անձնական հարցազրույց կամ այլ հնարավորություններ, և որոնք կօգնեն Ծրագրի տնօրենին հասկանալ բողոքին ուղեկցող փաստերը: Ծրագրի տնօրենը կամ նրա կողմից նշանակված անձը կկայացնի որոշում և կտեղեկացնի Ուսուցիչ-առաջնորդին բողոքի ստացումից հետո ոչ շուտ քան 10 օրվա ընթացքում:
- Ծրագրից հրաժարման և դրանից բխող հետևանքների, տուգանքի կիրառման հետ կապված բողոքարկումները նույնպես պետք է ներկայացվեն Ծրագրի տնօրենին կամ նրա կողմից նշանակված անձին:Անհամաձայնությունը կամ բողոքարկումը պետք է հստակորեն պարզաբանի պատճառները և պետք է պարունակի դրանք փաստող ցանկացած պաշտոնական գրավոր փաստաթուղթ կամ հարակից նյութ: Գրավոր բողոքարկումը ստանալուց հետո Ծրագրի տնօրենը կամ նրա կողմից նշանակված անձը կհաստատի բողոքի ստացումը և կկապվի Ուսուցիչ-առաջնորդի հետ՝ քննարկելու հետագա քայլերը, որոնք կարող են ներառել անձնական հարցազրույց կամ այլ հնարավորություններ: Որոշումը կայացնելու համար Ծրագրի տնօրենը և «Դասավանդի՛ր, Հայաստանի» ղեկավար թիմը կարող է կարիք ունենալ այլ խորհրդատվության, ինչը ենթադրում է ավելի երկար ժամանակ: Որոշման մասին բողոքարկող կողմը կծանուցվի գրավոր կերպով՝ Ծրագրի տնօրենի կողմից:

Բոլոր բողոքարկումների ընթացքում Ուսուցիչ-առաջնորդի կարգավիճակը կասեցվում է: Բողոքարկման հիման վրա «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից կայացված բոլոր որոշումները վերջնական են և ենթակա չեն հետագա վիճարկման:

**Ձեռնարկը և դրա անբաժանելի մասը կազմող այլ փաստաթղթերը մշակվում և հաստատվում են հայերենով: Ձեռնարկը և դրա անբաժանելի մասը կազմող այլ փաստաթղթեր կարող են կազմվել նաև օտար լեզվով: Տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին:**

## Հավելված Ա

Բազմազանության վերաբերյալ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի դիրքորոշումը

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը ձգտում է ներգրավել մեր երկրի ամենախոստումնալից ապագա առաջնորդներին մի շարժման մեջ, որի նպատակը կրթական հնարավորությունների անհամաչափության վերացումն է: Մենք գիտակցում ենք, որ այդ առաջնորդները տարբեր կլինեն իրենց էթնիկական, ռասայական և տնտեսական կարգավիճակով: Նմանապես տարբեր կլինեն նաև նրանց քաղաքական և կրոնական համոզմունքները, և մենք ջանում ենք ներգրավել բոլոր սեռերի, սեռական կողմնորոշումների և ֆիզիկական կարողությունների տեր անհատներին: Մեր կազմակերպությունում բազմազանությունը առավելագույնի հասցնելը կարևոր է, որպեսզի մենք կարողանանք վերհանել բոլոր նրանց ունակություններն ու ներուժը, ովքեր կարող են նպաստել մեր ջանքերին, ինչպես նաև կարողանանք մեծացնել ազդեցության շրջանակների ընդլայնման հնարավորությունները մեր հասարակությունում: Ավելին, մենք փորձում ենք լինել բազմազան, որովհետև ձգտում ենք դառնալ արդարության և հնարավորությունների հավասարության այն մոդելը, որը փափագում ենք մեր ժողովրդի համար:

Մենք կարևորում ենք ռասայական, էթնիկական, կրոնական և տնտեսական բազմազանությունը, որպեսզի հզորացնենք մեր ներազդեցությունը:

### Մեր ազդեցությունը աշակերտների շրջանում

Մենք նկատել ենք, որ մեր ամենաարդյունավետ Ուսուցիչ-առաջնորդները, նրանք, որ ամենաշատն են խթանել կրթական առաջընթացը, ներկայացնում են տարբեր ռասաներ, էթնիկական խմբեր և տնտեսական կարգավիճակներ: Երբ այսպիսի ուսուցիչներն իրենք են սերում ավանդաբար անտեսված տարածաշրջաններից կամ ցածր եկամուտի տեր ընտանիքներից, միևնույն է, նրանք ունեն ներուժ առավել խոր ու ուժեղ ներազդեցության, որովհետև կրթության մեջ և կյանքում հաջողության հասնելու վերաբերյալ նրանք աշակերտների հետ կարող են լինել առավել համոզիչ:

### Երկարաժակետ ազդեցություն

Ուսուցիչ-առաջնորդները, որոնք ունեն նույն տարածաշրջանային և (կամ) տնտեսական կարգավիճակը, ինչ իրենց աշակերտները, կարող են ունենալ երկարաժամկետ առանձնահատուկ ներազդեցություն հասարակական փոփոխությունների վրա՝իրենց հարուստ աշխարհայացքի ու արժանահավատության շնորհիվ, ինչպես նաև այն պատճառով, որ նրանց առաջնորդությունը հենց այդ փոփոխության արժեքն է:

### Հավաքական ուժը

Չնայած, «Դասավանդի՛ր, Հայաստան»-ում յուրաքանչյուրի պարտականությունն է որոշումների կայացման մեջ, մեր աշակերտների և համայնքների կարիքների ու ցանկությունների նկատմամբ լինել խորատես , այնուամենայնիվ, մենք նկատել ենք, որ այն անհատները, որոնք գալիս են ամենաանտեսված տարածաշրջաններից կամ ցածր եկամուտ ունեցող ընտանիքներից, կարող են  էական հիմքերի վրա դնել քննարկումները կամ խթանել մեր Ուսուցիչ-առաջնորդների, մեր շարժման և Հիմնադրամի գաղափարները:

## Հավելված Բ

**«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի Գործադիր տնօրենի կողմից՝**
2023 թ-ի փետրվարի 27 -ին հաստատված «Ուսուցիչ-առաջնորդի ձեռնարկ 2023»

### «ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ԿԱՐԳ

Սույն կարգի նպատակն է սահմանել «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մասնակից համարվելու կարգը:

***Ծրագրի մասնակից համարվելու չափանիշները.***

Ծրագրի մասնակից կարող են համարվել այն քաղաքացիները, որոնք՝
1.1. դիմել են Հիմնադրամի կողմից հայտարարված Ծրագրին՝ լրացնելով հայտը և ներկայացնելով հայտով պահանջվող փաստաթղթերը,
1.2. մասնակցել են Հիմնադրամի կողմից անցկացվող և մասնակիցների ընտրության գործընթացի բաղկացուցիչ և պարտադիր մասը կազմող ընտրության փուլերին,
1.3. Հաջողությամբ անցել են Հիմնադրամի կողմից անցկացվող ընտրության փուլերը, ստորագրել են համապատասխան պայմանագիր / կամ պահանջվող այլ փաստաթղթեր, ստացել և ընդունել են համագործակցության հրավեր մասնակցելու «Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիա»-ի ինտենսիվ վերապատրաստման և զարգացման նախապատրաստական դասընթացներին:

Սույն կարգի 1.2. կետով նախատեսված ընտրության փուլերը կարող են ներառել հետևյալ ընթացակարգերը՝
ա) անհատական հարցազրույց
բ) ուսուցչի թղթապանակ
գ) խմբային աշխատանք
դ) նախապատրաստական առցանց դասընթաց
ե) առարկայական թեստավորում

Հիմնադրամի կողմից անցկացվող ընտրության փուլերում, բացի վերոնշյալ վերոնշյալ ընթացակարգերի բավարարումից, հաշվի են առնվում նաև մասնակիցների՝

- ակադեմիական, առաջնորդական կամ աշխատանքային ոլորտում հավակնոտ, չափելի արդյունքների, նվաճումների առկայությունը,
- մասնագիտորեն հիմնավորված համառությունը, առաջացող խոչընդոտները հաստատակամ և նպատակաուղղված հաղթահարելու ունակության առկայությունը,
- վերլուծական մտածողության առկայությունը, խնդրի պատճառահետևանքային կապը գիտակցելու ու լուծումներ ներկայացնելու ունակությունը,
- Հիմնադրամի կողմից ընտրված մոտեցումների հետ համաձայնության և դրանք իրագործելու պատրաստակամության առկայությունը,
- կազմակերպվածության, ժամանակի կառավարման գերազանց կարողության առկայությունը, աշխատանքի պահանջների և առաջնահերթությունների տարանջատման ունակությունը,
- հաղորդակցվելու և այլ անձանց շահերը հաշվի առնելու, մոտիվացնելու կարողության առկայությունը,
- այլ անձանց նկատմամբ հարգալից և հանդուրժողական վերաբերմունքի առկայությունն ու հասարակական տարբեր դիրք ունեցող անձանց հետ աշխատելու ունակությունը:

Հավելված Գ

**«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի Գործադիր տնօրենի կողմից՝**
2023 թ-ի փետրվարի 27 -ին հաստատված «Ուսուցիչ-առաջնորդի ձեռնարկ 2023»

## ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան __ _____,
_____թ.

Ես՝ _____ _____ (անձնագիր՝ _____ , տրված՝ ____-ի կողմից, սոց. քարտ՝ _____ ) հավաստում եմ, որ բարեհաջող ավարտել եմ «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից իրականացվող Ուսուցիչների առաջնորդության երկամյա ծրագրին (այսուհետ՝ Ծրագիր) մասնակցության համար կազմակերպվող ընտրության փուլերը և ընդունել եմ

հրավեր՝ մասնակցելու Հիմնադրամի կողմից անվճար հիմունքներով կազմակերպվող «Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիա» (այսուհետ՝ Ակադեմիա) ինտենսիվ վերապատրաստման և զարգացման նախապատրաստական դասընթացներին (այսուհետ՝ Դասընթացներ)՝ որպես ուսուցիչ ՀՀ եւ ԱՀ դպրոցներից որևէ մեկում դասավանդելու համար:

Տեղեկացված եմ և հավաստում եմ, որ.

1. Հիմնադրամի կողմից իրականացվող Ծրագրի հիմնական փուլերն են՝ ընտրության փուլեր, Ակադեմիայի փուլ, Ծրագրի մասնակցության երկամյա փուլ (այսուհետ՝ Փուլեր):
2. Ակադեմիան /Ակադեմիայի փուլ/բարեհաջող ավարտելու դեպքում պարտավորվում եմ մասնակցել Ծրագրին ընտրության փուլերի ավարտին ստորագրած պայմանգրի հիման վրա
3. Հաշվի առնելով Հիմնադրամի կողմից Ծրագրի արդյունավետ կազմակերպման համար յուրաքանչյուր մասնակցի հաշվարկով կատարված ծախսերը՝ սույն պարտավորության ստորագրմամբ փաստում եմ, որ Ակադեմիայի փուլից սկսած իմ կողմից ցանկացած ժամանակ Ծրագրին մասնակցության միակողմանի դադարեցման նախաձեռնության դեպքում, պարտավորվում եմ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամին վճարել տուգանք՝ <<Ուսուցիչ- առաջնորդի>> ձեռնարկով սահմանված կարգով և չափով:
4. Եթե նախքան Ծրագրին միանալը ստացել եմ STEM կրթաթոշակ,ապա Ծրագրով նախատեսված ժամկետից շուտ իմ և Դպրոցի միջև կնքված աշխատանքային հարաբերությունները իմ նախաձեռնությամբ և անհիմն պարզաբանմամբ դադարեցվելու դեպքում, բացի 3-րդ կետով սահմանված տուգանքը,

   պարտավորվում եմ նաև փոխհատուցել Մասնագիտական ուսուցման կազմակերպման մասին պայմանագրով Հիմնադրամի կրած վնասները:

Սույնով հավաստում եմ, որ Հիմնադրամի կողմից ինձ տրամադրվել է ողջամիտ ժամկետ իմ կողմից ստորագրվող ամբողջական փաթեթին ծանոթանալու համար: Հավաստում եմ նաև, որ ծանոթացել եմ փաթեթի մաս կազմող Հիմնադրամի «Ուսուցիչ-առաջնորդի ձեռնարկ 2023» փաստաթղթին, որևէ կետի վերաբերյալ առարկություն չունեմ, առաջարկների և/կամ առարկությունների դեպքում պարտավորվում եմ դրանք շարադրել մինչև փաթեթի ստորագրումը:

Ստորագրությամբ հավաստում եմ, որ բոլոր հարցերին տրվել են պատշաճ պարզաբանումներ, ամբողջությամբ ընդունում և գիտակցում եմ նաև սույն պարտավորության հայտարարության բովանդակությունը և նպատակը:

Սույն հայտարարությունը տրված է իմ կողմից՝ ազատ կամաարտահայտությամբ, որի համար ստորագրում եմ:

_____

/Էջի մնացյալ մասը միտումնավոր բաց է թողնված/

Հավելված Դ

**«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի Գործադիր տնօրենի կողմից՝**
2023 թ-ի փետրվարի 27 -ին հաստատված «Ուսուցիչ-առաջնորդի ձեռնարկ 2023»

ԿԱՐԳ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՅՆ ՍՏԱՆԱԼՈՒ
ԴԻՄՈՒՄԻ ՕԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն Կարգի նպատակն է սահմանել «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») երկամյա ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շահառուներին (այսուհետ՝ «Շահառու») դրամական օգնություն հատկացնելու կարգը ստորև շարադրված պայմաններին բավարարելու հիմքով՝

1. Հիմնադրամի կանոնադրությամբ համարվում են շահառուներ և ընդգրկված են շահառուների ցանկում:
2. Հաջողությամբ անցել են Հիմնադրամի կողմից կազմակերպված «Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիա»-ի ինտենսիվ վերապատրաստման և զարգացման նախապատրաստական դասընթացները (այսուհետ՝ Ակադեմիա):
3. Ընդգրկված են Ծրագրի այն մասնակիցների ցանկում, որոնք ուղարկվել են ՀՀ կրթության և գիտության նախարարություն տեղակայում կատարելու նպատակով:
4. Առկա է իրենց մասով ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան գործուղման հրաման՝ ՀՀ մարզերի/համայնքների հանրակրթական դպրոցներում (այսուհետ՝ Դպրոց)[33] ուսուցչի թափուր հաստիքները լրացնելու նպատակով:
5. Առկա է Մասնակցի դիմում[34] Հիմնադրամին երկամյա առաքելությունն իրականացնելու ընթացքում դրամական օգնություն ստանալու համար:
6. Դիմումի հիման վրա առկա է Կողմերի միջև կնքված դրամական աջակցություն տրամադրելու մասին պայմանագիր (տե՛ս Հավելված Ե):
7. Դրամական օգնության տրամադրման վերաբերյալ պայմանագրով սահմանված գումարի չափը և ժամկետները համարվում են ծառայողական գաղտնիք և ենթակա չեն հրապարակման երրորդ անձանց:

**Ընդ որում այս պայմաններին բավարարող մասնակիցները դիմումը ստորագրելիս ընդունում եվ գիտակցում են, որ եթե Ծրագրով նախատեսված ժամկետից շուտ իրենց եվ Դպրոցի միջև կնքված աշխատանքային հարաբերությունները դադարեցվում են մասնակցի նախաձեռնությամբ՝ առանց հիմնավոր պատճառների, ապա իրենք դադարում են համարվել Ծրագրի մասնակից, որը ենթադրում է նաեվ դրամական օգնության տրամադրման դադարեցում և որի արդյունքում նաև Շահառուն պարտավոր կլինի Հիմնադրամին վճարել տուգանք՝ Ձեռնարկում սահմանված չափով եվ կարգով՝ հաշվի առնելով Ծրագրի շրջանակներում Հիմնադրամի կողմից իր համար կատարված փաստացի ծախսը:**

Օրինակելի ձև

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական
հիմնադրամի հիմնադիր և գործադիր տնօրեն
Լարիսա Վիրջինիա Հովաննիսյանին

[33] Հիմնադրամի կողմից իրականացվող Ծրագրում ներառված ՀՀ և ԱՀ մարզերի հանրակրթական դպրոցների ցանկը կցված է սույն կարգին և համարվում է նրա անբաժանելի մասը
[34] Օրինակելի ձևը ստորև

(անուն, հայրանուն, ազգանուն)-ից

**Դիմում**

Ես՝ _____(անձնագիր՝ )
հավաստում եմ, որ հաջողությամբ անցել եմ «Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիա» -ի ինտենսիվ վերապատրաստման և զարգացման նախապատրաստական դասընթացին:
Խնդրում եմ ինձ ներառել «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի Ծրագրի շահառուների ցանկում՝ որպես _____ ուսուցիչ: Պատրաստ եմ երկու տարի աշխատել Ծրագրում ներառված ՀՀ մարզերի հանրակրթական դպրոցներում որպես _____ ուսուցիչ:
Սույնով հաստատում եմ, որ ծանոթացել եմ և համաձայն եմ «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի «Ուսուցիչ-առաջնորդի ձեռնարկ 2023» փաստաթղթին:

Անուն, Ազգանուն

Ստորագրություն Ամսաթիվ՝

## Հավելված Ե

**«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի Գործադիր տնօրենի կողմից՝**
2023 թ-ի փետրվարի 27 -ին հաստատված «Ուսուցիչ-առաջնորդի ձեռնարկ 2023»

Նմուշօրինակ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

դրամական օգնություն տրամադրելու մասին

ք. Երևան «__» _____, 2023թ.

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամը (այսուհետ՝ Տրամադրող), ի դեմս գործադիր տնօրեն Լարիսա Վիրջինիա Հովաննիսյանի, ով գործում է Տրամադրողի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____ *(անձնագիր թիվ՝ _____, տրված՝ _____, ___-ի կողմից, հաշվառված՝ _____)* (այսուհետ՝ Ստացող), մյուս կողմից, կնքեցին դրամական օգնություն տրամադրելու մասին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրում Տրամադրողը և Ստացողն անհատապես անվանվում են նաև Կողմ, իսկ միասին՝ Կողմեր:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով Տրամադրողը, համաձայն իր կանոնադրության գործունեության նպատակների 3.2.5. կետի, այն է՝ աջակցել Հիմնադրամի շահառուներին՝ Հիմնադրամի նպատակներին ուղղված գործունեության իրականացմանը, Հիմնադրամի կանոնադրության 3.4. կետում նշված շահառուների խմբին՝ մասնավորապես՝ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող ուսուցիչներին (Ստացող) ՝ ըստ Տրամադրողի կողմից հաստատված դրամական օգնություն հատկացնելու մասին կարգի, որը կցվում է Պայմանագրին և համարվում է նրա անբաժանելի մասը, պարտավորվում է յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը, որպես դրամական օգնություն, և որպես սեփականություն հանձնել _____ (_____) ՀՀ դրամ՝ Պայմանագրի 2.4.1. կետով նախատեսված նշանակությամբ օգտագործելու պայմանով:

1.2. Դրամական օգնությունը Ստացողին տրամադրվում է բանկային փոխանցման միջոցով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Տրամադրողն իրավունք ունի՝**

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Ստացողի կողմից իրականացվող ծրագրի ընթացքը և գումարների ծախսման նպատակայնությունը:

2.1.2. Ցանկացած պահի հրաժարվել Ստացողին դրամական օգնություն տրամադրելուց և լուծել Պայմանագիրը՝ համաձայն Պայմանագրի 3.2. կետի:

2.2. **Տրամադրողը պարտավոր է՝**

2.2.1. Ստացողի սեփականությանը հանձնել դրամական օգնությունը, եթե Ստացողը և Ստացողի կողմից արվող ծախսերը բավարարում են Պայմանագրի 1.1. և 2.4.1. կետերով սահմանված պայմաններին:

2.3. **Ստացողն իրավունք ունի՝**

2.3.1. Հրաժարվել դրամական օգնությունն ընդունելուց:

2.3.2. Միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ պահպանելով Տրամադրողի կողմից հաստատված դրամական օգնություն հատկացնելու մասին կարգի 2-րդ կետի պահանջները:

2.4. **Ստացողը պարտավոր է՝**

2.4.1 Դրամական օգնությունն օգտագործել բացառապես ծրագրով կամ սույն պայմանագրով սահմանված նպատակների իրականացմանն ուղղված նպատակներով՝

ա) Նոր համայնք տեղափոխվելու հետ կապված ծախսերի և ընթացիկ ճանապարհածախսի կատարում,

բ) Կացարանի վարձակալության և դրա հետ կապված այլ վճարների կատարում.

գ) Առօրյա ծախսերի կատարում և այլն:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև 30 հունիսի, 2025թ.:

3.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ՝ ցանկացած պահի, միակողմանիորեն լուծվել Տրամադրողի կողմից՝ այդ մասին Ստացողին 5 (հինգ) աշխատանքային օր առաջ Ստացողի _____ էլեկտրոնային հասցեին ծանուցում ուղարկելու միջոցով:

3.3. Տրամադրողի կողմից հաստատված դրամական օգնություն հատկացնելու մասին կարգը կցվում է սույն պայմանագրին և համարվում է նրա անբաժանելի մասը:

3.4. Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

3.5. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

3.6. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| **ՏՐԱՄԱԴՐՈՂ** | **ՍՏԱՑՈՂ** |
|---|---|
| **«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամ** | **Անուն, Ազգանուն** |
| **Անուն՝** Լարիսա Վիրջինիա Հովաննիսյան | **Անձնագիր՝** _____ |
| **Պաշտոն՝** գործադիր տնօրեն | **Սոց քարտ՝** |
| **Հասցե՝** ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան 18/3, բն. 12 | **Հասցե՝** _____ |
| **ՀՎՀՀ՝** 02645043 | **Հեռ.՝** _____ |
| **Բանկ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ** | **Բանկ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ** |
| **Հ/Հ՝** 1570023320370100 | **Հ/Հ՝** 15700_____ |
| **Ստորագրություն՝** | **Ստորագրություն՝** |
| _____ | _____ |
| **Կ.Տ.** | |

/Էջի մնացյալ մասը միտումնավոր բաց է թողնված/

# Հավելված 2

**«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի Գործադիր տնօրենի կողմից՝**
2023 թ-ի փետրվարի 27 -ին հաստատված «Ուսուցիչ-առաջնորդի ձեռնարկ 2023»

նմուշօրինակ

## ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

| **ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ —--** | |
|---|---|
| ք. Երևան | —----, 2023 |
| «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամը (այսուհետ՝ Տրամադրող), ի դեմս գործադիր տնօրեն Լարիսա Վիրջինիա Հովաննիսյանի, ով գործում է Տրամադրողի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և —--------- (անձնագիր՝------, տրվել է —----թ., —----ի կողմից, հաշվառված՝ —---------- հասցեում) (այսուհետ՝ Ստացող), մյուս կողմից, կնքեցին վերաբնակեցման համար գումարի տրամադրման մասին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրում Տրամադրողը և Ստացողն անհատապես անվանվում են նաև Կողմ, իսկ միասին՝ Կողմեր: | |
| **1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ** | |
| 1.1. Պայմանագրով Տրամադրողը, համաձայն իր կանոնադրության գործունեության նպատակների 3.2.5. կետի, այն է՝ աջակցել Տրամադրողի շահառուների՝ Տրամադրողի նպատակներին ուղղված գործունեության իրականացմանը, Տրամադրողի կանոնադրության 3.4. կետում նշված շահառուների խմբին՝ մասնավորապես՝ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող ուսուցիչներին պարտավորվում է միանվագ կարգով տրամադրել ֆինանսական աջակցություն 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով (այսուհետ՝ Դրամական աջակցություն) մինչև հոկտեմբերի 31-ը՝ համաձայն Տրամադրողի կողմից հաստատված միանվագ դրամական օգնություն տրամադրելու վերաբերյալ կարգի, որը պետք է օգտագործվի վերաբնակեցման հետ կապված ծախսերը վճարելու համար: | |
| 1.2. Դրամական աջակցությունը Ստացողին տրամադրվում է բանկային փոխանցման միջոցով: | |
| **2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** | |
| **2.1. Տրամադրողն իրավունք ունի՝** | |
| 2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Ստացողի կողմից Դրամական աջակցության ծախսման նպատակի համապատասխանությունը: | |
| 2.1.2. Ցանկացած պահի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը և հետ պահանջել Դրամական օգնությունը, եթե Ստացողի և Տրամադրողի միջև կնքված դրամական օգնություն տրամադրելու մասին պայմանագիրը լուծվել է՝ համաձայն Տրամադրողի ներքին կարգավորումների և ընթացակարգերի: | |
| 2.1.3. Հետ պահանջել Դրամական աջակցությունը, եթե Ստացողը չի տեղափոխվել տեղակայման վայր՝ անկախ չտեղափոխման պատճառից: | |
| **2.2. Տրամադրողը պարտավոր է՝** | |

| |
|---|
| 2.2.1. Տրամադրել Դրամական աջակցությունը Ստացողին: |
| **2.3. Ստացողն իրավունք ունի՝** |
| 2.3.1. Հրաժարվել Դրամական օգնությունն ընդունելուց: |
| 2.3.2. Միակողմանիորեն լուծել Պայմանագիրը պահպանելով Տրամադրողի կողմից հաստատված պահանջները: |
| **2.4. Ստացողը պարտավոր է՝** |
| 2.4.1. Դրամական աջակցությունն օգտագործել բացառապես վերաբնակեցվելու, ճանապարհածախսի և տեղափոխման հետ կապված այլ ծախսերի համար: |
| 2.4.2. Հաշվառել բոլոր ծախսերը և Տրամադրողի պահանջով նրան տրամադրել ծախսերի մասին ֆինանսական հաշվետվություններ: |
| 2.4.3. Սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված Դրամական աջակցությունը վերադարձնել ամբողջությամբ, եթե Ստացողը իր նախաձեռնությամբ դադարեցրել է մասնակցությունը մինչև 2023թ. հունվար ամիսը ներառյալ: |
| **3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ** |
| 3.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից Պայմանագրով սահմանված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը: |
| 3.2 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ՝ ցանկացած պահի, միակողմանիորեն լուծվել Տրամադրողի կողմից՝ այդ մասին Ստացողին 5 (հինգ) աշխատանքային օր առաջ Ստացողի -—-------- էլեկտրոնային հասցեին ծանուցում ուղարկելու միջոցով: |
| 3.3 Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով: |
| 3.4 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: |
| 3.5 Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն նույն իրավաբանական ուժը: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին: |
| **4. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ** |
| **ՏՐԱՄԱԴՐՈՂ** |
| **Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամ** |
| **Հասցե՝** ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան 18/3, բն. 12 |
| **ՀՎՀՀ՝** 02645043 |
| **Բանկ՝** «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ |
| **Հ/Հ՝ 1**570023320370100 |
| **Գործադիր տնօրեն՝** Լարիսա Վիրջինիա Հովաննիսյան |
| |

| |
|---|
| _____<br>Ստորագրություն<br>Կ.Տ. |
| **ՍՏԱՑՈՂ** |
| |
| **Անձնագիր՝** |
| **ՀԾՀ՝** |
| **Հասցե՝** |
| **Հեռ.՝** |
| **Բանկ՝** «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ |
| **Հ/Հ՝** |
| _____<br>Ստորագրություն |

/Էջի մնացյալ մասը միտումնավոր բաց է թողնված/